

ԴՐՈՇԱԿ

ISSN 2579-2954



Հայ Յեղափոխական Դաշնակցության պաշտոնաթերթ

(77-րդ տարի) Թիվ-11 (1681) ————— Նոյեմբեր 2023

Բովանդակություն



«Դրոշակ» ամսաթերթ
Հայ Յեղափոխական Դաշնակցության
պաշտոնաթերթ
Հիմնադիր՝ «ՀՅԴ պատմության թանգարան
հիմնադրամ»
Երևան, Միեր Սկրոպյան փ. 12/1
Հեռ. (+374) 10-52-18-90
Էլ. հասցե՝ droshak@arf.am
Կայք՝ <https://www.droshak.am>
Գլխավոր խմբագիր՝ Արտաշես Շահբազյան
Խմբագրական խորհուրդ



1- Նախաբան

Սփիւռքի զարգացումը (Էջ 1)

2- Առաջնորդող

Միասնություն՝ հանուն միասնական շահի և
հեռանկարի (Էջ 2-3)

3- Սփիւռք

Իշխան Զիֆթճեան

Չարմիկ Պողիկեան

Վերակազմակերպուել եւ զարգացնել Սփիւռքը
(Էջ 4-12)

Հերմինե Ավագյան

Փրկե՛նք մեր ներսի մեղավորին կամ
ուշացողները չեն վերածնվում (Էջ 13-15)

Վարդան Յակոբեան

Սփյուռքի գոյատևման երկու հարց (Էջ 16-17)

Յարուկ Սասունեան

Սփյուռքահայ խորհրդարանի գործարկումը (Էջ
18)

Վազրիկ Բազիլ

Քաջութիւնը ունենանք համարձակելու (Էջ 19-20)

Գառնիկ Ա. Բ. Գոյունեան

«Կլոր սեղան»-ին անաթոռ մէկ տեղէն
(Սփիւռքէ մը անդրադարձներ) (Էջ 21-25)

Սիւզան Խարտալեան

Հայկական պետութիւնը եւ Հայկական Սփիւռքը
հակասական խօսույթներու հանգոյցին մէջ: Նոր
պատումի հրամայականը (Էջ 26-32)

Վիգէն Աբրահամեան

Կազմակերպութեան առաջնահերթութիւնը
(Էջ 33-37)

Վազրիկ Բազիլ

Անդրադարձումներ (Էջ 38)

Վրէժ-Արմէն

Ամփոփելու համար (Էջ 39-40)

Մփիտքի զարգացումը

Վերջին ողբերգական իրադարձություններէն ամիսներ առաջ խմբագրութիւնս դիմեց խումբ մը մտաւորականներու՝ միասնաբար քննարկելու համար Մփիտքի զարգացման խնդիրները, որոնք միայն Մփիտքի խնդիրները չեն անկասկած, այլեւ համայն հայութեան: Պատասխանները ստացուած էին այդ իրադարձություններէն իսկ առաջ, թէեւ չէր անտեսուած անոնց հաւանականութիւնը:



- Այս փուլին մեր գրուցակիցները հանդիսացան՝
- Վիգէն Աբրահամեան (Մոնթրէալ)
- Հերմինէ Աւագեան (Ստեփանակերտ)
- Վազրիկ Բազիլ (Ամսթըրն)
- Տէր Գառնիկ աւ. քահ. Գոյունեան (Մոնթրէալ)
- Սուգան Խարտալեան (Սթոքհոլմ)
- Վարդան Յակոբեան (Երեւան)
- Իշխան Չիֆթճեան (Համպուրկ)
- Զարմիկ Պօղիկեան (Հալէպ)
- Յարութ Սասունեան (Լոս Անճելըս)

Ուղարկուեցան հետեւեալ հարցումները.

- 1- Ինչպէ՞ս զարգացնել Մփիտքը
- 2- Ինչպէ՞ս համախմբել Մփիտքի ներուժը՝ այդ զարգացման համար
- 3- Ինչպէ՞ս կանխարգիլել Հայրենիքի հետ խզումը՝
- 4- Ինչպէ՞ս կրնայ ընթանալ Մփիտքի վերակազմակերպումը
- 5- Որո՞նք կրնան հանդիսանալ գլխաւոր դերակատարները
- 6- Ի՞նչ դեր կրնան խաղալ Մփիտքի ամրապնդման մէջ ազգային ռազմավարութիւն ունեցող հայրենի պետականութիւնը, հասարակական կազմակերպութիւններն ու ստեղծագործական, կրթական ու գիտական հաստատութիւնները:

Այդ հարցումները, բացի վերջինէն, ունին նաեւ իրենց ենթաբաժանումները, զորս պիտի տեսնէք ստորեւ՝ ստացուած գրութիւններէն իսկ առաջ:

Մեր գրուցակիցներէն երկուքը՝ Զարմիկ Պօղիկեան եւ Իշխան Չիֆթճեան պատասխանեցին մեր հարցումներուն՝ նշուած թուային կարգով: Ուրեմն կը սկսինք անոնց գրութիւններով՝ յաջորդաբար տալով իւրաքանչիւր հարցումի պատասխանը: Յետոյ՝ միւսները, առանց յատուկ դասաւորման: Պահած ենք գրութիւնները ստացուած ուղղագրութեամբ՝ դասական կամ արեւելեանական:

Աւելցնենք, որ բոլոր գրուցակիցներուն պատասխանները ուղարկուեցան բոլորին, ակնկալելով արձագանգներ: Այդ արձագանգները եկան Իշխան Չիֆթճեանէն եւ Վազրիկ Բազիլէն: Առաջինին անդրադարձները զետեղուեցան իրենց համապատասխան պարբերութեանց ու հատուածներուն ներքեւ, շրջանակուած՝ զանազանուելու համար, իսկ երկրորդինները, իրենց ընդհանրական բնոյթին պատճառաւ՝ միասնաբար, յօդուածներու վերջաւորութեան:

Յաջորդ փուլին Կլոր սեղանի ներկայ հրապարակումը պիտի դրկուի մամուլին ու այլ մտաւորականներու, եւ անոնց, ինչպէս նաեւ մեր ընթերցողներու հակազդեցութիւնները ի մի պիտի բերուին «Դրօշակ»-ի հետագայ թիւի մը կամ թիւերու մէջ:

Այս բոլորը, սակայն, պէտք է յանձնուին պատասխանատու անձանց, մարմիններու եւ հաստատութիւններու ուշադրութեան՝ որպէսզի այստեղ արտայայտուած նկատողութիւններն ու թելադրութիւնները չմնան լոկ «ձայն բարբառոյ յանապատի» եւ մեր այս ճիգն ալ չդառնայ պարզապէս «պարապ վախտի խաղալիք»...

Խմբագրութիւն

Միասնություն՝ հանուն միասնական շահի և հեռանկարի

Սփյուռքի զարգացման հնարավորություններն ու հեռանկարները քննության առարկա դարձնելուց առաջ հարկ է արձանագրել, որ բազմաթիվ իրողություններ ազդել են և մշտապես ազդում են Սփյուռքի վրա: Սփյուռքը հարավփոփոխ երևույթ է՝ ենթակա հայկական համայնքների ներկայացրած երկրների ներքին գործընթացների քաղաքական, սոցիալ-տնտեսական, գաղափարական և այլ ազդեցություններին: Մտովի կարելի է անդրադառնալ, թե աշխարհագրական-ժողովրդագրական ինչպիսի պատկեր է ներկայացրել հայկական արտերկիրը 50 տարի առաջ, մեկ դար առաջ, մինչցեղասպանական շրջանում և ավելի վաղ ժամանակներում: Արցախի ազատագրության ու Հայաստանի վերանկախացման իրողությունները, ինչպես և դրանց հետևած գործընթացներն արմատական ազդեցություն ունեցան Սփյուռքի ընդհանուր մթնոլորտի վրա, ինչը ընթացք է առել և շարունակվում է իր զարգացման չորրորդ տասնամյակում: Համարձակվում ենք ասել, որ երևի իր համար էլ աննկատելի սփյուռքահայի գիտակցության մեջ ապրող հոգևոր-վերացական «Արևմտահայաստան-հայրենիքի» կողքին սկսեցին միս ու արյուն ստանալ և առաջինին «նեղել» միանգամայն շոշափելի ու նյութական, նորանկախ Հայաստանն ու Արցախը: Սփյուռքահայն այսօր իր մեջ կերպավորել է կենդանի հայրենիքները և «ապրում է» այդ հայրենիքներում՝ շարունակելով ապրել մեծ աշխարհի մեծ թոռուրի մեջ, որտեղ իր իրական կյանքն է: Մեր արտերկրի լրատվամիջոցների հերթական համարների առաջին էջերում տեղ են գրավում հայրենիքից հասած լուրերը և այս երևույթը, բնական լինելով, այնքան հախտուն է, որ այդ մամուլը հայաստանյան իր գործա-

կիցներից ընդօրինակում է անգամ այն սխալ արտահայտությունները, որոնք ռուսերենի ուղղակի կրկնօրինակումն են (խոսքը գնում է այն մասին, բանը նրանում է, բանը կայանում է նրանում, Երևանը դա այն քաղաքն է և այլն): Ոչ առանց մտահոգության արևմտահայերենի համար, պետք է արձանագրել արևելահայերեն լուրջ ազդեցությունն արևմտահայերենի վրա՝ թե՛ բանավոր և թե՛ գրավոր խոսքում: Մյուս կողմից պետք է արձանագրել, որ հայրենիքի հետ թեկուզ հոգեպես ավելի ու ավելի շաղկապվելը ուղիղ համեմատությամբ լրջագույն հայապահպանական գործոն է Սփյուռքում: Այս ասելով՝ ցանկանում ենք նաև ընդգծել այն մեծ վտանգը, որ ներկայացնում են վերջին շրջանում Սփյուռքում հնչող «սփյուռքակենտրոնության» վերադառնալու կոչերը: Սփյուռքը չի կարող իր օրակարգերը վերանայելով 40 տարի ետ վերադառնալ, իսկ ինքնամեկուսացումը ամենամեծ սպառնալիքը կդառնա ինքնանպատակության ճգնաժամի մեջ հայտնվելու համար: Հայաստանի ու Արցախի հետ տեղի ունեցող ողբերգական իրողությունների համար չենք կարող թշնամիներից նեղանալ կամ խոռովել, իսկ հայրենի ապագային իշխանություններին, ինչպես և նրանց նախորդներին մեղադրելու իրավունքը պատճառ չէ հայրենիքից, հայրենի պետականությունից և հայրենաբնակ ժողովրդից հեռանալու և սեփական պատյանի մեջ պարփակվելու համար: Հայրենիքը մայր է կոչվում նրա համար, որ այն բոլորինն է, իսկ նա, ով կփորձի թեկուզ հավաքականորեն սեփականել այդ հայրենիքը, նա կան տգետ է, կան դավաճան, կան, ավելի շուտ, երկուսը միասին:

Ի դեմս հաջորդական իշխանությունների՝ հայրենի պետականության հիմնական խնդիրներից մեկը



պետք է լինի զբաղվելը Սփյուռքի բազում հոգսերով՝ նպատակ որդեգրելով մի կողմից՝ Սփյուռքի հայապահպանությունն ու առաջընթացը և մյուս կողմից՝ հայրենիք-Սփյուռք միասնականության և միասնական օրակարգերի գոյացումը: Հակառակը դավաճանություն է ազգի ներկայի ու ապագայի հանդեպ: Սփյուռքի ինքնության պահպանումը, զարգացումը ինքն իր մեջ և հայրենիքի հետ համախմբումը, Սփյուռքի, ինչպես և հայրենիք-Սփյուռք հարաբերությունների զարգացման և ազգային-պետական խնդիրների հետապնդման ռազմավարության որդեգրումը և բազում այլ խնդիրներ՝ իրենց բաղադրիչներով, հանրային տարբեր շերտերի թիրախավորմամբ հանդերձ, հայրենի պետականության հիմնական ռազմավարական խնդիրների շարքում պետք է լինեն:

Ցավոք, երկաթյա վարագույրների խորտակումից հետո և հայության երկու հատվածների մերձեցման պահին երկու կողմերն էլ ոչ միայն անպատրաստ էին, այլև վատ էին ճանաչում միմյանց ներուժն ու ներքին պատկերը և այդ թերի պատկերացումներով էլ հարաբերություններ կառուցեցին միմյանց հետ: Պետք է արձանագրել, որ Հայաստանի առաջին և չորրորդ ապագային ու հակասփյուռք իշխանությունների փոխարեն երկրորդ և երրորդ ղեկավարությունները, չնայած ունեցած նախապաշարումներին, հակված էին հայրենիքի ու Սփյուռքի կապերի ամրապնդմանը, սակայն աղոտ պատկերացում ունենալով թե՛ Սփյուռքի և թե՛ հայրենիք-Սփյուռք հարաբերությունների և նպատակների ռազմավարական հեռանկարի վերաբերյալ՝ չկարողացան համապատասխան հանգրվանային ու հեռագնա ծրագրեր կազմել, ինչի պատճառով էլ նրանց ձեռնարկած բազմաթիվ միջոցառումները, ընդհանուր ռազմավարական նպատակների միտված չլինելով, հաճախ թողնում էին շոուների տպավորություն:

Ելնելով առկա խնդիրներից և նպատակներից՝ Հա-

յաստանի Հանրապետության համար Սփյուռքի նախարարության գոյությունը կարևորագույն անհրաժեշտություն է հենց ռազմավարական հեռանկարի առումով, որն ինքնին հիմնական կենդանի կամրջի դեր պետք է խաղա հայության երկու հատվածների միջև: Պետության դերի գրեթե բացարձակեցման այս մոտեցումը չի նշանակում և չի նսեմացնում այն համապատասխան դերակատարումները, որոնք պետք է ունենան եկեղեցին, կուսակցությունները, գիտական, մշակութային, բիզնես շրջանակները և հասարակական, ազգային կառույցները: Միայն թե, որպեսզի անհրաժեշտ գործը Սոդոմ-Գոմորի պատմության չվերածվի, իհարկե, նախևառաջ անհրաժեշտ է հստակեցնել միասնական ռազմավարական նպատակներն ու մարտավարական անելիքների հարցը: Մյուս կողմից էթե գործակցության, ընդհանուր ճանապարհի ուղենշման նպատակի ներքո Հայաստանը փորձի ուղղորդել և թելադրել Սփյուռքին ավելի մեծ վնաս կհասցնի քան էթե առհասարակ ոչինչ չանի: Այդպիսի փորձերի վկան եղել ենք, բարեբախտաբար դրանք ձախողվել են ճամփի կեսից:

Ազգային ոչ պետական-պաշտոնական հաստատությունների դերակատարությունը առանձնահատուկ կերպով կարևորվում է ներկայում, երբ օրվա իշխանությունները շատ հեռու են, էթե չասենք, թշնամի են համագգային մտածողությանն ու համագգային տեսլականներին: Բնչ պետք է անել՝ նկատի ունենալով առաջնայինն ու երկրորդականը, կարևորելով թվացյալ ոչ գլխավորը, որով պայմանավորված և որին շողկապված է Սփյուռքի կյանքի լայն համայնապատկերը: Ձեռնարկելով այս քննարկմանը՝ մենք ցանկացել ենք լսել կարծիքներ ու առաջարկներ՝ հուսալով, որ այս կարևոր քննարկումը կունենա շարունակություն և գուցե նվազագույն չափով օգտակար կդառնա առաջադրված խնդիրների վերհանման և լուծման գործում: ■



Վերակազմակերպուել եւ զարգացնել Սփիւռքը

Իշխան Չիֆթճեան

Ձեր հարցումներուն պատասխանելէ առաջ, այստեղ զիս կը հալածէ համոզմանս շուրջ՝ հարցում-պատասխանի այս շարքն ալ, իր հրապարակեալ «աւարտ»էն ետք, պիտի մնայ հայ մամուլի ապարդիւն խաղ կամ լաւագոյն պարագային՝ վկայութիւն սերունդներուն համար: Ձեր հարցումներուն պատասխանելէ առաջ կը սկսիմ անոնց աւարտէն, այսինքն անոնց (հ)ետև(անք)ը առջևս է, որովհետև մամուլը ևս այսօր վերածուած է բացակայող ընթերցողի առարկային: Երբ այստեղ արձանագրուելիք մտածումներուն մտաւոր կամ գործաւոր քայլ չի յաջորդեր, ինչպէս յաճախ կը պատահի, որովհետև մամուլէն ու գիրէն դուրս քայլ առնելը անկարելի դարձուցած ենք մեր իսկ անմտագործութեամբ. թերևս ատելի լաւ է ընդհանրապէս չառնել այդ քայլը, որ օդին մէջ ստացած կը մնայ:

Զարմիկ Պօղիկեան

Սփիւռքի գրեթէ բոլոր շրջանները ազդուեցան ու կազդուին աշխարհաքաղաքական յարափոփոխ զարգացումներէ, պատերազմներէ, համաշխարհայնացման տարբեր հոսանքներէ, տնտեսական տագնապներէ և տեղայնական պայմաններէ:

Այս ազդեցութիւնները չեն միայն, սակայն, որոնք պատճառ կը դառնան Սփիւռքի մաշումին, այլև զարգացման երկարաժամկէտ ծրագիրի մը բացակայութիւնն է, որ տարուէ տարի կը տկարացնէ սփիւռքահայ կեանքի շարք մը ոլորտներ:

1. Ինչպէ՞ս զարգացնել Սփիւռքը

- Իր ինքնութեան պահպանման ի խնդիր
- Հայ դատի հետապնդման ի խնդիր
- Հայրենիքի հզօրացման ի խնդիր

Իշխան Չիֆթճեան

Սփիւռքը «զարգացնել». պատճառական այս բայը անհամեստ կը գտնեմ, որովհետև անոր ետև պէտք է զարգացնող մը ըլլայ, որ իրականութեան մէջ գոյութիւն չունի: Պաշտօնական Սփիւռքը կը բաղկանայ եկեղեցական և աշխարհական կազմակերպութիւններէ, որոնք զարգացման կոչուած են արդէն և կը կատարեն այդ՝ ինչպէս ու ինչքան որ կրնան: Անոնք ինքնակեդրոն կառոյցներ են, որնէ աշխատանք չեն գնահատեր անոր արդիւնքէն, այլ միայն՝ ներքին տրամաբանութենէ մեկնած: Մեզի պէս փոքր ժողովուրդի մը համար շոյալութիւն է թերևս «փակ զարգացման» այս ձևը, ուր «անիմաց» ու «բանիմաց» հոմանիշ են, ոչ թէ հակահիշ: Թացը չորէն գատելու արարքը աշխատանքին արդիւնքը պէտք է որ անպայման յիշեցնէ մեզի, մինչդեռ այս հարցերուն մասին խորհողներս այդ արդիւնքին հանդէպ լռելիութիւն իսկ չենք զարգացուցած տակաւին, ինչպէ՞ս զարգացնենք... Սփիւռքը: Կը տեսնէք, որ կը կենսամ զարգացնելու գործողութեան վրայ, անցնելէ առաջ անոր առարկաներուն:

Զարգացում չեմ համարեր «արդէն գոն» փայլեցնելն ու հրամցնելը կամ, օրինակ, յանուն (լեզուի) զարգացման (անոր) աղաւաղման քաջալերանքը, ինչ որ կը տեսնեմ ներկայիս կիրարկուող. ատելի յստակ՝ մակերեսի «պահպանում» ու «փոխանցում», անմիջուկ՝ լոկ ձևագագացական, անբնորոշելի ինքնութեան մը տարրերու արտայայտութիւններ (գիր, երգ, պար, թատրոն և այլն): Սոյն հաստատումները կը մեկնին անձնական փորձառութենէս, ի միջի այլոց՝ մեր ՀԱՅԵՐԷՆ BLOG



Իշխան Չիֆթճեան
Հայագէտ

(<https://hayerenblog.wordpress.com/>) էջին շուրջ ծաւալող գրաւոր և բանաւոր քննարկումներէն: Կարելի է յստակ օրինակներ տալ՝ հիմնաւորելու համար այս բոլոր երևոյթները մէկ առ մէկ: Կ'առաջարկեմ գրական, պատմական ու մշակութային երկերու (Ե. դարէն սկսեալ մինչև այսօր) *բովանդակութեան, մեկնութեան և փոխանցման վրայ հիմնուած* ինքնութիւն, հայրենիք և դատ: (Հազարամէկ դժբախտութենէ կ'անցնինք ազգովին, առիթ չունինք «նման բաներու» մասին մտածելու: Չունինք, որովհետև ծանօթ չենք, թէ ինչ պայմաններու տակ խենթերը հնարք գտած են. որքան արհամարհուած, հալածուած են այս հարցերուն ձեռք զարնողները): Ինչպէ՞ս: Կրթական ու գիտական յատուկ ցանցերու ստեղծումով: Գիտեմ, որ որնէ լուրջ ծրագրի ներկայացման ու զարգացման հող-միջավայրը անգոյ է, ստոր համար ալ հոս չեմ մանրամասներ: Անոնք, որոնք կը փափաքին մանրամասնութիւններու տեղեկանալ՝ հետաքրքրուած են, կրնան անձամբ դիմել ինձի, հասցէս «Դրօշակ»ի խմբագրութենէն ստանալով: Առաջարկներն ու ծանուցումները անիմաստ կը սեպեմ հոս:

Զարմիկ Պողիկեան

Սփիւռքը անհետացող երևոյթ չի կրնար ըլլալ, ինչպէս որ յաճախ կը յայտնեն շարք մը հրապարակագիրներ՝ լուծումներ առաջարկելու փոխարէն յուսահատութեան ալիք մը բարձրացնելով: Սփիւռքը կրնայ տեղ-տեղ տկարանալ, կրնայ ձևափոխուիլ, սակայն կը գոյատևէ եթէ կառչի ինքնութեան պահպանման հիմնաստիւններուն: Այդ հիմնաստիւններուն ազդեցութիւնը ուժեղացնելն է էականը:

Հայոց Յեղասպանութիւնը մեր ինքնութեան մեծ հարուած մը հասցուց, կորսնցուցինք յատկապէս արևմտահայութեան շարունակականութիւնը, աճը, տնտեսական ուժը ապահովող ազգականներն ու տարտղուեցանք: Սփիւռքի կազմակերպումով մեր ինքնութիւնը կրցանք պահել, իսկ պահանջատիրութեան գաղափարին կառչելով մեր ինքնութեան երաշխիքներուն վերատիրանալու ճիգը համահայկական պայքարի վերածեցինք: Այս պայքարն ալ մասամբ մեզ նոյն նպատակին շուրջ համախումբ պահելու ազդակ դարձաւ:

Այնուհետև տարիներու ընթացքին աշխարհաքաղաքական զարգացումներու, գաղթերու բերումով Սփիւռքի պատկերն ալ փոխուեցաւ:

Անկախ պահանջատիրական մեր երթէն, որպէս ազգ Սփիւռքի մէջ մեր գոյատևման յարացոյցները ամրացնելու մարտահրաւերը կը դիմագրաւենք այսօր:

Սփիւռքահայութեան ինքնութեան պահպանման գլխաւոր յարացոյցները եկեղեցին, լեզուն, մամուլն ու մշակոյթն են, սակայն էականը անոնց ազդեցութիւնն է Սփիւռքահայ զանգուածներու վրայ: Այսօր այդ յարացոյցներուն վրայ կ'ուզեմ աւելցնել նաև տնտեսութիւնը, որովհետև սփիւռքահայ համայնքները այլևս հարկ է, որ ունենան նաև տնտեսական նպատակաւաց քաղաքականութիւն և ուժ՝ դառնալու ոչ միայն պահպանող, այլև՝ արտադրող: Պահ մը մտածենք որքան ազդեցիկ են անոնք, որքան հայ զանգուածներու հոգեմտաւոր տարբեր կարիքներուն ծառայելու ժամանակակից միջոցներով օժտուած են, որքան գրաւիչ են երիտասարդութեան համար: Այս ոլորտները ունին անընդհատ զարգացող մարդկային պաշարներ՝ իրենց ազդեցութիւնը արդիւնաւէտ դարձնելու համար, թէ սիրողական մակարդակի վրայ կը գործեն:



Զարմիկ Պողիկեան
«Գանձասար» շաբաթաթերթի խմբագիր, թարգմանիչ, տնտեսագէտ

Սփիւռքը կազմակերպող մարմինները, մտաւորականները դար մը առաջ Սփիւռքի գոյատևման հիմնաստիւնները ճշդած են, հաստատութեանական հիմքերու վրայ դրած, յառաջացուցած մշակութային, ուսումնակրթական, մարզական, բարեսիրական բոլոր անհրաժեշտ հաստատութիւնները ու յաջողած են պահպանել սերունդներու ինքնութիւնը՝ այդ ալ նուիրական աշխատանքով, տնտեսական ծանր պայմաններու տակ, սակայն ժամանակի զարգացումին հետ այս կառոյցները չեն զարգացած, կ'ընթանան նոյն կառավարման-վարչական ձևերով, նոյն ծրագրերով:

Պարզապէս անհրաժեշտ է մասնագիտական մօտեցում ցուցաբերել շատ մը հարցերու լուծման համար և սիրողական ուժերով չփորձել եղածը պահել:

Ինքնութեան պահպանման համար, անհրաժեշտ է ուրեմն նախ *մասնագէտներով օժտել, զարգացնել ու երիտասարդութեան համար հեղափոխական դարձնել բոլոր այն կառոյցներն ու հաստատութիւնները՝ դպրոց, մշակութային կեդրոն, եկեղեցի, այնպէս մը, որ անոնք կարենան ապահովել ազգի զաւակներուն հոգեմտաւոր կարիքները՝ դուրս գալով դասական ժամանակավրէպ ձևերէ:* Միայն եղածը պահելով գործ մը տեսած չենք ըլլար:

Եթէ, օրինակ, հայկական վարժարանը չապահովէ հայ աշակերտին ուսման լուսագոյն պայմանները, օժտուած չէ որակաւոր ուսուցիչներով, չունի դասաւանդման արդիական ձևեր, դասագիրքեր, բայց մասնաւոր արևմտահայերէնի ուսուցման համար մասնագէտ ուսուցիչներ չի պատրաստեր և այդ ուսուցիչները պահելու համար ասպարէզը գրաւիչ չի դարձներ, պէտք չէ այսպանել այն ծնողները, որոնք կընտրեն ոչ հայկական վարժարաններ:

Մշակոյթն ալ ինքնութեան պահպանման կարեւոր յարացոյց է: Պարախումբերու, երգչախումբերու, թատրոնի, կերպարուեստի ուսումնարաններու շուրջ երիտասարդներ համախմբելը դժուար չէ: *Այս ասպարէզներու մէջ ալ եթէ ներգրաւենք մասնագէտներ և սփիւռքահայ գաղութներու կարիքներուն համար*



երիտասարդներ մասնագիտացման ուղղւել, որպէսզ ամէն փարի խմբավար, պարտուոյց, բեմադրիչ փնտրելու փագնասպին չմարնտիւք ու մեր խումբերու գարգացումը շարունակական դարձնել, ինքնութեան պահպանման որոշ ազդակներ սպահոված կ'ըլլանք:

Սփիւռք-Սփիւռք գործակցութիւնն ալ իր ներդրումը կրնայ ունենալ այս ոլորտին մէջ՝ մարդուծի և փորձառութեան փոխանակման նպաստելով:

Այստեղ կարևոր կը նկատեն նաև հայ մշակոյթը օտարին ներկայացնելու և օտարին հետ շփումներ ստեղծելու կարելիութիւնը: Սփիւռքահայերս կրնանք դուրս գալ մեր ինքնամփոփ, երբեմն ալ փակ միջավայրէն, հաղորդակցիլ ու գործակցիլ իրաքանչիւր շրջանի տեղական մշակոյթին հետ նաև՝ ծանօթանալով ծանօթացնելու փոխադարձ մշակոյթները:

Այս ասպարէզները կառավարողները հարց պիտի տան բնականաբար՝ ինչպէ՛ս ապահովել այս բոլորին նիւթական կարիքները: Բարգաւաճ երկիրներու մէջ յատկապէս ինչպէ՛ս մրցունակ դառնալ:

Նիւթական ապահովելու միջոցներ միշտ ալ ունեցած ենք, *նիւթականը նման ոլորտներ ուղղելու ճիգը կը պակսի մեզի:*

Հայ դատի հետապնդման աշխատանքն ալ մասնագիտացած մարդուծ կը պահանջէ՝ դիւանագիտական, քաղաքական, իրաւաքաղաքական, մարդկային իրաւունքներու, պետութիւններու յարաբերութեանց ոլորտներուն մէջ և այլն: Ինքնութիւնը պահպանող Սփիւռքն է, որ կրնայ նման աշխատանքի ձեռնարկել. հակառակն ալ ճիշդ է՝ Հայ դատի ոլորտին ծառայելով, մեր երիտասարդները ինքնութեան պահպանման գիտակցութեամբ կ'օժտուին, իրազեկ կը դառնան որպէս Սփիւռք և պետութիւն միջազգային հարթակի վրայ ազդեցիկ գործունէութիւն ծաւալելու միջոցներուն: Պարտութիւնները յուսահատութեան առաջնորդելու փոխարէն թող նոր լծակներ որոնելու առաջնորդեն մեր երիտասարդները:

Այստեղ կարևոր է շեշտել նաև, որ Հայաստան և Սփիւռք համախորհուրդ պէտք է գործեն Հայ դատի հետապնդման աշխատանքներուն մէջ, համազգային ռազմավարութիւն մշակեն:



Սփիւռք-հայրենիք առողջ կապը կրնայ նպաստել թէ՛ հայրենիքին, թէ՛ Սփիւռքին: Առողջ կ'ըսեն, որովհետև մէկուն գոյութիւնը միտով պայմանաւորելու արտայայտութիւնները, կամ հայաստանակեդրոն ուղղութիւնը առանձին լուսարձակի տակ բերելը՝ Սփիւռքի ուժեղացման օրակարգը տասներորդական համարելով, մեր հարցերուն տուն տուող պատճառներէն կը համարեն: Տկարացած Սփիւռքը ինչպէ՛ս կրնայ նպաստել հայրենիքի հզօրացման: *Մինչդեռ Սփիւռքի փարբեր շրջաններու մէջ եթէ ունենանք քաղաքական լծակներ, կարելի կը դառնայ ի նպասար Հայաստանին բանաձևեր անցընել, փարբեր խորհրդարաններու կամ ժողովներու մէջ, եթէ Սփիւռքի փնտրական ու մասնագիտական կարելիութիւնները կրնանք ի սպաս դնել Հայաստանին, եթէ Հայաստանի քաղաքական, ռազմական, ուսումնակրթական, առողջապահական, փնտրական և այլ ոլորտներու մէջ ներգրաւտիւն նաև սփիւռքահայ մասնագէտներ և իրենց փորձառութիւնը մոծեն Հայաստան, ժամանակի ընթացքին կրնանք, որպէս ազգ, այնպիսի ցանց մը կազմել, որուն բոլոր փարբերուն ներգործութիւնը Սփիւռքի թէ՛ հայրենիքի գարգացման մէջ, կրնայ մեր շար մը հարցերու լուծման բանապին ըլլալ, նպաստել Հայաստանին, նպաստել Սփիւռքի գօրացման նաև:*

Թոյլ, անկարող Սփիւռքը ո՛չ ինքնիրեն, ոչ ալ Հայաստանին կրնայ նպաստել: Այսօր, Հայաստանի մէջ ալ գլոյխ կը ցցեն լեզուի, մշակոյթի, ազգային արժէքներու պահպանման հարցեր: Հետևաբար ալ, որպէս մէկ ազգ, թէ՛ Սփիւռքի և թէ՛ հայրենիքի մէջ մեր ինքնութիւնը պահելու և անով իսկ գօրանալու կարիքը ունինք:

- 2. Ինչպէ՛ս համախմբել Սփիւռքի ներուժը՝ այդ գարգացման համար
- Մասնագիտական ներուժը
- Երիտասարդական-ուսանողական ներուժը
- Հայաստանէն արտագաղթած ու հայ կեանքէն հեռու մնացած ներուժը

Իշխան Չիֆթճեան

Դարձեալ՝ Սփիւռքը «համախմբել»ու համար համախմբող պէտք է: Ներկայ քաղաքական ու ինքնութեանական համազգային ճգնաժամին մէջ «մեր» բոլոր կազմակերպութիւնները համախմբուելու կարողութիւն չունին, անոնց մէջ չկայ հեղինակաւոր անձնատրութիւն կամ կազմակերպութիւն, որ բոլորը համախմբէ, սկսեալ պետութենէն. դուք ինչպէ՛ս կրնաք ակնկալել, որ մասնագիտական, երիտասարդական-ուսանողական և հայ կեանքէն հեռացածներու համախմբում տեղի ունենայ: Եթէ իրաքանչիւր կառոյց իր սահմաններէն ներս եղած ներուժը յայտնաբերելու ճիգ թափէ՝ կրնանք մսիթարուիլ մասամբ: Իսկ այս կառոյցներու անգործութեան պարագային, կրնան, կրնային, թերևս օր մը կարենան խմբակային այլ համախմբումներ տեղի ունենալ: Կան թերևս հոս ու



հոն փորձեր, որոնք տակաւին շօշափելի արդիւնք չեն տուած: Համազգայինի տարեկան հաւաքը այս տարի ամբողջ աշխարհէն 15 երիտասարդ մասնակից ունէր (7-19 Յուլիս 2023).¹ պետական «Քայլ դէպի Տուն» ծրագիրը՝ 114 երիտասարդ (5 Յունիս - 26 Օգոստոս 2023).² Հայ Եկեղեցու համաշխարհային երիտասարդաց միատրումը՝ շուրջ 150 երիտասարդ (5-10 Յուլիս 2023).³ «Ջաւախք» ճամբարի մասնակիցները՝ 260 հոգի (Յուլիս-Օգոստոս 2023).⁴ Ազգային երիտասարդաց համաժողովը՝ 600 հոգի (Օգոստոս 2023)⁵: Ահաւսիկ օրինակներ երիտասարդաց համախմբումներու: Հայկական այլևայլ կազմակերպութիւններու դիմաւորային ու այլ էջերու հետևորդներուն թուաքանակը հաշուեցէք, և անոնց (ներգործական կամ կրատրական) հետևողի կարգավիճակէն համախմբուողի կարգավիճակին անցման դժուարութեան մասին մտածեցէք: Համախմբում չեմ կրնար համարել հոս ու հոն տեղի ունեցող երիտասարդական-ուսանողական համաժողովները (կրթական, գիտական, կուսակցական կամ հոգևորական կազմակերպութեամբ), որոնց նպատակը լոկ համագումար կազմակերպելն է: Ձեռքերը աղտոտող, երկարաշունչ աշխատանքի մէջ մխրճող, արդիւնքի ձգտող և շարունակական ձեռնարկ ըլլալու է համախմբումը, ուր *գաղափար, օրակարգ, համոզում, փոխանցում, կարողութիւն, հետևողականութիւն* անհրաժեշտութիւններ են: Մենք կան ասոնք չունինք, կան ասոնք մաշած տեսակները ունինք, կան ալ ասոնք փոխանցելու լեզուն չունինք: Եղածով կը գոհանանք, նոյնիսկ կը հպարտանանք: Մասնագէտն ալ, երիտասարդ ուսանողն ալ, հայ կեանքէն հեռու մնացածն ալ ունին իրենց լեզուն: Համախմբել փափաքողը պարտաւոր է այդ լեզուներուն տիրապետել: Չեմ երթար յաջողած փորձերու մինչև Ոսկեղար, Արծաթ դար, Նչեցի, Որոտնեցի, Տաթևացի, Մլխիթար, Զարթօնք բոլորն ալ՝ ուսանելի: Օրմանեան, Դուրեան, Գուշակեան, Յովսէփեանց – ահա մօտիկ անցեալին համախմբումի փորձեր կատարածներ, որոնք վանական-մտաւորական միջավայրի ստեղծումով սերնդակերտման հիմեր նետած են: Ես այսօր դիմացկուն պատկերներ չեմ տեսներ: Օրինակ մը տամ մերօրեայ համախմբումի. գաղութի մը մէջ երիտասարդ մը տարեդարձը կը կազմակերպել, համաժողովըրդային շարժման օրերուն, և իրեն կ'առաջարկուի հիւրերը «համախմբել» հայկական հաստատութեան մը առջև, «Զարթի՛ր լաօ» գրութիւնը կրող պաստառ մը բռնել, լուսանկարուիլ, ու ապա երթալ տարեդարձի: Այս

մակերեսայնութիւնը ոչ պայքարի, ոչ գաղափարի, ոչ տեսակետի, ոչ կարծիքի, ոչ ալ համախմբումի կրնայ առաջնորդել երիտասարդութիւնը: Համախմբել փափաքողները վերջին տարիներուն Միջին Արևելքէն Արևմուտք գաղթած սուրիահայ երիտասարդներն իսկ չեն կրնար հայկական ասանդական կառոյցներուն շուրջ «պահել»... երկար ժամանակ: Ամէն մարդ գործ մը ունի, իսկ համախմբողն ալ, ըստ երևոյթին ու արդիւնքին, իր գործը չի կատարեր: Մայիս 28ի առթիւ խաղաղաշուտի մէջ հաւաքուած կան հանդիսութեանց արահներ լեցնող քանակը (կան բանակը՝ եթէ կ'ուզէք) համախմբում կարելի չէ համարել: Բայց ես պիտի ուզէի անկեղծօրէն գիտնալ, թէ մի է համախմբողը: Այս հարցումը ի գօրու է ինձի համար, որովհետև պատահած է, որ նման հաւաքարարներու դիմած եմ, որոնք խրախմբանք գատ այլ ձեռնարկ կազմակերպելու կարողութիւն ցոյց չեն տուած. իրենք զիրենք հաւաքելու դժուարութիւն ունին, ո՞ր մնաց՝ ուրիշները...: Աւարտեմ. երբ համախմբուիլ բայն իսկ հայ մամուլը այսօր սխալ կը գործածէ՝ ինձի ըսելիք չի մնար. «...և ըմբռնչենցիս իրարու հետը համախմբուելու հաճոյքը»: Բայց ատելի լաւ է թերևս լռել և ըլլալ «կառուցողական»...:

Զարմիկ Պօղիկեան

Մասնագիտական ներուժի համախմբման աշխատանքը թերի կը մնայ: Նախ համայնքներու մշակութային, կրթական, տնտեսական կեանքը վարող մարմիններու մէջ հարկ է *ներգրասել մասնագէտներ և սպակեղորն աշխարանքին թափ փայլով առիթ ընծայել, որ անոնք նորարար ծրագրերով կացութիւններ փոխեն և ոչ թէ դասական աշխարանքները շարունակողներ ըլլան պարզապէս:*

Այսօր շատ մը ոլորտներու մէջ մասնագէտներ, մտաւորականներ հեռու կը մնան համայնքային կեանքին մէջ գործուն դերակատարութիւն ստանձնելէ՝ կան համապատասխան գնահատանքի չարժանանալուն, կան ալ իրենց տեսլականներուն համապատասխան գործունեութեան դաշտ ու առիթ չգտնելուն համար:

Մասնագիտական աշխատանքի մօտեցումը նահանջած ու սիրողականին զիջած է շատ մը ոլորտներու մէջ, որուն հետևանքով ալ այդ ոլորտները մաշումի ենթարկուելու ճամբան բռնած են:

Երկրորդ հարցը այստեղ մասնագէտներու գնահատումի հարցն է: *Դպրոցներու, մշակութային կեղորններու, փնթեսական հասարակութիւններու մէջ մասնագէտներ գործի հրահրելով լաւ վարձատրելու պարագային որակի նկարատելի բարելաւում կրնանք ունենալ:* Սակայն հարցը երբ վարձատրութեան համար միջոցներ չունինք կ'ըսենք ու չենք կամենար երբեմն հարցերուն յստակ լուծումները տեսնել: Օրինակ, կրթական հաստատութեան տնօրէնը, հայերէնաւանդ ուսուցիչը յաճախ կայուն ապրուստ ունենալու համար բաւարար չափով չեն վարձատրուիլ. ինչո՞ւ, ներկայ տնտեսական ծանր ժամանակներուն մէջ ինչո՞ւ պիտի չվարձատրուի միտքն ու ստեղծագործական գրիչը, իսկ հասութաբեր հաստատութիւններու մէջ շոյալօրէն վարձատրուի խոհարար մը, օրինակ:

Իշխան Չիֆթճեան

(Անդրադառնալով վերևի պարբերության երկրորդ բաժնի հարցադրումին)

«Ինչո՞ւ»

Որովհետև յաճախ, թերևս այլ մի՛շտ, կրթական հասարակությանց պարասիանսարուները՝ կուսակցական կամ այս ու այն հոսանքին ենթակայ, «մեզմէ», «մեր շարքերէն», կարող կամ անկարող քննադատելով կամ ուսուցիչ նշանակող փարբերը հեռու են պարկերացում ունենալէ կրթութան, դաստիարակութան, դպրոցի, ուսումնասիրութան, մանկավարժութան փարբերական կանոններուն մասին: Հայերէնն այլ մայրենի լեզուն, «միտքն ու սրտեղծագործական գրիչը» որևէ կարևորութիւն չեն ներկայացնէր ասոնց համար, և շարք բնական է որ իրենց «աշխարհատրոնները» պարզաճ գնահատելու կամ վարձարելու մասին որևէ մտահոգութիւն չունենան: Կը բաւէ որ անոնք ըլլան իրենց փարսիսին հասարակութիւն բնակիչները, մամուլի խմբագիրներն ու աշխարհակիցները՝ նոյնպէս, որակ, աշխարհանք, արդիւնք՝ ոչ մէկ կարևորութիւն ունին: Կարևորը «մեր»ն է, և «մեր»ը միշտ լաւ է: Այս փակողողեղայնութիւնը օրէնք է: Տասնամեակներէ ի վեր, թերևս կարելի է ըսել՝ միշտ, այսպէս եղած է մեր ներմիտքիւնը արտացոլացնող այս պարկերը Սփիւռքի մէջ: Հայ դպրոցի այս ճակատագիրը «արդեօք դամբանի մրուրով է գրուած»: հարցում մըն այլ ինձմէ:

Շէնք կառուցել, Հայ Դարի համար գրասենեակ բանալ երևելի ձեռնարկութիւններ են, որոնք գումարի կը կարօտին: Մակայն հայերէնի ու գրականութեան դասաւանդում գումարի կարիք չունին: Պարճատը շարք արգ է: Պարասիանսարու անձերը իրենք չեն հասարակ հայերէն լեզուին, յաճախ չեն փրկապետներ անոր, հայ գրականութեան և ըստ իրենց անհասարակութեան շարժելով է որ կը «վարձարեն» իրենց պաշտօնները:

Գալով Հայ Դարի համար ծախսուած միլիոններուն, ցեղասպանութեան ճանաչման նպատակով մտնուած գումարներուն, կ'ուզեմ յիշեցնել հետևեալը: Արցախի 44 օրեայ պարտերազմին լայնքին ու երկայնքին չգործուցուած մէկ հարիկ պետութիւն, հայութեան, Հայաստանի, Հայ Դարի «բարեկամ», հայոց ցեղասպանութիւնը ճանչցած ու դատապարտած պետութիւն, որ պաշտօնապէս ու բարձրաճայն դատապարտելը Ազրայէճանը: Եթէ կը փախաքիւնք քաջալերուիլ ու բաւարարուիլ այս կամ այն պետութեան այս կամ այն խորհրդարանականին «հայնապարտ» յայտարարութիւններով ու կոչերով, երբ ամբողջ Արցախը այսօր վրանգի առջև կը գրնուի, կրնանք շարունակել լեցնել ասոնց գրպանները:

Հատկապէս միջինարևելեան երկիրներու տնտեսական և կենցաղային ծանր պայմանները մեր երիտասարդները կը ստիպեն ուսման կողքին դիմելու քանի մը աշխատանքի, իրենց առօրեայ կարիքները ապահովելու, միաժամանակ ուսանելու համար: Եթէ նկատի ունենանք, որ երիտասարդական-ուսանողական ներուժի համախմբման հիմնական ենթահողը միութիւններն ու մշակութային, կրթական հաստատութիւններն են, որոնց շուրջ կը համախմբուին մեր երիտասարդներն ու ուսանողները, **ուարի որքան հեփաքքրական և օգրակար պէտք է ըլլան անոնք, որպէսզի ներգրանեն երիտասարդները իրենց ծանր առօրեային մէջ:**

Համահայկական երիտասարդական-ուսանողական ներուժը որոշ հարթակներու վրայ համախմբելու ստիպելու սրտեղծելով այլ կարելի է համայնքներուն զարգացման նպատակով քննարկումներ, ծրագրեր մշակել: Միտքերու, փորձառութիւններու փոխանակումը մեծ դեր կրնայ ունենալ այս շրջագիծին մէջ: Հետևաբար սփիւռքահայ երիտասարդները կամրջող օղակները ամրացնելով կարելի է գիրենք կզգիացումէ դուրս բերել ու գործունեայ դարձնել՝ աշխատանք ու պատասխանատուութիւն վստահելով անոնց, բայց մանաւանդ ստեղծագործելու առիթ ու թափ տալով:

Երիտասարդութիւնը կ'ուղղուի հոն, ուր նորարարութիւն կայ, զարգանալու կարելիութիւն և ընկերային մթնոլորտ կայ:

- 3. Ինչպէ՞ս կանխարգիլել Հայրենիքի հետ խզումը՝
- Արդիւնք պարտութիւններու ու անձնատուութիւններու
- Արդիւնք իշխանութիւններու Սփիւռքի նկատմամբ վարած քաղաքականութեան
- Արդիւնք ձուլման

Իշխան Չիֆթճեան

Հայրենիքը շատ ատելի է քան Հայաստանի ներկայ հանրապետութիւնը: Անկէ խզումը արդէն տեղի ունեցած է բազմաթիւ մակարդակներու վրայ և կը շարունակուի: «Կանխարգիլելու» համար հարկ է ունենալ միջոցներ կրթութեան՝ նախ հասկնալու համար, թէ ի վերջոյ «հայրենիք»ը և «անհայրենիք ինքնութիւնը» ինչ շերտեր կը պարունակեն, մեր պարագային՝ պատմական ու ներկայ ինչ փորձառութիւններու հետ կապուած են, ինչպէ՞ս կրնանք այդ փորձառութիւնները, առանց զանոնք վտանգաւոր փորձութիւններու վերա-

ծելու, մեր ինքնութեան համար օգտագործել: Այս օգտագործումը ամէն սերունդի կողմէ նախաձեռնուելիք պարտականութիւն է, որ այսօր կրնայ դասընթացքի, վերակազմաւորման լսարաններու միջոցաւ տեղի ունենալ: Ներկայիս կատարուող և ինձի ծանօթ փորձերը յոյս չեն ներշնչեր, որովհետև 2024-ի արդիւնք չեն տար: Երբ կը թերանանք այս պարտականութեան մէջ՝ անհիմն ենք, դիւրաւ կը կորսնցնենք ուղղութիւնը և «խզման» կամ հեռացման մակերեսային պատճառներ կը փնտռենք, ինչպէս դուք կ'ընէք. «պարտութիւն», «անձնատուութիւն», «Սփիւռքի նկատմամբ քաղաքականութիւն» և այլն: Չույումը ծաւալուն նիւթ է՝ յաճախ արդիւնք անգործութեան, անկարողութեան, հեղգութեան: Խզումը չի վերաբերիր միայն Հայաստան-Սփիւռքին, այլև ներհայկական յարաբերութեանց, որովհետև խօսքի մշակոյթը չէ զարգացած: Հսկայական մեքենաներ ի գործ դրուելու են՝ այլ երկիրներու և ժողովուրդներու փորձառութիւններ, մասնագիտական մօտեցումներ, նիւթական-դրամական ներդրումներ. ասոնց բոլորին ալ բացակայութիւնը ոչ միայն զգալի է, այլև մեզ խեղումներու առաջնորդած է:

Զարմիկ Պողիկեան

Այստեղ քարոզչական միջոցներուն մեծ դեր վերապահուած է՝ հայրենիք, պետութիւն և իշխանութիւն հասկացութիւնները տարբերելու, աշխարհաքաղաքական գարգացումները լուսարձակի տակ բերելով յանուն հայրենիքի պայքարելու ոգին վառ պահելու, համոզելու որ պարտութիւնները վերակազմակերպուելու և մեր թոյլ կողմերը ուժեղացնելու սկիզբ կրնան դառնալ:

Սփիւռքահայութիւնը պէտք է զգայ ու 2024-ի որ դերակատարութիւն կրնայ ունենալ հայրենիքի գարգացման ու պաշտպանութեան գործընթացին մէջ, որուն համար ալ ջանք պէտք է թափել Սփիւռքը մասնակից դարձնելու այդ գործընթացին:



Բարեբախտաբար սուրիահայ երիտասարդութիւնը այդ կապը չէ խզած, ապրելով մէկտեղ մեծ հիասթափութիւն իշխանութիւններու անձնատուական քաղաքականութենէն և Սփիւռքի հանդէպ վանողական վարքագիծ դրսևորելէն: Սուրիահայ երիտասարդներու նկատառելի տոկոս մը այսօր ևս եթէ որոշէ գաղթել՝ Հայաստան կ'ուղղուի: Ասիկա նաև դաստիարակութեան արդիւնք է, պետութիւնը իշխանութենէն զանազանելու գիտակցութիւն է:

4. Ինչպէ՞ն կրնայ ընթանալ Սփիւռքի վերակազմակերպումը

- Կառավարման-վարչական ոլորտէն ներս
- Կրթական-մշակութային-գիտական ոլորտէն ներս
- Տնտեսական ոլորտէն ներս

Իշխան Չիֆթճեան

Վերակազմակերպուելէ առաջ Սփիւռքը նախ կրնայ կազմակերպուիլ: Ներկայ պայմաններուն մէջ եւս վստահ չեմ որ կրնայ: Ոչ կառավարման-վարչական, ոչ կրթական-գիտական-մշակութային, ոչ ալ տնտեսական



ուրրտները ներկայիս լուրջի առնուած են նաև Սփիւռքի մէջ: Լուրջի առնել կը նշանակէ ուշադրութիւն դարձնել և, ինչպէս շեշտած էի առաջին հարցումին պատասխանիս մէջ, աշխատանքի մը արդիւնքէն դատելով մեկնարկ կատարել: Մենք յաճախ հաստատութիւններու հրապարակեալ (կամ այլապէս տրամադրելի) տեղեկագիր ալ չունինք, որ գէթ ծանօթանանք կատարուած «աշխատանք»ին, անկախ անկէ, որ տեղեկագրի առկայութեան պարագային անոր քանի՞ տոկոսը կը համապատասխանէ իրականութեան: Առաել՝ հաշուեյարդարի և ինքնաքննադատութեան ամբողջական բացակայութիւն: Կը յղեմ դարձեալ առաջին պատասխանին՝ փակ տրամաբանութիւնը կը փակագործէ: Երբ բանիմաց պատասխանատուին փոխարէն անիմացը կայ՝ ինչ ակնկալել: Պիտի հարցնէք՝ ամէն տեղ: Կը պատասխանեմ՝ գրեթէ: Խորհրդանշական օրինակ մը տամ. եթէ լեզուի վերաբերող առաջարկ ու ծրագիր կատարող, ղեկավարող կամ ընդունող անձը չտիրապետէ լեզուին ու անոր էաբանական հարցերուն՝ ինչ ակնկալել: Անտարանը կ'ըսէ. «Իրաքանչիւր ծառ ի պտղոյ իւրմէ՛ ճանաչի». մենք մեր ծառին անհամ պտուղը ուտելով չենք զգար անոր անհամութիւնը: Թէքէտան իր ծանօթ քերթուածին մէջ հայերէն բառերը պտուղի կը նմանցնէ. մենք այդ համը չենք առներ, սակայն կ'ուզենք... համ ստեղծել: Բերդերը յանձնած ենք, ակերակներուն վրայ դրօշ կը տնկենք և կ'ուրախանանք: Կրթական-մշակութային բնագաւառի պատասխանատու անձեր յաճախ կը գանգատին, թէ ընթերցող չկայ, սակայն անոնց քանի՞ տոկոսը կը մտածէ ու կը ծրագրէ ընթերցող... ստեղծելու մասին: Անընդհատ «արտաքին», «համաշխարհային» պայմանները իբրև մեր կացութեան պատճառ վկայակոչելը կը խեղդէ «ներքին», «մեր ձեռքը եղող» պայմաններուն կարելիութիւնը: Ես յուսահատ չեմ, սակայն յոյս չեմ կրնար

անհիմն մօտեցումներու կապել: Եթէ կ'ուզէք ձեր հարցումին ուղղակի և յստակ պատասխան՝ Սփիւռքի (վերա) կազմակերպման ընթացքը հսկայական հարց մըն է, հարցական մը, որուն վերջին տասնամեակներուն լրջօրէն չենք մօտեցած. իսկ անոր մակերեսով զբաղելով, շուրջպար բռնելով ձեռքբերումներու յոյսը փայփայելը վատերական ինքնախաբէութիւն է:

Զարմիկ Պօղիկեան

Սփիւռքի պատկերին փոխուելուն զուգահեռ վերատեսութեան պէտք է ենթարկել անոր կառավարման վարչական ոլորտը, որովհետև կարգ մը վարչական դրուածքներ արդէն ժամանակավրէյ դարձած են:

Վարչական կարգ մը մարմիններ երբեմն ամուլ ժողովական կեանքէն բացի ընելիք չունին, բիւրոկրատիկ տրամաբանութեամբ կը գործեն:

Ապակեդրոնացեալ աշխատանքի պահպանումը ևս կարևոր է ներկայ ժամանակներու վարչական աշխատանքները արդիւնաւետ դարձնելու համար: Եթէ վարչական մարմինները լիազօրութիւններ ունենալով մէկտեղ որոշումներ գոյացնելու և իրականացնելու կարելիութիւն պիտի չունենան, ժամանակի ընթացքին վարչական աշխատանքներէ հեռացողներու թիւը պիտի աճի ու անտարբերութիւն պիտի տիրէ նման աշխատանքներու նկատմամբ:

Կրթական, մշակութային ոլորտներու վերակազմակերպումը հիմնականօրէն պիտի ընթանայ մասնագիտական մարմիններու յառաջացումով, թէկուզ վճարովի մարմիններ, որոնք պիտի մշակեն ոլորտի զարգացման երկարաժամկետ ծրագիր ու անոր գործնականացումը հետապնդեն յստակ ժամկետներու մէջ: Վարչական մարմինները, խորհուրդները փաստօրէն շրջանը անգամ մը փոփոխութեան ենթարկուող մարմիններ են, ծանրաբեռնուած են վարչական գործերով, հետևաբար ալ սրընթաց զարգացող այս դարուն, երկարաժամկետ ծրագիր մշակելու և անոր գործնականացումը հետապնդելու աշխատանքը երկար ժամանակի վրայ չեն կրնար իրականացնել:

Գնահատելի են այս ոլորտներուն նպաստող կողմերուն՝ ՀՕՄ-ի, Գալուստ Կիլպէնկեան Հիմնարկութեան, ինչպէս նաև անհատ բարերարներու նիւթական նպաստները, որոնք կը խթանեն կրթական, մշակութային, գիտական ծրագիրները Սփիւռքի և հայրենիքի մէջ:

Սփիւռք-հայրենիք և Սփիւռք-Սփիւռք գործակցութիւնը ևս այս ոլորտին իր ներդրումը կրնայ բերել, մասնագէտներու փոխանակումով, միասնական ծրագիրներու մշակումով և այլն, յարկապէս նկատի ունենալով առցանց հարթակներու արեւոմասն ծով կարելիութիւնները:

Տնտեսական ոլորտը բարելաւելու համար համահայկական հիմնադրամներուն, միութիւններու, համայնքներու նուիրահաւաքին, բարերարներու ներդրումին կողքին, սփիւռքահայ մեր համայնքներուն մէջ **հասութեամբ հասարակութիւններու թիւը կարելի է ստեղծել:**



Եթէ իւրաքանչիւր հասարակութիւն ունենայ իր փնտրեալ սակնային հասութեալերը ձեռնարկութիւնը և կարենայ գէթ իր փնտրեալն եկամուտը ապահովել, բաւական մեղմացուցած կ'ըլլայ համայնքի ընդհ. փնտրեալն բերել: Այլ խօսքով՝ իւրաքանչիւրը փնտրեալն բաղաբաղանդութիւն ունենայ, օգտուելով փոխադրուող երկրի ընծայած կարելիութիւններէն:

5. Որո՞նք կրնան հանդիսանալ գլխաւոր դերակատարները

- Ազգային կուսակցութիւնները
- Եկեղեցին
- Այլ կազմակերպութիւններ (առկայ կամ նորաստեղծ) ու անհատ ազգայիններ

Իշխան Չիֆթճեան

Չեր նշած բոլոր դերակատարները արդէն իրենց դերը կը խաղան: Անոնց աշխատանքին արդիւնքը ներկայիս չի հասնիր այն մակարդակին, որ կարենանք խօսիլ երկարաժամկետ ծրագրերու իրականացման մասին՝ վստահինք անոնց գործունէութեան: Պատճառները բազմաթիւ ու բազմատեսակ են: ԺԹ. դարուն Վարագ, Շուշի, Թիֆլիս, Կարին, Իսարբերդ, Մոսկուա և այլուր ուսումնարաններ հիմնած նոյն ազգն է այս, որ երկու դար յետոյ Ի. դարու իր դպրոցները կը փակէ մէկը միտին ետևէն, և նորեր չեն բացուիր: Մասնով ներկայացուցիչներ կը փակուին, նորեր չեն հիմնուիր, ներկայները իրենք գիրենք կը քաշքշեն, նոր շունչ չեն բերեր, յանուն նորարարութեան անհետանկար խելոյթիւն կը ներկայացուի առցանց այլևայլ միջոցներով, մշակութային երկոյթներ ու երկեր յայտնաբերող մտաւորականութիւն գոյութիւն չունի կամ գոյութեան պարագային մենամտութեամբ զբաղ է, նշեալ երկոյթներու և երկերու մատուցումն ու բաշխումը ընկալող մտաւոր շրջանակ չի ձևաւորուիր, և կը մնանք ձևական ձեռնարկներու սահմաններուն մէջ: ԺԹ. դարուն կրթական ու հրատարակչական ընկերութիւններ կը հիմնուէին Կալկաթայէն մինչև Կ. Պոլիս: Անցեալը դասագիրք է, իր լաւ ու գէշ կողմերով, ուսանիլ փափաքողին համար միայն: Չեն գիտեր, թէ այսօր ի՞նչ նպատակով ի՞նչ կը հիմնուի: Ուրախ կ'ըլլամ, եթէ անգիտակցաբար կ'անտեսեմ եղածները, անոնց արդիւնքը և կը սխալիմ:

Զարմիկ Պողիկեան

Սփիւռքի կազմաւորման դժուարագոյն օրերէն գաղութներու կազմակերպումի, դեկավարումի գործը, ազգայնապահանջման ռազմավարութեան մշակումն ու գործադրութիւնը տարած են **սփիւռքահայ կազմակերպութիւնները, բարեսիրական միութիւնները, ազգային և հոգևոր իշխանութիւնները, միասնականութեան և ժողովուրդին բոլորանուէր մասնակցութեամբ:** Անոնք ժամանակի ընթացքին փորձառութեամբ և աշխատանքով ձեռքբերած են վարկ և ուժ, և գոյութեան արժանապատիւ պահպանման կողքին, ոչինչ զլացած են նաև հայրենիքին ձեռք երկարելու, տեղական իշխանութիւն-



ներու հետ սերտ յարաբերութիւններ մշակելու համար և այլն: Քաղաքական, տնտեսական պայմանները այնքան փոխուեցան ու աշխարհի զարգացումը այնքան սրընթաց ու բազմակողմանի դարձաւ, սակայն, որ այդ կազմակերպութիւններուն, հաստատութիւններուն բերող քառապատկուեցաւ, իսկ Սփիւռքի վերակազմակերպման գործընթացին մէջ մասնագիտական մօտեցումը խիստ կարևոր դարձաւ: Այս պատճառով ալ հարկ է Սփիւռքի վերակազմակերպման աշխատանքներուն մէջ նշեալ կազմակերպութիւններուն կողքին նշանակալից դեր վստահիլ անհատ մտաւորականներու կամ մտաւորականներէ, գիտնականներէ, բաղկացած համախմբումներու: Այս համախմբումները **խորհրդապարտ թիւեր** կրնան դառնալ ու առօրեայ հարցերէն վեր մնալով ռազմավարական ուղղութիւններ կրնան ճշդել յատկապէս ուսումնակրթական, հայապահպանման և սփիւռքահայ մշակոյթի զարգացման ուղին գծելով ու համապատասխան մարտավարութիւն մշակելով:

6. Ի՞նչ դեր կրնան խաղալ Սփիւռքի ամրապնդման մէջ ազգային ռազմավարութիւն ունեցող հայրենի պետականութիւնը, հասարակական կազմակերպութիւններն ու ստեղծագործական, կրթական ու գիտական հաստատութիւնները:

Իշխան Չիֆթճեան

Այս պարագային կը նախընտրեմ «համագործակցութիւն» և «փոխյարաբերութիւն» բառերը գործածել: Հայաստանն ու Սփիւռքը մէկզմէկու ամրապնդման կրնան(ին) օգտակար ըլլալ: Պետութիւն ըլլալ ամէն «ապրանքին» լաւագոյնը ունենալ չի նշանակել երբեք, մասնաւոր մեր պարագային: Մեր պատմութեան սերտորոյթիւնը անհրաժեշտ է: Անպետական պայմաններու տակ եղած իրագործումները հաշուելու կարիք չկայ հոս: Ես յաճախ կ'ակնարկեմ մեր գրական (երկու) լեզուաճիւղերուն կազմաւորման ու զարգացման անպետական պայմաններու տակ: Յետանկախութեան շրջանի Հայաստան-Սփիւռք յարաբերութիւններ ըսելով կը հասկնանք հայաստանեան և սփիւռքեան հիմնարկութեանց

համաձայնագրային գործակցություն, – որ յաճախ թուրթի վրայ կը մնայ, – համաժողովներու կազմակերպություն, Հայաստան-Սփիւռք պաշտօնական և խրախճանական եռուզեռ կամ ձևական երթողարձ: Եթէ որևէ խորքային շարժում ըլլար՝ պիտի խանդավառուէի: Փորձառութեանց փոխանակումը եկեղեցական, քաղաքական, տնտեսական, կրթական, գիտական և այլ մակարդակներու վրայ իրականութիւն դարձնելու համար անհրաժեշտ է *փոխադարձ ճանաչողութիւնը*, որ կրնայ մարմին ստանալ, եթէ Սփիւռքէն ու Հայաստանէն նոյն մասնագիտութեան հետևողներ միասնական ծրագիր մշակեն: Ինձի կը պակսին տեղեկութիւններ միասնական ծրագրերու մասին, եթէ անոնք իսկապէս գոյութիւն ունին: Երկու և այլ կողմերէ քաղաքագէտ, տնտեսագէտ, ճարտարապետ, երաժիշտ, գրականագէտ և այլն ոչ միայն քով քովի գան, այլև իրենց մասնագիտութեան վերաբերող հարցերը սեղանի վրայ դնելով քննեն իրենց մօտեցումները, հակադրութիւնները, «հայկականին հասարակաց»ը գտնեն, վերագտնեն, վիճաբանին, ինքնութեան բազմաշերտ դրոյթեան մասին քննարկման մշակոյթ ձևատրելու նպատակով: Ընդմէջ Կիլիկիոյ և Արևելեան Հայաստանի տեղի կ'ունենային քաղաքական և աստուածաբանական աշխոյժ քննարկումներ: «Համահայկական»ը ես աս իմաստով կը հասկնամ: Ամրապնդողն ու ամրապնդողը բոլոր կողմերը կ'ըլլան փոխադարձաբար: Տեղեկ եմ, որ բնեռները այնքան հեռու ու սուր են, որ մերձեցումը անկարելի կը դառնայ, և աս պատճառով Հայաստան և Սփիւռք իրարու չեն հանդիպիր: Պատճառը հանդուրժողականութեան ու աշխատանքի բաժանման տրամաբանութեան բացակայութիւնն է⁷:

Զարմիկ Պողիկեան

Վերջին տարիներուն հասարակական ցանցերուն վրայ ազգային մտածողութեան դէմ այնքան բացասական արտայայտութիւններ կը հնչեն, որ նոյնիսկ ազգային մտածողութիւնը կեղծ *քայթեկորիս* համարողներ ազգային արժէքներու տէր կանգնողները ունանչիստներ կը համարեն, կարծէք կրկնելով թշնամիին բառամթերքը: Ասիկա ուղեղները լուսալու ընթացք մըն է կարծէք, որ առաջին հերթին Սփիւռք-հայրենիք կամուրջները կը ջանայ այրել և ազգային ռազմավարութեան մը շուրջ մեր ազգին կարելիութիւնները համախմբելու կոչուած պետական ծրագրի մը մշակումն ու գործադրութիւնը բացառել: Մենք ևս մեր տարակարծութիւններով, մեր խոցելի կէտերը միասնաբար քննարկելու փոխարէն զիրար մեղադրելով թափ կու տանք այս ընթացքին:

Ազգային ռազմավարութեան մշակումը և ազգի բոլոր բաղադրիչներուն հետ անոր քննարկումը, իմաստուն ղեկավարներով Սփիւռք-հայրենիք համերաշխ գործակցութեան վերականգնումը, – առանց մէկը միւրը կառավարելի դարձնելու նկրտումներուն, – դրական կրնայ ըլլալ ու շատ մը դժուարութիւններու յաղթահարման նպաստել: Եթէ պահ մը մէկդի դնենք մեր տարակարծութիւնները, մեր հիմնական նպատակներուն շուրջ համախմբուի՞նք՝ յարգելով իւրաքանչիւրին տարած աշխա-



տանքն ու ձգտելով միասնաբար սրբագրել թերութիւնները, մենք ազգովին, աստիճանաբար կը սկսինք լուծել մեր տարբեր հարցերը, Հայաստանի անվտանգութեան նախադրեալները ամրապնդել ու Սփիւռքի հզօրացման բերրի հող ստեղծել:

Սփիւռք-հայրենիք կապը ոչ ձևական պիտի ըլլայ՝ գիտածողովներով ու համաժողովներով սահմանափակուելով, ոչ ալ շահակցական՝ Սփիւռքի նիւթական կարելիութիւններու օգտագործումը միակ նպատակ դարձնելով: Այս կապը փոխազդեցութեան և իրերօգնութեան բոլոր անցքերը կրնայ բաց պահել՝ օգնել և օգտուիլ, այլ խօսքով գործակցութեան առողջ ընթացք մը բանալ:

Ազգային ռազմավարութեամբ օժտուած պետութիւնը կարելիութիւն կ'ունենայ ուսումնասիրելու ազգին ներուժի աղբիւրները և բոլորին հետ համերաշխ գործակցութեամբ այդ աղբիւրները ծառայեցնելու թէ՛ երկրին, թէ՛ ազգին և թէ՛ Սփիւռքին: ■

Ծանօթագրութիւններ

1. <https://www.aztagdaily.com/archives/586274>
2. https://www.facebook.com/qayldepytun?locale=es_ES
3. <https://www.facebook.com/media/set/?vanity=hehemofficial&set=a.603924941774606>
4. <https://www.arfd.am/new/news/66534/?fbclid=IwAR0qTA-VoWwzsQx-voZT8W-4dfxMWMEBY3I2aNsZjKkKYKdJr-BhefeONZg>
5. <https://hetq.am/hy/article/158661>
6. Հմնտ. «Զրոյց. «Ստեղծել Ընթերցողի Կարծիք, Ընթերցող Ստեղծել»», Վրէժ-Արմէն-Իշխան Չիֆթեան գրոյց, «Ազդակ» օրաթերթ, Պէյրութ, 27 Դեկտեմբեր 2019 (<https://www.aztagdaily.com/archives/459149>):
7. Յանելեալ մանրամասնութիւններ կրնաք կարդալ՝ Իշխան Չիֆթեան, «Ինքնութեան տարբերութիւններէն մինչև հասարակաց ինքնութիւն», «Ինքնագիր» գրական հանդէս, անցանց, Երեւան, 16 Մայիս 2015 (<https://inknagir.org/?p=5069>):

Փրկենք մեր ներսի մեղավորին կամ Ուշացողները չեն վերածնվում

Հերմինե Ավագյան
Արցախի և ՀՀ գրողների միության անդամ, «Համազգային» հայ կրթական և մշակութային միության Արցախի գրասենյակի պատասխանատու

Այն, որ հայկական Սփյուռքն այսօր կանգնած է նորանոր մարտահրավերների առջև, վաղուց գաղտնիք չէ, բայց այն, որ հայկական Սփյուռքն այս աստիճանի փորձերին կտրել Հայրենիքից, երկրիս իշխանությունների ամենաբարձր մակարդակով փորձ արվել արժեզրկել Սփյուռքի ավանդական կուսակցությունների, Հայ դատի գրասենյակների հսկայական աշխատանքները, հատկապես Հայոց ցեղասպանության ճանաչման ու դատապարտման, Արցախի ճանաչման ու ինքնորոշման հարցերում, անպատկերացնելի էր, ինչպես անպատկերացնելի են այսօր Արցախի՝ Ադրբեջանին բռնակցման հարցում ներկա իշխանավորների աներեր քայլերն ու ապագային կեցվածքը: Ակնհայտ է, որ մույթ ուժերը գործի են անցել ու դեռևս վաղուց, որպեսզի այսօրը գա ու այսօրը չուշանա:

Համայն հայության համար «այսօրը» գոյաբանական ծանր մարտահրավեր է, սա ոչ միայն հողային կամ տարածքային կորուստների հարց է, այլև, առաջին հերթին, ձեռնոց է նետված մեր ինքնության պահպանմանը, որովհետև ազգերի ու պետությունների պարտության ճանապարհն ինքնության ոչնչացմամբ է սկսվում: Չունեն ինքնության գիտակցում, ուրեմն արմատող չի սնուցվում, ուրեմն այլևս բերք տալ չես կարող, կապ չունի որտեղ ես «աճում»՝ մայր հողի վրա, թե՛ օտարի: Սա նոր Սարդարապատ է, որտեղ թիրախավորելով մեր ինքնությունը՝ թիրախավորվել է մեր պետականությունը, որպես ազգ մեր լինել-չլինելն աշխարհի վրա: Բայց որտեղից է ծագել վտանգը՝ Սփյուռքից, Հայրենիքից, թե՛ հենց մեր ներսից, ո՞վ է մեղավոր, որ մենք կորցնում ենք մեզ՝ այն ուժերը, որ գիշեր ու գօր աշխատում են այդ ուղղությամբ, թե՛ մենք, որ բավարար ջանքեր չենք ներդրել ու ներդնում հակառակը անելու համար: Այս հարցերի պատասխանների փնտրտուքն է, որ ստիպում է հիշել իմաստուն խոսքը՝ «ծանիր զքեզ»:

Մենք կենսացներ սիրող ազգ ենք. Սփյուռքում սիրում ենք կենսացներ խմել Հայրենիքի մասին, ասել, որ Հայրենիքը պիտի հավերժի, որպեսզի մենք էլ հավերժենք, ասել, որ Հայրենիք-Սփյուռք միասնությունը պետք է պահել կոռ ու ամուր: Հայրենիքում մեր կենսացները փոքր-ինչ այլ են, որովհետև երբ հայրենի հողի վրա ես կազնած՝ ռոքերդ ամուր են, ավելի գորեղ ես խոսում, այստեղ մենք միշտ շեշտում ենք, որ սփյուռքահայերը պիտի վերադառնան, ապրեն մայր հողի վրա ու ապրելով շենսցնեն այն, օրինակներ ենք նշում, կենսացների մեջ շեշտում վերադարձողների անունները, հատկապես, եթե նրանք սեղանի շուրջ նստած են: Հետո, երբ բաժակները դատարկվում են ու ճատերն ավարտվում, գալիս է իրականությունը, որը մեր սրտով չէ, բայց մենք «մեղավոր չենք», որ այն



մեր սրտով չէ, միշտ մեղավոր են ուրիշները՝ լինի Հայրենիքում, թե Սփյուռքում: Այդպես էլ չի արթնանում մեր ներսի այն մեղավորը, որը կասի՝ «ես մերկ եմ, ինձանից սկսենք, հետո անցեք թագավորին»: Մենք ուշացել ենք ինքներս մեզնից սկսելու ժամանակից, հիմա այլ ելք չունենք՝ պիտի սկսենք գոնե հիմա, հենց այսօր:

Հայապահպանության խնդիրը Սփյուռքի առանցքային խնդիրն է, որտեղ նահանջը և ուժացումն օր-օրի ավելի են ընդգծվում, բայց արդյո՞ք Հայրենիք վերադարձող սփյուռքահայը այդ հարցում ապահովագրված է Հայրենիքում, այստեղ նահանջ չկա, այստեղ հայ մնալու խնդիր չկա, զավակին հայ պահելու խնդիր չկա: Իսկ գուցե հենց Հայրենիքից պիտի սկսվի փրկությունը, ինքնամաքումը, առողջ սերմերի գտումը ախտից ու աղբից, այն ցանելն ու ամեն օր ջրելը, որպեսզի երբ սփյուռքահայ մեր ընկերը որոշի վերադառնալ ու ապրել այստեղ, նրան առողջ սնունդ մատուցվի, ոչ թե արևմուտքից բերված «արհեստածին սնունդ»: Եթե Հայրենիքում խախտու են ինքնության հիմքերը, ապա ի՞նչ արդյունք ակնկալել օտար ափերում մեծացող, ամեն օր օտար բարքերի հետ առնչվող երիտասարդից: Ամենևին չեն արդարացնում Սփյուռքի ուժացումը, ուղղակի Հայրենիքում առկա վտանգների անտեսումն են շեշտում, որովհետև ինչքան էլ Սփյուռքում փորձենք հայ մնալ, հայը Հայրենիքով է հայ, Մայր Հայաստան ունենալով է հայ, հայ մշակույթը կրելով է հայ, հայոց լեզուն անաղարտ պահելով է հայ, իր հերոսներին ճանաչելով ու մեծարելով է հայ, ազգային արժեքներին տեր կանգնելով է հայ: Այս ամենի ակունքը Հայրենիքն է, ակունքը պետք է մաքուր պահել, որպեսզի գետը մաքուր հոսի, աղբյուրը մաքուր լինի, ջուր խմողը չիվանդանա:

Իշխան Չիֆթճեան

Չիսակնայ Սփիւռքը՝ անհողին հայութիւնը
Եւրկայ Հայաստանի Հանրապետութիւնը՝ «հայրենիքը», չէ միակ վայրը, ուր հայկական «անունը» կը մատուցուի: Սփիւռքի մէջ անունը կը սրտեղծուի, կը պարտաւորուի ու կը մատուցուի, նաև՝ անցեալ կարարեալ ու ապանի եղանակներով, անհող կացութեան մէջ: «Այս ամենի ակունքը Հայրենիքը» ՉԷ: Վկան հայութեան պարմական գոյութիւնն է: Եթէ ներկան խախտուր ուղեղներու ձեռք մնացած է՝ հարկ է մտածել այդ ուղղութեամբ: Ժամանակին կար Սփիւռքի նախարարուհի մը, որ համարձակած էր սփիւռքահայերուն խօսք ուղղել և բռնել. «Բերէք ձեր երեխաները Հայաստան, Էջմիածինը րեանեն, Գառնի-Գեղարդ րեանեն, Սևանայ լիճ մրնեն-ելլեն, գիտենք հայացնել և ձեզի վերադարձնել» (բառացի չեմ մէջբերեր): Ասիկա կը նշանակէ. «Դուք հայ չէք, դուք հայրենիքի մէջ միայն կը հայանաք»: Այս մտայնութիւնը հին ու նոր բոլոր հայաստաններուն մտայնութիւնը եղած է դժբախտաբար, ու նման մտայնութեան րէր անձեր ոչ թէ միայն Սփիւռքը չեն ճանչնար, այլև չեն գիտեր հայոց պարմութիւնը: «Ազգային» կոչած մեր մշակոյթն ալ թարգմանութեամբ սկսած է, հայոց «հողէն» չէ բուսած, ինչպէս որ հայագիտութեան ալ հիմքը արևմտեան գիտնականներու նախաձեռնութեամբ դրուած է:

Հարցին մի քանի կողմից անդրադառնամ, որպէսզի ավելի անաչտա լինի խոսքս: Ես եղել եմ Սփիւռքի տարբեր օջախներում, տեսել եմ, թե ինչպէս են հայկական կազմակերպությունները ջանք թափում հայկական մշակույթն ու ինքնությունը պահպանելու համար, ինչպէս են սերունդ դաստիարակում, բայց նաև տեսել եմ, թե ինչպէս են պարում հայկական աղավաղված երգերի տակ, ինչպէս են ավտոմեքենաներում, հարսանիքներում ու կնունքներում ծափահարում մուղամի ելևէջների ներքո: Տեսել եմ նաև հակառակը, երբ նույն սփյուռքահայը գալիս է Հայրենիք և մի տեղ նրան ազգայինն են մատուցում, մեկ այլ տեղ հայկական ուտեստներ մատուցում արաբական ու հնդկական հնչյունների ներքո, պարում անհասկանալի պարեր: Եթե Հայրենիքն այսքան ապականված չլինէր, այստեղ եկող սփյուռքահայը գուցե փրկվէր: Ստացվում է՝ կործանումը երկուստեք է, տարբերությունը մեկն է՝ այնտեղ ձուլվում են, որովհետև այստեղ չեն ծնվել, այստեղ ձուլվում են, որովհետև այստեղ ծնվելը դեռ շատ բան չի նշանակում: Հերոսություն չէ, ոչ

էլ բարի բախտ, որ այստեղ ես ծնվել, հերոսությունը երկու տեղերում էլ նույնն է՝ ցանկանալ պահպանել քո ինքնությունը ու ջանք չխնայել դրա համար, թե չէ ինչ տարբերություն որտեղ ես ծուլվում, որտեղ ես վերջանում, եթե չունես սկիզբ, չունես գիտակցում, թե որպէս հայ որտեղից ես գալիս ու դեպի ուր ես գնում:

Այս դժվար հարցերի մեջ մոլորված մեր ինքնությունը երբեմն լռում է ու գլուխը կախ հեռանում, երբեմն անգործության ճիչեր է արձակում և փրկության կանչում մեզ: Պետք է անսալ այդ ձայնին:

Մենք սիրում ենք սփյուռքահային հորդորել վերադառնալ Հայրենիք, բայց ինչպիսի՞ Հայրենիք. Հայրենիք, որտեղ դպրոցներում սովորող երեխային վաղը կամ մյուս օրը ասելու են մի նկարի Արարատ սարը, մի արտասանի Արարատի մասին, մի ասա, որ այն քունն է, երեխայիդ անունն Արարատ մի դիր, որովհետև հիմա «խաղաղության դարաշրջանն է», կամ էլ՝ այո՛, ճիշտ են սովորեցրել քո սփյուռքահայ ծնողները, երբ որ ասել են քեզ, որ եղել է Հայոց ցեղասպանություն, բայց խաղաղ ապրելու համար պետք է մոռանալ դրա մասին, որովհետև ցեղասպանության ճանաչումն անիրական է այնքան, որքան անիրական են Արարատի մասին քո բանաստեղծությունները, երգերը, նկարածդ նկարը, անիրական է այնքան, որքան անիրական են այն բանաստեղծների, գրողների, նկարիչների «ցնորքները», որոնցով քեզ «կերակրել» են մինչև օրս: Մոռացումը կփրկի հային. սա է ներկա Հայաստանի կարգախոսը, սա է երիտասարդությանը թմրեցնելու, պայքարը ջլատելու, ինքնությունը սպանելու և ազգից դեպի հեշտ կառավարվող ամբոխի վերածելու ճանապարհը:

Հիմա ամբողջ Հայաստանը, Սփյուռքը, Արցախը մի նոր նոյան տապան են, որն ամեն պահի կարող է անցնել ջրիեղեղի տակ ու այդպես էլ չհասնել բաղձալի լեռանը, հիմա տապանը առանց Նոյ է մնացել, ով ասես հայտնվել է տապանում ու ասում է, որ հենց ինքն է Նոյան, ասում է, թե ում և ինչ վերցնել տապանի մեջ, ինչ կամ ում նետել տապանից դուրս: Ճիշտ կկողմորոշվի տապանի ժողովուրդը, կկարողանան գտնել իսկական Նոյին, որը գուցե տապանի ամենախուլ խոցերում է մնացել, թե՛ կկործանվի՝ խաղաղու-



թյան արմավները բերանին բռնած:

Լինել, թե՛ չլինել. այս խոհափիլիսոփայական հարցը մշտապես վերադառնում է, երբ բազմանում են վտանգները: Հիմա ազգովի այդ հարցի պատասխանը պիտի գտնենք՝ ուզում ենք լինել. եթե ուզում ենք, ապա բավական է փորձել մեղավորներ գտնել Սփյուռքում ու Հայաստանում, բոլոր ներկա ու անցյալ մեղավորներին մե՛նք ենք աճեցրել. մե՛նք, որովհետև եթե մեր մեջ Մենքը չնահանջեր, այսօրվա մեղավորները գլուխ չէին բարձրացնի: Ուրեմն եկեք գոնե փրկենք այն անմեղներին, ովքեր դեռ պիտի գան, եկեք փրկենք նրանց՝ սկսելով ինքներս մեզ փրկելուց: Ինքնության փրկության այս Սարդարապատում տանուլ տալուց հետո ու՛մ է հետաքրքիր լինելու, թե ով խփեց վերջին գնդակը, եթե ինքնությունն արդեն անշնչացած կլինի:

Հիմա կասեք՝ դու ինչպե՛ս ես մտածում քեզ փրկել. ես արդեն փրկում եմ ինձ ու շատ փոքրիկների, որովհետև Սփյուռքի մեր հայանվեր կառույցներից մեկը՝ Համազգային հայ կրթական և մշակութային միությունը, ինձ տալիս է այդ հնարավորությունը. այսօր, երբ Արցախում ամեն մի դպրոցի քթի տակ ազերիական դիրքեր են, Համազգայինի Արցախի գրասենյակի ազգային պարի խմբերի 400 երեխաներ ամեն օր շարունակում են փրկվել՝ ազգային պար պարելով, պարի ծագման պատմությունը սերտելով, իրենց շրջապատի հնամյա վանքն ու եկեղեցին ճանաչելով, դրա շրջակայքը մաքուր պահելով, հայոց լեզվի ու գրականության իրենց գիտելիքները Համազգայինի դասընթացների շնորհիվ ամրապնդելով: Եթե թշնամու քթի տակ ապրող երեխան որոշել է ու ընտրել է «լինելը», որոշել է ամեն գնով պահպանել իր ինքնությունը, ապա ասացեք դրանից ավելի մեծ մի վտանգ, որը կխոչընդոտի մեր հայ մնալուն: Իսկ գուցե միասին որոշենք՝ սրճարաններում հայ մնալ, համերգներում հայ մնալ, խնջույքներում հայ մնալ, ավտոմեքենայում հայ մնալ ու այսպես շարունակ. ղվ է մեզ արգելում հայ մնալ, եթե մենք որոշել ենք ու ընտրել ենք «լինել»-ը,



թե՛ չենք որոշել, թե՛ միայն ուրիշներն են մեղավոր, որ մենք մեզսից հեռանում ենք, լքում ենք ինքնության մեր խրամատները:

Մենք հեռանում ենք, որովհետև խրամատ պահելն այնքան էլ դյուրին գործ չէ: Նահանջի համար հազար ու մի պատճառ և արդարացում կարելի է գտնել, բայց հայ մնալը այլընտրանք չունի: Ուստի ազգային վերածնունդը մեր ներսից պիտի սկսվի, ամեն մեկս մեր ներսի ուշացողին պիտի շտապեցնենք, մեր ներսի քնածին արթնացնենք, որովհետև մեծն ժամանակը ուշացողներին պատմության անդունդը նետելու սովորույթ ունի և բնավ չի գիշում դրա համար: ■



Սփյուռքի գոյատևման երկու հարց

Վարդան Յակոբեան
Գիվանազետ, վերլուծաբան

Փոփոխությունները, որ վերջին 30 տարիների ընթացքում տեղի են ունեցել հայկական սփյուռքում ընդգրկում են դրա կենսագոյության բոլոր բնագավառները: Անդրադառնանք դրանք պայմանավորող երկու, մեր կարծիքով հիմնական պատճառներին՝ հայաստանցիների արտագաղթին և ընդունող երկրներում տեղի ունեցող գաղափարաքաղաքական փոփոխություններին:

Մենք՝ խորհրդահայերս, պատկերացում էինք Սփյուռքը որպես եղեռնից փրկված արևմտահայերի օտար երկրներում հիմնադրած գաղութների Սփյուռք: Գիտեինք, որ այդ գաղութներում եկեղեցիներ ու դպրոցներ էին կառուցում, թերթեր ու գրքեր էին հրատարակում, և անում էին հնարավոր ամեն ինչը հայ մշակույթի և ասիմիլյացիայից խուսափելու համար: Ազգային կուսակցությունները տեղ էին կանգնում Հայ ժողովրդի պահանջատիրությանը, կազմակերպում էին պայքարը Հայ դատի արդար լուծման համար: Գիտեինք, որ հայկական գաղութները կարողացան կազմակերպել իրենց կենցաղը, ստեղծել համակցության ավանդույթներ, աշխույժ մշակութային կյանք: Չնայած Խորհրդային Հայաստանի հետ հարաբերվելու խիստ սահմանափակ հնարավորություններին նրանք հոգևոր, մշակութային խորը կապի մեջ էին հայրենիքի հետ, հպարտանում էին նրա նվաճումներով: Մենք՝ արևելահայերս էլ, մեր հերթին հետևում էինք Սփյուռքի կյանքին, հպարտանում էինք համաշխարհային հռչակ ունեցող անուններով, նրանց հայանվեր գործերով: Իսկ արցախյան ազատամարտի և Սպիտակի երկրաշարժի ծանր օրերին Սփյուռքի հոգևոր և նյութական օգնությունը մեր ազգային միասնության դրսևորման վառ ապացույցը դարձան:

Անկախության ձեռքբերումով ստեղծվեցին բոլոր հնարավորությունները մեր ժողովրդի երկու հատվածների միասնական ներուժը օգտագործելու մեր պետության կայացման ու զարգացման, մեր ազգային նպատակներն ու գաղափարներն իրականացնելու համար, այլ ոչ թե այն ծառայեցնելու օտարներին:

Սակայն իշխանության գլուխն անցած հայ լիբերալների միակ խնդիրն էր քանդել հին սոցիալ-տնտեսական համակարգը և կառուցել առաջադեմ ժողովրդավարական պետություն հիմնված եվրոպական արժեքների և շուկայական հարաբերությունների վրա: Քանդեցին հիմնովին: Խորհրդային արդյունաբերությունից, որին կնախանձեին եվրոպական շատ երկրներ ոչինչ չմնաց: Արդեն անկախացած հանրապետության ունեցվածքը թալանվեց, հազարավոր մարդիկ, սկսած բանվորներից և վերջացրած բարձրագույն որակավորման մասնագետներով դարձան գործազուրկ և բռնեցին արտագաղթի ճամփան: Իսկ մեր ժողովրդին միավորող նպատակներն ու գաղափարները, ոչ միայն մղվեցին ետին պլան, այլ դուրս դրվեցին պե-



տության օրակարգից: Ազգային գաղափարախոսությունը հայտարարվեց կեղծ կատեգորիա, Պահանջատիրությունը և Հայ դատը անիրականանալի հոխորտանք, Մեծ եղեռնի հիշատակը ընկճող լաց ու կոծ, սփյուռքահայերը նարինջ ուտողներ և այլն, և այլն:

Այսպիսի դիրքորոշումը բերեց արմատական փոփոխությունների ազգային գիտակցության և հոգեբանության մեջ, արժեզրկեց այն ամենը ինչ տասնամյակներով պատմության, գրականության (ոչ միայն հայ, այլև համաշխարհային) փաստագրական վկայությունների ու նյութերի միջոցով ամրագրվել էր մեր գիտակցության մեջ, դարձել մեր աշխարհընկալման հիմք: Հայ մարդը հայտնվեց մի վիճակում, որն այսօր ընդունված է անվանել կոգնիտիվ դիստանս, երբ իրերի, երևույթների իրական դասավորությունը փոխարինվում է իրականությանը հակասող դասավորությամբ, որի ընկալումը բերում է գիտակցության ներդաշնակության խախտման: Դիստանս է երբ իրեն Հայոց համազգային հռչակող շարժումը վարկաբեկում է ազգի սփյուռքյան հատվածը, երբ «Պայքար, պայքար մինչև վերջ» ասելով, իշխանության գալուց հետո փորձում է զրոյացնել և իմաստագրել այդ պայքարը: Դա անխուսափելի բերում է իրականության ոչ համարժեք ընկալման, ուստի և հոգեբանական դիսկոմֆորտի (անհարմարավետության): Կորցնելով իր հոգևոր աշխարհի ներդաշնակությունը մարդը իրեն այլևս չի ընկալում որպես ժողովրդի, հասարակության, պետության միավոր. օտարանում է դրանցից: Օտարանում է նաև Սփյուռքից, դիտելով այն միայն որպես միջոց օտար երկրում հիմնավորվելու համար:

Հիմա անդրադառնանք վերը նշած երևույթների հետևանքներին, որոնք անխուսափելի բերելու են խորը փոփոխությունների Սփյուռքի կյանքում:

Առավել նշանակալից է հայկական գաղութների կազմի փոփոխությունը: Եթե մինչև 80-ական թվականները գաղութները հիմնականում կազմված էին Մեծ եղեռնից փրկված ու իրենց հայրենիքից, տուն ու տեղից բռնությամբ վտարված հայերից ու նրանց ժառանգներից, ապա այսօր դրանցից շատերում մեծ թիվ են կազմում, եթե չասենք գերակայում են, Հա-

յաստանից արտագաղթածները: Անհրաժեշտ է նշել, որ հայաստանցիների ճնշող մեծամասնությունը արտագաղթում է ԱՄՆ (Կալիֆորնիա), Եվրոպա (Ֆրանսիա) և Ռուսաստան: Արդեն 90-ականների կեսերին նրանց թիվը հասնում էր 700 հազարի, իսկ այսօր կրկնապատկվել է: Սրանց թուրքը չի քշել իրենց տներից, սրանք ջարդերից չեն փախել, այլ իրենց կամքով, վաճառել են իրենց ունեցվածքը, թողել են տուն ու տեղը և տեղափոխվել են այլ երկրներ ավելի բարեկեցիկ կյանքի ետևից: Սրանք չեն եկել դպրոց ու եկեղեցի կառուցելու, Հայ դատ պաշտպանելու, ոչ էլ սփյուռքահայ դառնալու: Նրանք եկել են ամերիկացի, ֆրանսիացի, ռուսաստանցի դառնալու: Նրանց չի մտահոգել սեփական պետության կառուցումն ու հզորացումը: Դա դժվար գործ է և մեծ ջանքեր է պահանջում: Ավելի հեշտ է գնալ արդեն կայացած, հարուստ երկիր և վայելել դրա քաղաքացիությունը:

Մեր քաղաքացիներից շատերի մոտ, եթե չասենք մեծամասնության մոտ, «Դեպի երկիր» կարգախոսը սուզվել է գիտակցության հատակը վեր մղելը «Երկրից դեպի...» նպատակադրումը: Ցավալի է այս երևույթներից խոսել, սակայն green card ստանալու համար անվերջ հերթերը հենց դրա մասին են վկայում:

Ընդհանրացնելով ասենք, որ վերջին 30 տարիների ընթացքում Սփյուռքի կազմը արմատական փոփոխություններ է կրել: Նախ շեշտակի աճել է մարդկանց թիվը, որոշ գաղութներում, իսկ Կալիֆորնիայում և Մոսկվայում՝ կրկնապատկվել է (ցավոք չկա ստույգ վիճակագրություն դրա վերաբերյալ և ստիպված ենք ենթադրություններ անել ելնելով տարբեր աղբյուրներից): Հայաստանցիներով համալրված այս գաղութները իրենց հերթին հայտնվում են կոգնիտիվ դիստանսի մեջ: Համայնքի հիմնական գործառույթները՝

հայապահպանում, Հայ դատ հայաստանցիների կողմից պահանջարկ չունեն: Նրանք եկել են համակերպվելու ամերիկյան, ռուսական, կամ եվրոպական արելակերպին և արժեքներին, այլ ոչ թե ներառվելու համայնքի մեջ: Հայ ժողովրդի ինքնությունը, ազգային շահերը պաշտպանելու համար իմաստ ունի թողնել սեփական երկիրը և գալ դրանք պաշտպանելու օտար երկրներում: Այսինքն, կարող ենք ասել, որ օրինակ, Կալիֆորնիայում հայկական համայնքը բաղկացած է իրարից հասարակական գիտակցությամբ և հոգեբանությամբ տարբերվող երկու խմբերից:

Ինչ հետևանքներ կունենան նշված հակասությունները սփյուռքյան ավանդական կենսակերպի, գաղափարների, արժեքների վրա: Վերջապես ինչ ճակատագիր է սպասվում հայրենիքը թողած հայության այս հատվածին: Կկարողանա՞նք արդյոք ավանդական Սփյուռքը ներառել իր մեջ արտագաղթածների այս խումբը և գոնե նրա մի մասին փրկել ձուլումից, թե ինքը կույ կգնա նորեկներին:

Սփյուռքում կատարվող փոփոխությունների կարևոր պատճառներից է նաև Արևմուտքի երկրներում ընթացող լիբերալ-գլոբալիստական հեղափոխությունը: Լիբերալ-գլոբալիստական գաղափարախոսությունը հարվածում է քաղաքակրթության հանգուցային կետերին. պետությանը, ընտանիքին, ազգային ինքնագիտակցությանն ու արժանապատվությանը, ողջ արժեքային համակարգին: Այն չեղյալ է հայտարարում ռասայական, սեռական, էթնիկական տարբերությունները մարդկանց միջև, ջնջում է ժողովուրդների պատմական հիշողությունը: Հետևաբար այս գաղափարախոսությունը սպառնում է քանդել այն բոլոր հանգույցները, որոնք պահպանում են հայկական գաղութը որպես այդպիսին:

Իշխան Չիֆթճեանս
Վրանգներուն ընդատաց

Այս վրանգները, տկար կամ զորաւոր, չափազանցուած կամ ոչ, վստիճանաբանական գոյներով ներկուած կամ ոչ, բնականաբար սպառնալիք են, ոչ միայն հայութեան, և ոչ միայն սփիւռքահայութեան համար, ինչպէս կը նշուի վերը: Հարցը այն է, թե Հայաստանի կամ Սփիւռքի մէջ ինչ միջոցներ ձեռք կ'տանուին այս վրանգներուն ու սպառնալիքին դէմ կենալու համար, եթէ հարկ է, ընդունելու համար անոնց մարտահրաւիրները: Պարտաւարականութիւնը, ժամանակը, սպասումը և վրանգներուն ցանկագրումը, հոչակումը, կրկնութիւնը, մանաւանդ երբ «քանդումի» սպառնալիքն ալ կը նշուի, լուծումներ չեն. լաւագոյն պարագային՝ մակերեսային ախարաճանաչում կը մնան:



Ի վիճակի է Սփյուռքը դիմակայելու այս գլոբալ մարտահրավերներին, դժվար է ասել: Բարձրացված հարցերի պատասխանները գտնելու համար թերևս անհրաժեշտ է լրջորեն հետազոտել դրանք: Միաժամանակ, լավատեսորեն նշենք, որ կյանքն ինքն է թելադրում այն ճանապարհները, որոնք դուրս են բերել հայկական գաղթօջախները ծանրագույն վիճակներից: Օրինակներ պատմությունը պահպանել է: Ճիշտ է մեծ դժվարություններով ու կորուստներով, սակայն կարողացել են վերականգնվել մեկ այլ տեղում և վերարտադրել իրենց հայապահպան ատաքելությունը: ■

Սփյուռքահայ խորհրդարանի գործարկումը

Յարութ Սասունեան

HyeID կազմակերպության նախագահն է: Հայաստան Արցախ Հիմնադրամի նախագահը: California Courier թերթի հրատարակիչը

Մի քանի տարի առաջ աշխարհասփյուռ հայերի մի փոքր խումբ սկսեց ծրագրել ժողովրդավարական ճանապարհով ընտրված Սփյուռքի հայկական խորհրդարանի (DAP) հիմնումը: Այս բեկումնային նախաձեռնության մեկնարկը ծառայելու է բոլոր սփյուռքահայերին միասնական կառույցում ինտեգրելու համար: Երբ այս նպատակն իրականացվի, Սփյուռքի խորհրդարանի ղեկավարությունը և Հայաստանի ու Արցախի Հանրապետությունները՝ ընտրված իրենց ընտրատարածքների կողմից, կարող են առաջին անգամ պնդել, որ իրենք ներկայացնում են համայն հայությանը և կոլեկտիվ որոշումներ են կայացնում ողջ ժողովրդի անունից:



Նախաձեռնող խումբը ծրագրել է Սփյուռքի Հայաստանի խորհրդարանի ստեղծման երկքայլ գործընթաց.

Առաջին քայլ – HyeID

«HyeID» շահույթ չհետապնդող կազմակերպությունը, որն արդեն ձևավորվել է Կալիֆորնիայում, կընդլայնվի ամբողջ աշխարհի հայկական համայնքներով, այդ թվում՝ Հայաստանի և Արցախի Հանրապետություններում բնակվող հայերով:

HyeID կազմակերպությունն ունի երեք նպատակ. ա) Աշխարհի բոլոր հայերին, այդ թվում՝ Հայաստանին և Արցախին, նույնականացման HyeID քարտ առաջարկել, որպեսզի նրանք կարողանան օգտվել իրենց տրամադրվող զեղչերից:

բ) Քարտապանների մասին տեղեկատվությունը կձևավորի համաշխարհային հայկական տվյալների բազա:

գ) Սփյուռքի HyeID քարտապանները համարվում են գրանցված ընտրողներ Սփյուռքի Հայաստանի խորհրդարանի վերջնական ձևավորման համար:

4. HyeID զեղչային ցանցի ստեղծում;
5. DAP-ի ինքնաֆինանսավորում զեղչային ցանցի միջոցով.
6. Կոլեկտիվ տնտեսական բանակցությունների ուժ Երկրորդ քայլ – Սփյուռքի խորհրդարանը ձևավորվում է յուրաքանչյուր աշխարհագրական տարածաշրջանում անցկացվող տեղական ընտրությունների միջոցով: DAP-ի առավելություններն են.
 1. Արթնացնել Սփյուռքի լուր մեծամասնությանը.
 2. Ստեղծել սիներգիա գործող բոլոր հայկական կազմակերպությունների հետ.
 3. Սփյուռքին ապահովել ներկայացուցչական և հավաքական ձայնով և համահայկական խնդիրներին մասնակցելու կարողությամբ.
 4. Լուծել տեղի հայ համայնքի կարիքները.
 5. Ձևավորել արդյունավետ քաղաքական ազդեցություն.
 6. Պահպանել և առաջ մղել հայ ազգային ինքնությունը.
 7. Համակարգել և առաջ մղել Սփյուռքի, Հայաստանի և Արցախի ազգային նպատակները.
 8. Կազմակերպել հայրենադարձություն դեպի հայրենիք: ■

Իշխան Չիֆթնեան

Գործարարներու համախմբում

Թե՛ չարանի լիբանանահայր Մ. Նահանգներ հասարարուելէ շորջ կէս դար ետք, այսօր, Լոս Անճելէսի մէջ արևելահայերէն պիտի գրէ, կը նշանակէ, թէ մեր համայնքային կառույցներուն համար արևմտահայերէնը գորգորանքի առարկայ չէ դարձած: Արևմտահայերէնը արևելահայերէնով կը փոխարինուի մեր իսկ ձեռքով, ճիշդ ինչպէս յաճախ արևմտահայերէն թերթի խմբագիրներ Երևանի մէջ արևելահայերէն կամ «արևելահայերէն» կը խօսին իրենց հարցազրոյցներուն ընթացքին, արևմտահայերէնին զյանապով գոյութեան իրատնքը հոն ու ամէն տեղ, ուր զայն գործածելով անոր գոյութիւնը իշխեցնելը կենսական է: Արևմտահայերէնը արևմտահայերէն «գործածողին», ոչ թուրքին, ոչ ալ հայասարանցիին ձեռքով լուրթեան ու աղաստման կը մատուցի առաջին հերթին:

Նախագիծին բովանդակութիւնը շար ամփոփ է, շար բան հասկնալը դժուար է: Կրնամ սխալիլ, բայց ընդհանուր քաղաքական այն է, որ գործարարներու համախմբում տեղի պիտի ունենայ, ուր անդամներու համար զեղչեր կ'առաջարկուին: Առաջին զեղչաւոր արդէն արևմտահայերէնն է, ըստ երևոյթին: Բայց շար ողջունելի կը գրնեմ գործարարներու այս նախագիծը, ու շար անկեղծ: Ուրիշ նպարակներ չհետապնդող հասարակմանութիւն մը, որ մերն է ներկայիս, կրնայ շարով խանդավառուիլ անկասկած: Հարկաւ «համայնքային», «ազգային» հարցեր ալ նկարի առնուած են հոն, կարծես՝ փողափակի. տեսալ ու կարդացի: Մէկական փողի նշումով կը հասկնանք շարով, թէ ինչպէս լուծելի են այդ հարցերը...:

Քաջութիւնը ունենանք համարձակելու

Վագրիկ Բագի
Դոկտոր, Գերմանիայի քաղաքական և տնտեսական ոլորտների հաղորդակցական հարցերի գծով խորհրդական, դասախօս, բանաստեղծ

Ա) Սկզբունքներ

Սփիւռքը վերջին տարիների ընթացքին թուլացել է: Այժմ պետք է ինքը իրենով զբաղուի:

Սփիւռքի հարցը այսօր էսպէս արևմտահայութեան հարցն է: Արևմտահայութեան հարցը գոյութենական և հրատապ է:

«Սփիւռքը» միգամած հասկացություն է: Նաև Հայաստանում: Մեծամասնութեան համար Սփիւռքը «արտասահմանեան կեցավայր» է: Այս ըմբռնման պատճառով էլ սովետական ասանդութեան համաձայն խօսում է «Նոր Սփիւռքից» ու «Հին Սփիւռքից»՝ այնպէս ինչպէս խօսում է «Հին ու նոր ուղղագրութիւնից» կամ «Հին ու նոր հայ մշակոյթից»: Այս անականները ոչ թէ ժամանակային անականներ են, այլ գաղափարախօսական՝ հինը հնացածն է, մինչ նորը թարմն ու դալարը: Այս թիրքմբռնումից ու գաղափարախօսութիւններից պէտք է ձերբազատուել:

Սփիւռքը նախ և առաջ «կեցավայր» չէ, այլ «կեցածն»՝ իրեն իրայատուկ ժամանակով: Սփիւռքը ժամանակի հարց է և ոչ միայն վայրի:

Ինքնութեան ակունքը զգայական, զգացական և մտաւոր է: Մինչ վերջին երկուսի մասին յաճախ



խօսում է, առաջին տարրը մոռացուել է: Այդ տարրը պէտք է ուշադրութեան առարկայ դառնայ: Այդ պատճառով ինքնութիւնը, թէ անհատական և թէ հասարական, online չէ, այլ offline:

Զգայարանների համապարփակ կիրառումը էական է թէ՛ դաստիարակութեան թէ՛ համայնքային կեանքի և թէ՛ քաղաքականութեան համար: Սա մարդարանական տունայ է:

Իշխան Զիֆթճեան

(անդրադատնայով վերևի երկու պարբերութիւններուն)

Զգայարանները սոցցանց աշխարհին մէջ

Սփիւռքեան ներկայ ինքնութիւնը կրնայ զարգացում արձանագրել զգայարաններու բացակայութեամբ ալ, պարզապէս որովհետև ուրիշ միջոցներ կը պակասին. «անզգայարան» զգայի՝ շօշափելի արդիւնք կու տայ, որովհետև ցանցային աշխարհը, online ինքնութիւնը, խոհակիցներու ցանցային համախմբման կարելիութիւնը, համագործակցութեան ուժականութիւնը ամէն արդիւնք կարելի կը դարձնեն: Շօշափելի փաստը մեր կայքէջն է՝ ՀԱՅԵՐԲԷՆ BLOG (<https://hayerenblog.wordpress.com/>), որ շուրջ եօթուկէս փարիէ ի վեր ամէն օր 20 երկիրներու մէջ քնակող անձերու կամ «ցանցային ինքնութիւններու», եթէ կ'ուզէք, - որոնց ջախջախիչ մեծամասնութեան միջև ծանօթութիւն չէ եղած սկիզբէն, էջին միջոցաւ ծանօթացած են, - հետք յարաբերութեան արդիւնքը կը մարտնչէ, ստորեայ դրութեամբ ամբողջովին անտիպ նիւթեր փետադրելով: Հարցը միայն փետադրումով չէ որ կը սկսի կամ կ'աւարտի, այլ (ամբողջովին սոցցանց) խորհրդակցական, մտքերու փոխանակման, ծրագրերու մշակման աշխարհաբով: Ասիկա կը «լուծէ», հարկաւ մասամբ, աշխարհագրական, սփիւռքեան հեռաւորութիւններու հարցը: Հողի ու հայրենիքի բացակայութիւնը չի խանգարեր, որ միտքերը յարաբերին կամ միանան: Եթէ չըլլար ցանցը, հազարաւոր էջեր պարունակող մեր էջը և անով զոյսացած ցանցահիւս կապահանդէտ գոյութիւն չէին ունենար երբէք: Եւ կը յուսամ, որ մարդարանութենէ ու մարդկայնութենէ դուրս չենք եկած, գոնէ մեր փետադրն ու համոզումները յառաջ փանելու աշխարհաբով սահմաններէն ներս:

Պարունական Հայաստանը իր արևելեան՝ պարսկական և արևմտեան՝ օսմանեան թերթով անձամբ այցելելու առիթներ յաճախ ունեցած են, սակայն հարկ է միաժամանակ անդրադառնալ, որ Միջօրեան Հ. Ղևոնդ Ալիշան երկու դար առաջ փաստը փոսած է անզգայարան հայրենագիրութեան ու հայրենասիրութեան:

Անկարելի է ի գործ դնել զգայարանները սփիւռքեան ցրտածութեան մէջ, եթէ համասփիւռքեան ուժերու լարում է մեր նպատակը, սակայն կարելի է սոցցանց ժողովում կարարել և արդիւնքի հասնիլ, «թէ դաստիարակութեան», թէ զարգացման, թէ «համայնքային կեանքի», թէ ալ «քաղաքականութեան համար»: Ձեր գործածած «կեցածն»ը նաև սոցցանց է Սփիւռքի մէջ: Կը մնայ որ համայնքներն ու գաղութները, միութիւններն ու կազմակերպութիւնները լուրջի առնեն այս պարագան, արթնան և գործեն նաև այս ուղղութեամբ, ոչ թէ միայն իրարու որպիսութիւն հարցնելու, դասական դասախօսութիւններ հրատնելու կամ քսակ քսակի քնելու, այլ պրոպեր աշխարհաբ մէջփետ քնելու առաջադրանքով:



Հինգ զգայարանների միջոցով կարելի է մանուկներին ընտելացնել, մտերմացնել հայ մշակոյթի հետ, որպէսզի երբ երեխաները մեծանան, այդ մտերմութիւնը հանգի հարազատութեան ու համայնքային աշխուժութեան:

Ստորև խօսում եմ միայն Արևմտեան, Եւրոպական Սփիւռքի մասին: Արևելեան Սփիւռքի հանգամանքները տարբեր են: Տարբեր են նաև Հայաստանեան դիտանկիւնից «ներքին Սփիւռք»-ի պարագանները:

Բ) Կիրառումներ

Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը և գործող արևմտահայ քիչ թէ շատ հաստատուն կազմակերպութիւնները թող միասնաբար մշակեն արևմտահայ մշակոյթը խթանելու մի ծրագիր: Իսկ Ամենայն Հայոց Կաթողիկոսութիւնը պէտք է սփիւռքեան ծովերում պաշտօնավարող հոգևորականներին յանձնարարի, որ իրենք յատուկ հոգատարութիւն ցուցաբերեն արևմտահայերի և արևմտահայերէնի նկատմամբ, հայթայթելով լեզուի ու մշակոյթի ուսուցման ու բանեցման միջոցներ:

Նկատի ունենալով, որ Հայաստանում արդեն մեծ թոով արևմտահայեր են ապրում, թող Հայաստանը արևմտահայերէնը պաշտօնապէս յայտարարի իբրև պետական երկրորդ լեզու: Սա թոյլ կը տայ, որ արևմտահայերը Արևելահայաստանում շարունակեն իբրև արևմտահայ ապրել:

Անհրաժեշտ է, որ վերաբացունեն Վենետիկի Մուրատ-Ռափայէլեան կամ Սևրի Մուրատեան վարժարանները: Նման երկրներում և նման քաղաքներում նման վարկ ունեցող հաստատութիւնները պէտք է վերածունեն՝ կրոնական ընտրանին կազմելու համար:

Ինչպէս գոյութիւն ունի գոյգ քաղաքների ըմբռնումը, նոյնպէս կարելի է գոյգ համայնքների ըմբռնումը կիրառել՝ ընդլայնելով աշխատանքային և, ինչու ոչ, ամուսնական տեսադաշտը:

Եւրոպահայ երեք համայնքներ կարող են միաս-

նաբար մի ծրագիր մշակել և Եւրոպական Խորհրդին դիմել նպաստ ստանալու համար: Նման նպաստները բազում են և օգտաշատ:

Հայութիւնը պէտք ունի քանակի: Թէ՛ Սփիւռքում և թէ՛ Հայաստանում: Ծննդաբերութիւնը պէտք է աճի: Քանակը որակ է բերում և որակը՝ ոյժ: Սփիւռքին անհրաժեշտ է իր աճը սատարող մի հիմնադրամ:

Արևմտեան Սփիւռքում մասնագէտ անհատներ, որոնք իրենց երկրների պետական կամ տնտեսական բնագաւառներում հաստատուած անձեր են, կարող են Հայաստանի Հանրապետութեան նախարարութիւններին իբրև խորհրդատու ծառայել: Հայաստանը հակում ունի կրոնական կառավարութիւնների ծրագրերը ընդօրինակելու, առանց իմանալու, թէ տուեալ երկրներում մինչև օրէնքի հաստատումը ինչ վիճակումներ են անցել, որոնք են եղել մասնագէտների թեր և դէմ պատճառաբանութիւնները: Այդ բովանդակային պատճառաբանութիւնները Հայաստանի համար աւելի կարևոր են քան փոխզիջումների և ներքին քաղաքական նկատառումների հիման վրայ խորհրդարանների ընդունած օրէնքները: Սովորել՝ այո, ընդօրինակել ոչ:

Յիշենք Կոստան Զարեանի իմաստուն խօսքը՝ «Քաջութիւնը ունենանք համարձակելու» (Նաւատումար, էջ՝ 224): ■



«Կլոր սեղան»-ին անաթոռ մէկ տեղէն (Սփիւռքէ մը անդրադարձներ)

Գառնիկ Ա. Ք. Գոյունեան

2000-էն՝ Մոնթրէալի Ս. Յակոբ Եկեղեցոյ հովիվն է, հայ գրի ու մշակոյթի սպասարկու մը

Ա.

Գրակցութեան նամակը սա հաստատումով կը սկսի. «Գաղտնիք չէ, որ վերջին տարիներին ու տասնամեակներին Սփիւռքի հիմնահարցերը անելի խորացել են, փոփոխութիւններ են կրել, ինչպէս և առաջ են եկել նորերը: Միաժամանակ գրեթէ բացակայում են այս հիմնահարցերի ամբողջական, անաչառ ու խորքային քննարկումները»:

Նախ կ'ուզեմ հարց տալ՝ թէ ինչ է «հիմնահարցեր» բառով հասկցուածը:

Կ'ենթադրեմ՝ նամակին հետևած «Առաջարկ կլոր սեղանի / Սփիւռքի զարգացումը» վերնագրութեան ներքևի հարցումները և կցեալ կէտերը (1, Ինչպէ՞ս զարգացնել Սփիւռքը՝ ի խնդիր «իր» ինքնութեան պահպանման, Հայ դատի հետապնդման, և հայրենիքի հզօրացման. 2, Սփիւռքի զարգացման համար ինչպէ՞ս համախմբել անոր ներուժը՝ մասնագիտական, երիտասարդական-ուսանողական, Հայաստանէն արտագաղթած և «հայ կեանքէն հեռու» մնացող զանգուածներու. 3, Ինչպէ՞ս կանխարգիլել Հայրենիքի հետ խզումը, հետևանք՝ պարտութիւններու ու անձնատուութիւններու, Հայաստանի իշխանութիւններու Սփիւռքի նկատմամբ վարած քաղաքականութեան, ձուլման. 4, Սփիւռքի վերակազմակերպումը ինչպէ՞ս կրնայ ընթանալ կառավարման-վարչական, կրթական-մշակութային-գիտական, տնտեսական ոլորտներուն մէջ. 5, Որո՞նք կրնան հանդիսանալ գլխաւոր դերակատարները. Ազգային կուսակցութիւնները, Եկեղեցին (ընդունելով հանդերձ Հայ եկեղեցոյ յարաբերաբար մեծ դերը, նախընտրելի պիտի ըլլար՝ «յարանուանութիւններ» բառը օգտագործել), այլևայլ կազմակերպութիւններ, ու անհատ ազգայիններ. 6, Սփիւռքի ամրապնդման մէջ ինչ դեր կրնան խաղալ ազգային ռազմավարութիւն ունեցող հայրենի պետականութիւնը, հասարակական կազմակերպութիւններն ու ստեղծագործական, կրթական ու գիտական հաստատութիւնները:

Հարց կու տամ, և կ'ենթադրեմ. ինչ հասկնալ «վերջին տարիներ»-ով ու «տասնամեակներ»-ով: «Վերջին տարիներ»-ը շատ հաւանաբար «յեղափոխութիւն» պիտակուածին հետևող տարիներն են: Իսկ «տասնամեակներ»-ով՝ Արցախեան շարժմամբ և Հայաստանի վերանկախացմամբ սկսած ժամանակը: Ուրեմն, այն տասնամեակներուն և տարիներուն մէջ «հիմնահարցեր»-ը խորացել են, փոփոխութիւններ կրել են, և նորերը «առաջ են եկել»: «Վերջին տարիներին» կապակցաբար, թերևս կարելի է ըսել՝ թէ Սփիւռքի հիմնահարցերուն վրայ գրեթէ կը բացակային ամբողջական, անաչառ ու խորքային քննարկումներ: Բայց «վերջին...տասնամեակներին» կապակցաբար՝ ան-



կարելի է ըսել: «Վերջին տարիներին»՝ կապակցաբար, թերևս կարելի է ըսել», գրեցի, որովհետև լոկ Խաչիկ Տէր Ղուկասեանի յօդուածներն իսկ՝ կ'անդրանցնեն ժխտական հաստատումը:

Հարց մը ևս. ինչ ըսել կ'ուզե՞ք գրեթէ բացակայում են այս հիմնահարցերի ամբողջական, անաչառ ու խորքային քննարկումները» հաստատումը: Չեմ հասկնար «ամբողջական»-ին ինչ ըլլալը, ինչ ակնկալելը: «Անաչառ»-ը ընդհանրապէս արդար կը տեսնեմ, և մասամբ՝ անարդար (և որակաւորը «մասամբ»-ին մէջն է): «Խորքային»-ը՝ նոյնպէս:

Կը կարծեմ, որ բացի տնտեսական քննարկումներէ՝ նկատի առնուած բոլոր «հիմնահարցեր»ուն մասին ամբողջական, անաչառ ու խորքային քննարկումներու ծաւալուն աւանդ մը ունինք: Դժբախտաբար՝ բոլորն ալ լոյստեան երկրին քնակիչներ են: Անկասկած, Սփիւռքի (անուանական ամբողջութիւն մը) «հիմնահարցեր»-ը նախքան Արցախեան շարժումը կային որպէս խիստ ու տագնապալի խնդիրներ: Եւ կային անոնց լուծման առաջարկներ՝ գաղափարաբանական-հրապարակախօսական գրութիւններով կատարուած, բայց նաև կատարուած վերլուծումներով: Յետ Շարժման, խիստ ու տագնապալի խնդիրները անելի խորացան, անելի բարդացան:



Այնուհանդերձ՝ գաղափարաբանական-հրապարակախօսական գրութիւնները շարունակեցին իրենց ճամբաները, նոյնպէս սակաւ (այս «սակաւ»-ը հատորներու շարք մը կրնայ լեցնել) վերլուծումները: Թե՛ գաղափարաբանական-հրապարակախօսական, և թե՛ վերլուծական գրութիւնները «ձայն բարբառոյ յանապատի» մնացին, և դեռ՝ կը մնան... Ընդհանրական խլութիւնը ինչպէ՛ս լսէ:

Իշխան Չիֆթճեան

(անդրադառնալով վերնի երկու պարբերութիւններուն)

«Ճմլել լեզուա...»

Հրապարակագրութիւն, վերլուծումներ, տեսութիւններ, առաջարկներ, բազմափորձ հարցեր, բազմափորձ էջեր կամ առցանց տեղադրումներ – երբ չեն սասնորհի, սերունդէ սերունդ չեն անցնիր, շրջանառութեան մէջ չեն մտնել, տեղ չեն գտնուիր գոնէ մտաւորական խափ միտքին, հասարակական ու անհատական գիտակցութեան մէջ, կը մնան խոյ աշխարհի «բնակիչներ»: Վերլուծողը, հրապարակագիրն ու տեսարանը՝ մտաւորական դասակարգը, իր նեղ շրջանակին մէջ մնալով, առանց սրտեղծելու հեղափոխութեան շրջանակներ, – վերէն կամ վարէն թելադրած կամ ընդհանրապէս չթելադրած, – որոնք գաղափարներուն կրիչներն ու քննիչները ըլլալու են, առաւել կամ նուազ չափով, Սփիւռքի հարցերը կը հեռացնէ, փոխանակ պարզացնելով մօտեցնելու, գէթ մասամբ, բնկալող հարուածի մը, այդ հարուածին կազմաւորումն իսկ յառաջացնելով: Ասիկա կը վերաբերի քիչ թէ շատ բոլոր ժամանակներուն: Բարկաւոր են այն ժամանակները, երբ նման հարցերով հեղափոխութեան շրջանակը լայն եղած է:

Երբ Սփիւռքի հարցերը մնալուն ուշադրութեան ու քննարկման առարկայ չեն դառնար, ամէն անգամ պարտաւոր կ'ըլլանք գերդէն սկսելու, որովհետեւ կամ նախորդ սերունդին մտածման ծանօթ չենք, կամ ալ այդ մտածման ծանօթ ըլլալով հանդերձ զայն գիրի սահմաններուն մէջ պահած ենք, ցարդ գործնական որևէ արտայայտութիւն չենք տրած անոր, ու ան չմարմնաւորած, վերացական յաճում մնացած է, ու իբր հում նիւթ կայ:

Հում նիւթը ի գործ արկանելը ճահիճին ու իշխանութեան բանալի տարու պէս դժուար է: Կը դիմեմ Ս. Ներսէս Ընդհալիի «Թողջ Ընդհանրական»ին մէջ առաջարկուած փորձին. Աստուծոյ խօսքին կաթը, կը գրէ ան, նախ պէտք է կակոզնես, որ անելի դիրութեանք համբերեսի. «...ճմլել լեզուա զկաթն բանին Աստուծոյ ի բերանս հոգոց տղայացելոց ի Քրիստոս»: Երբ ճմլումի այս աշխարհաբար հաղորդոյ ու բաշխուի, այսինքն հաղորդող տարր գոյանայ, ոչ միայն գրով, այլև բանի ու գործով կարարութի՝ այն արեւն Սփիւռքը կրնայ ոչ միայն ինքզինք մտածել, այլև սարիլ կամ ըլլալ ի վերջոյ:

«Ինչպէ՛ս զարգացնել Սփիւռքը՝ ի խնդիր իր ինքնուրոյն պահպանման», հարց տրուած է:

Ուրեմն՝ Սփիւռքը ունի «իր» ինքնութիւնը, որ պէտք է պահպանուի զարգացման եղանակով մը:

Բայց ինչ է Սփիւռքի ուրոյն ինքնութիւնը: Ինչ է Սփիւռքը:

Փակագիծով արդէն նշեցի, թէ անիկա անուանական ամբողջութիւն մըն է: Ուրուագրած են անունին մեր մօտ ծագման և զարգացման պատմութիւնը: Կարելի է զայն գտնել «Հորիզոն» շաբաթաթերթի յաւելումով «Սփիւռքի տարի» թիւին մէջ, լոյս տեսած 2022-ին, Հովանաւորութեամբ Գանատայի հայոց թեմին, (էջ 35): Անուանական ամբողջութիւն մըն էր Սփիւռքը, իսկ այժմ՝ առաւել ևս է, մասնաւոր աւանդական Սփիւռքի վախճանէն առդին: Արդար է ըսել, որ Արցախեան շարժումը ամբողջութիւն մը ըլլալու զգացում մը և գիտակցութիւն մը բերաւ, հատուածներուն միջև համագործակցութիւն մը յառաջացուց, թէպէտ՝ մակերեսային: Սակայն, պատմութեամբ այս օրերուն, նօսրացած են այն զգացումն ու գիտակցութիւնը, և յուսախաբութիւնը և անգործութիւնը կը տիրեն ամենուր:

Սփիւռքը ամբողջութիւն մը չէր, և չէ, բայց իրականութիւն մըն էր և է: Բարգէն Փափագեան «ճոր կ'երթայ Սփիւռքը» հարցումի մը՝ հարցումով պա-

տասխանած էր, ըսելով.– [...] Ո՞ր Սփիւռքը... կ'ըմբռնեն անշուշտ որ Հայաստանէն դուրս, Խորհրդային Միութեան տարածքէն (այս մտքի գրառման օրերուն՝ այդպէս էր ընկալումը - ԳԲ) դուրս գտնուող աշխարհացրի հայ բազմութեանց մասին է հարցը, սակայն ստիպուած են հարցնելու՝ «Ո՞ր սփիւռքը... գանատականը, ամերիկեանը, Հարաւային Ամերիկայի սփիւռքը, Ֆրանսայի սփիւռքը, Յունաստանի սփիւռքը, Աստրալիոյ սփիւռքը, Եգիպտոսի, Յորդանանի, Սուրիոյ, և Լիբանանի սփիւռքը» ...որովհետև չկայ մէկ Սփիւռք. կայ՝ անուանապէս, արուեստական անուանակոչումով մը [...] մինչ իրականութիւնը, ամէն օր քիչ մը անելի շեշտուած ձևով կը զգացնէ, թէ Սփիւռքի գանազան գաղութները յար և նման չեն իրարու. Ոչ քաղաքական, ոչ տնտեսական, ոչ մշակութային պայմաններով. ոչ իսկ՝ հոգեբանութեամբ և մտայնութեամբ:

Յիբաի, Սփիւռքը ամբողջութիւն մը չէր և չէ: Կը կրկնեմ՝ բայց իրականութիւն մըն էր և է: Կրնայ ձգտիլ, տքնելով գէթ կրնայ հասնիլ կառուցային ամբողջութեան մը, այսինքն՝ ի մտի ունիմ առկայ և ստեղծելի կառոյցներուն ընդհանուր համագործակցութիւնը, անոնց վարչական մարմիններուն, և կառոյցներուն շուրջ բոլորուած և բոլորող բազմութիւններուն մեր-



ձեցումը: Այո՛ կառուցային ամբողջության մը, և ոչ՝ կատարեալ ամբողջության, որ ընդգրկէր բոլոր հայերը... մինչև ծագումով այն հայերը, որոնք կամայ թէ ակամայ, գիտութեամբ թէ անգիտութեամբ հրաժարած են հայ ըլլալու «մեղք»-էն, և կամայ թէ ակամայ, գիտութեամբ թէ անգիտութեամբ՝ յանձնուած հայ չըլլալու «նուազ մեղք»-ին: Հայութիւն համարուածին մեծագոյն մասը դուրսը պիտի ըլլայ կառուցային ամբողջութենէն: Այսպէս կ'ըլլայ Սփիւռքը, աւելի ճիշդ՝ այսպէս կ'ըլլան հայ սփիւռքները (և ո՛չ միայն «հայ սփիւռքներ»ը) ցարդ:

Անամբողջ մը՝ ինքնութիւն կ'ունենայ: Բայց ինչ է «ինքնութիւն»ը:

Թէև «ինքնութիւն» բառը շատ կը գործածուի, և սովորաբար կը թուի պարզ ըլլալ, բայց բարդ կամ «առեղծուածային» բառ մըն է,– ինչպէս կ'ըսէ պրոֆ. Բարիս Թէօփէօլեան: Ըստ իրեն, բարդ կամ «առեղծուածային» է՝ որովհետև տարբեր գիտակարգեր զայն փորձած են և կը փորձեն սահմանել իրենց բառամթերքով, ենթադրեալներով և մեթոտներով: Անիկա համաստեղութիւն մըն է, զոր այլազան գործօններ կը կազմաւորեն: Այն գործօններուն սուրբ երրորդութիւնը կը կազմեն՝ տարբերութիւնը, նոյնութիւնը և յիշողութիւնը: Նկատի ունենալով՝ որ «ինքնութիւն» բառը անձին նոյնութեան իմաստը ունի, փորձութիւն մը պիտի ըլլար կարգը դասաւորել այսպէս՝ նոյնութիւն, տարբերութիւն և յիշողութիւն: Բայց հարկ է հետևիլ մտաւորականին տրամաբանութեան:

Տարբերութեան գործօնը: Տարբերութիւնը ինքնութեան «հիմնաքար»-ն է: Ինչո՞ւ: Իր լուսաբանութիւնը. «Իւրաքանչիւր մանուկ և պատանի, կամայ թէ ակամայ, որոշ չափով կ'ընդունի, կը հնազանդի և ուրեմն անոր ինքնութիւնը կը կառուցուի հաւաքականութեան ու պետութեան նախընտրած կաղապարներու հետեւողութեամբ»: Այսինքն՝ իւրաքանչիւր անհատի ինքնութիւնը կը կառուցուի իրմէ դուրս ձևաւորուած տարբերութեան, կարելի է աւելցնել նաև՝ տարբերութիւններու կաղապարներով: Արտաքին տարբերութեան

կամ տարբերութիւններուն ձևաւորիչ կաղապարները կը մասնակցին «անհատական ինքնութիւն» կոչուած ներքին երևոյթին կառուցման: Այլևս արտաքին տարբերութիւնը կամ տարբերութիւնները անհատի «սահմանին...դուրսը» չեն գտնուիր միայն, այլև՝ ներսը: Այս մտքին համար ինքզինքը առաջարկած է որպէս օրինակ, և այսպէս՝ «Ես հայ եմ, ունիմ հայու ինքնութիւն: Կը կարծեմ՝ այո: Սակայն ամերիկացի եմ: Նորէն՝ այո. այսինքն՝ առօրեայիս ընթացքին իբր համալսարանի անգլիախօս փրոֆեսէօր, միայն մակերեսայնօրէն ամերիկացի չեմ խաղար: Ամերիկեան ինքնութիւնը զգեստ մը կամ դիմակ մը չէ միայն, որ առտուն կը հագնիմ և երեկոյեան կը հանեմ: Ամերիկեան որոշ արժէքներ՝ իմ ալ արժէքներս են, վարուելակերպեր՝ նոյնպէս: Այլ խօսքով՝ օտարը, տարբերը միայն դուրսը չեն, այլև՝ ներսը, մասնիկ ու բաղադրիչ ինքնութեան մը, որ թէ՛ հայկական է, թէ՛ ամերիկեան»:

Սփիւռքի տարտղնուած վայրերուն մէջ, հայ հաւաքականութիւնները ենթակայ են իրենց միջավայրերու և պետութիւններու հոգեբանական, կրթական, ընկերային, մշակութային, քաղաքական և տնտեսական զօրաւոր ազդեցութիւններուն: Այն ազդեցութիւնները երկուութիւն կը ստեղծեն. անձ մը, որ թէ՛ հայ է և թէ՛ օտար միաժամանակ: Սփիւռքի տարբեր վայրերուն մէջ ապրող հայերը իրարմէ տարբեր հայեր են: Ուրեմն կարելի է հետևցնել, թէ տարբեր վայրերու հայ հասարակութիւններն ալ իրարմէ տարբեր հայ հասարակութիւններ են:

Նոյնութեան գործօնը: Անիկա այլոց հետ, հասարակութեան մը հետ յատկանիշերու, արժէքներու և փորձառութիւններու բաժնեկցութեան կը վերաբերի: Անհատներ «կը հաւատան», որ իրենք ուրիշներու հետ «կը կիսեն հասարակաց որոշ յատկանիշեր», արժէքներ և փորձառութիւններ: Անոնց բաժնեկցածները «կրնան ըլլալ ֆիզիքական, կրթական, յաճախ պատմական, օրինակ՝ ցեղասպանութիւն մը, բնաջնջման վտանգը, վերապրելու փորձառութիւնը, խոցը»:

Ըստ այս մտքին՝ կարելի է ըսել, թէ Սփիւռքի տարբեր վայրերու հայ հասարակութիւններուն նոյնութիւնը կը հիմնուի հաւատքին վրայ, թէ այլ վայրերու հասարակութիւններուն հետ հասարակաց յատկանիշեր, արժէքներ և փորձառութիւններ «կը կիսեն»: Կը խորհիմ, որ քանի յատկանիշեր, արժէքներ և փորձառութիւններ յաիտենական և անփոփոխ իսկութիւններ չեն, ուրեմն՝ տարբերութիւններ են, ապա՝ նոյնութեան գործօնը ևս էապէս տարբերութեան գործօն մըն է: Նոյնութեան գործօնը անմիջականօրէն կապուած է յիշողութեան գործօնին,– կ'ըսէ:

Յիշողութեան գործօնը: «Հաւաքական փորձառութիւններ, ըլլան անոնք ահաւոր, ինչպէս ցեղասպանութիւնը, կամ փառաւոր նուաճումներ, միայն զանոնք ապրող սերունդի փորձառութիւններ չեն»,– գրած է: Պատումներու և պատմագրութեան «զօդուած ճիգերու շնորհիւ»՝ փորձառութիւններու յիշողութիւնը կը հիմնաւորէ այլ սերունդներու յիշողութիւնը, զոր ամերիկեան մասնագիտական լեզուն «postmemory» կ'անուանէ: Ինք եզրը թարգմանած է «յետյիշողութիւն»:



Այս յիշողութիւնը է «անձի մը չապրած փորձառութեան յարատևումը»: Յիշողութեան գործօնը «արուեստական» է, կ'ըսէ: Կը հասկնամ՝ կը ստեղծուի: Քանի կը ստեղծուի՝ ապա տարբերութիւն կը ծնի:

Ինքնութիւնը ասոնցմէ՛ զատ այլ գործօններու ալ ազդեցութեան տակն է: Ինչպէ՛ս՝ ազգականական կապեր, կրօնք, լեզու և այլք:

Նկատի ունենալով, որ Սփիւռքի տարբեր վայրերու հայերը իրարմէ՛ տարբեր հայեր են, և հասարակութիւնները իրարմէ՛ տարբեր հասարակութիւններ են՝ կարելի է մէկ ինքնութեան մասին խօսիլ: Սփիւռքը բազմինքնութիւն է, միշտ այլացող բազմինքնութիւն, նաև՝ առհասարակ՝ միշտ այլայլող բազմինքնութիւն:

Միս կողմէ, մեկնաբանելով և տարակարծաբար տարբերակելով Վահէ Օշականի հայեացքը, կը խորհիմ, որ սփիւռքեան բազմինքնութիւնը միշտ դէպի «ներս» (դէպի հայրենիք, դէպի անցեալի արժեհամակարգ) և դէպի «դուրս» (դէպի նորաստեղծելի հայրենիք, և արարելի նոր արժեհամակարգ) ձգտման մէջ է: Միայն դէպի «ներս» ընթացումը սփիւռքեան չէ, այլ՝ հակա-սփիւռքեան է: Բացարձակապէս դէպի «դուրս» ընթացումը՝ նոյնպէս: Սփիւռքեան կացութիւնը միայն «ներս»-ին համար չի կրնար ըլլալ, չի կրնար ըլլալ նաև՝ միայն «դուրս»-ին համար: Անոր կեանքը՝ ուրոյն լինելակերպեր և լինելութիւն կը պահանջէ: Կրօնա-վախճանաբանական լեզուով՝ Նոր երկիրք և Նոր երկիր:

Իսկ Յակոբ Պալեան գրած է, թէ «այլևս չկայ Սփիւռք, կան Սփիւռքներ, հոգեբարոյական տարբերութիւններով (...), որոնք հետզհետէ պիտի դադրին շարունակութիւն ըլլալէ»: Ուրեմն՝ այլևս չկայ մէկ ինքնութիւն, կան բազում ինքնութիւններ, որոնք, հաւանաբար մեծաւ մասամբ, դադրին «շարունակութիւններ» ըլլալէ: Փոքրամասնութիւն մը պիտի մնայ, մնացողը մը, որուն համար շուրջ 500 տարիներ (ըստ իր վերջին նախատեսութեան) տուած էր Վ. Օշական:

Ինքնութեան պահպանում:

Նախ՝

դարձեալ մէջբերում մը Բ. Փափագեանէ. «...երբ հայապահպանումը կ'ըմբռնուի միայն անցեալին կառչելու, անցեալով ապրելու, անցեալը կրկնելու պարտադրանքի ձևին տակ, ազգային նկարագրի ստեղծագործական ուժեղ թափը կը պակսի, կը թմրի ու կը յա-

ռաջանայ ազգային նկարագրի աղաւաղում: [...] Ճիշդ է պահանջել աւելի ուժական ձևի հայապահպանում մը, անցեալին օգտագործումը ներկան իմաստաւորող կենսունակութեամբ մը»:

Ապա՝

Պահպանել դ՛ր ինքնութիւնը, երբ Սփիւռքը բազում ինքնութիւններու կազմաւորման տեղն է: Եւ վերջը՝ պահպանելը կարելի չէ նպատակի վերածել: Պատմութիւնը և մշակութային աւանդը սփիւռքեան վայրերուն կամ սփիւռքներուն մէջ ստանձնելով, յանձնառու ըլլալով անոնց, քննասիրելով զանոնք, ստեղծագործելով անոնց ատաղձին օգտագործմամբ, մտքի ու որակի լոյսով մեկնաբանելը՝ ինքնութիւններուն կը մատուցեն հասարակաց արժէքներ և փորձառութիւններ, որոնց կազմակերպ շրջանառութեան դրուելուն և իրացուելուն պարագային՝ տարբեր վայրերուն կամ սփիւռքներուն միջև հասարակաց յատկանիշեր տեղ կը գտնեն: Բայց թէ՛ յատկանիշերը, թէ՛ արժէքները, թէ՛ փորձառութիւնները և թէ՛ այլ գործօններ բազմինքնութիւնը չեն կրնար բառնալ, որովհետև տարբերութեան ուժը հզօր կը բանի:

Ինչպէ՛ս զարգացնել Սփիւռքը...

Հարկ է «անհրաժեշտ մեքենան» ստեղծել և շարժման մէջ դնել,– պիտի ըսէր Մանասէ Կ. Սևակ: Ան «անհրաժեշտ մեքենան» ըսելով՝ հասկցած էր քաղաքական վերին համասփիւռքեան մարմին մը, որուն պաշտօնը պիտի ըլլայ բանաձևել «աշխարհայեացք մը», զծել «գործունէութեան ուղիներ», ստեղծել պատմագիտական ուսումնասիրութեանց կեդրոն մը, որ նպատակը պիտի ունենայ հայ մատենագրութեան արժէքներուն, քաղաքակրթական տուեալներուն թարգմանութիւնը, վերլուծումը, համադրումը և տպագրումը մէկէ՛ աւելի կրոպական լեզուներով, թէ՛ օտարներուն և թէ՛ հայ նոր սերունդներուն համար. հայկական հարցերու ուսումնասիրութեան և հրատարակութեան կեդրոն մը, ուր պիտի ուսումնասիրուին, մտածուին և գրուին հայասպանութեան մասին և հայ քաղաքակրթութեան արժէքները «բացայայտուին». այս կեդրոնին մէջ նաև տեսած էր հայ և օտար օրէնսգէտներու «մարմին» մը (կրնար ասիկա որպէս անկախ մարմին տեսնել), որ պիտի հետապնդէ «հայ իրաւունքներու դատը». գաղութապահպանման ուսումնասիրական կեդրոն մը, ուր «իմաստուն միտքերը յղանալու են Ազգային պատկանելիութեան լուսամիտ հրահանգներու գիրքը, և զանոնք ապրելու և գործադրելու միջոցներուն ցուցմունքները»: Մանասէ Կ. Սևակ գիտնական մըն էր, և իր տեսած «անհրաժեշտ մեքենան» ցնորք մը չէր, այլ իրականանալի տեսլական: Բայց տեսանողներուն խօսքերը դժուար կ'իմացուին, կամ չեն իմացուիր «ականջ չունեցող»ներու թափառումներուն մէջ...:

Հայ դատի հետապնդում:

Բացայայտ է, որ Արցախեան 44-օրեայ ճակատամարտն ու պարտութիւնը, և Հայաստանի ներկայ

իշխանություններուն քաղաքականությունը մեծ հարուստներ եղան Հայ դատի գործունեութեան: Եւ՝

- Ատեն մը «քաղաքականացում» եզրը շատ կը գործածուէր: Բայց հասարակութեան և մանաւանդ նոր սերունդին քաղաքականացումը միայն բաւարար չէ Հայ դատի գիտակցումը և որակեալ հետապնդումին համար: Մանասէ Կ. Սևակի «անհրաժեշտ մեքենան» նաև այդ կ'ըսէ: Քաղաքականացումը այդ մեքենային բանաձևելիք գործունեութեան մէկ ուղին կրնայ ըլլալ և չի կրնար անգիտանալ կամ անտեսել մեքենային գործունեութեան միւս ուղիները:

- Քաղաքականացումը միայն քաղաքական կեցնածքներ ունենալով, կրկնելով կամ կարգախօսներ յայտարարելով կ'ըլլայ: Չ'ըլլար: Իրաւ քաղաքականացումը՝ գիտութեամբ քաղաքականացումն է: Եթէ նախապէս Հայ դատը առհասարակ կը հետապնդուէր սիրողականօրէն, այլևս կարելի չէ այդպէս շարունակելը: Մտաւորականը հայ և օտար օրէնսգէտներու վերին մարմինի կարևորութիւնը ցոյց տուած է: Այն մարմինին հետ հարկատու է նաև ունենալ քաղաքագիտութեան մասնագէտներու վերին մարմին մը, կ'աւելցնեն:

- Հայ դատը հատուածականօրէն հետապնդելը՝ ապարդիւն գործունեութիւն մըն է: Անձնամիսթաբանք:

- Միջ-կուսակցական իրարամերժութիւնը (ներկայիս՝ քողարկում) և ներկուսակցական պառակտումները ինչպէ՛ս Հայ դատ հետապնդեն: Տունդ երբ բաժան-բաժան է, նախ այդ հարցը պիտի լուծես: Կը փորձուիմ յիշելու Հեթում Պատմիչի դրուագը, ուր սարսափելին Ճէնկիզ խան իր զաւակներուն «մէկ սիրտ և մէկ հոգի» ըլլալու խրատը կու տայ: Ճէնկիզ խանէն եթէ մենք տրվելիք չունինք, Ճէնկիզխանեանները արդէն տրվելու վրայ են...

Հայրենիքի հզօրացում:

Կը հաւատամ, որ «անհրաժեշտ մեքենան» եթէ ստեղծուի՝ իր նպաստը կրնայ ունենալ, նաև անշուշտ՝ եթէ Հայաստանի գերակայութեան բարդոյթը զայն չմերժէ: Նոյնպէս կրնան ունենալ նախա-«անհրաժեշտ մեքենան» յանձնառութիւնները, որոնք սակայն յանտեսումն և ի հեճուկս Սփիւռքին կամ սփիւռքներուն պէտք չէ ըլլան: Միտք մը կը զարգանայ տրամախոհութեամբ և կը հաստատուի: Նմանապէս, ազգ մը (պետականատուր և անպետութիւն) կը զարգանայ տրամախոհութեամբ և կը զօրանայ: Եղիշէ Չարենց գրած էր, թէ հայութեան փրկութիւնը իր «հաւաքական ուժի մէջ է»: Կը մտածեն, թէ փրկութիւնը՝ ոչ, բայց դժուարութիւններու, արգելքներու և սպառնալիքներու յաղթահարումը, ապա և՛ այժմակերտումը, որ ապագայակերտում է՝ այդ:

Բ.

Շարունակութիւնը՝ կարճ պատասխաններով:

Հ. Սփիւռքի զարգացման համար ինչպէ՛ս համախմբել Սփիւռքի ներուժը:

Պ. Վանողական հոգեբանութենէ հրաժարելով,

մանրախնդիր չըլլալով, սեփական պատերը յաղթահարելով, մասնագիտական հետևողական աշխատանքներով, մատչելի ընծայուելով, սատարելով, համագործակցելով:

Հ. Ինչպէ՛ս կանխարգիլել Հայրենիքի հետ խզումը:

Պ. Ֆեսթիվալական հայրենասիրութիւնը պատրաստութեան կը տանի, ուստի՝ խզման: Աճեցնել, զարգացնել մշակութային հայրենասիրութիւնը, որ է մշակութասիրութիւնը, մշակութաստեղծումը, որով հետև մշակոյթին մէջ են կենդանութեան շունչը, զօղիչ զօրութիւնը և կանգնումի գիտութիւնը:

Հ. Սփիւռքի վերակազմակերպումը ինչպէ՛ս կրնայ ընթանալ:

Պ. Կառավարման-վարչական ոլորտին համար, կրթական-մշակութային-գիտական ոլորտին համար՝ «անհրաժեշտ մեքենան»: Իսկ տնտեսական ոլորտին համար՝ այն մեքենային մէջ անկախ մարմինի մը գործունեութիւնը: (Ստիպողութիւն մըն է ամենուրեք տնտեսական աղբիւրներ արարել: Բարերարներուն՝ վարձքը կատար: Սակայն համասփիւռքեան տեսլական մը միայն բարերարներով իրականանալի չէ, այլ քայլ առ քայլ՝ տնտեսական աղբիւրներու արարմամբ, համադրմամբ):

Հ. Որո՞նք կրնան հանդիսանալ գլխատուր դերակատարները. Ազգային կուսակցութիւնները, Եկեղեցի՞ն (ինչպէ՛ս յայտնեցի նախընտրութիւնս՝ յարանուանութիւնները), այլ կազմակերպութիւններ (առկայ կամ նորաստեղծ), անհատ ազգայիններ:

Պ. Բոլորին առակ ներկայացուցիչներէն կազմուած համասփիւռքեան վերին մարմինը՝ միակ գլխատուր «դերակատար»:

Կուսակցութիւններուն պարագային՝ ներկայացուցիչները կրնան կուսակցականներ չըլլալ, այլ համակիրներ: Յարանուանութիւններուն պարագային՝ ներկայացուցիչները կրնան ոչ միայն եպիսկոպոսներ ըլլալ, այլև քահանաներ, սարկաւազներ, դպրոցիներ կամ դպիրներ, հաւատաւորոհիներ կամ հաւատաւորներ:

Հ. Սփիւռքի ամրապնդման մէջ ինչ դեր կրնան խաղալ ազգային ռազմավարութիւն ունեցող հայրենի պետականութիւնը, հասարակական կազմակերպութիւններն ու ստեղծագործական, կրթական ու գիտական հաստատութիւնները:

Պ. Ամենուն դերը՝ միայն համագործակցիլ պէտք է ըլլայ, և ո՛չ՝ խանգարել:

Գ.

Յետ գրութեան

Սակայն մինչև «անհրաժեշտ մեքենան» ստեղծուի՝ սփիւռքեան իրաքանչիւր վայր պիտի իր կազմակերպական կեանքին, ծրագիրներուն և գործունեութեանց որակային բարձրացման համար տքնի՝ առանց հպարտանալու իր տիպարային հայկականութեան վրայ, այլև տքնի, որ հրաշալի մեքենան ցնորք մը չըլլայ: ■

Հայկական պետությունը և Հայկական Սփիւռքը հակասական խօսույթներու հանգոյցին մէջ: Նոր պատումի հրամայականը

Միզան Խարտալեան
Ռեժիսոր-վաւերագրող, սցենարիստ, փաստագրական կինոյին նուիրուած գրքերի հեղինակ, հրապարակագիր

Սփիւռքը Հայաստանի անվտանգութեան խնդիրներուն շաղկապուելով, այս վերջին տարիներուն ծանրաբեռնուած տարատեսակ, չսահմանուած և կցկտոր կապերէն, երբեմն նաև լրի հակահայկական օրակարգերով, լուրջ հարուածուած է, նոյնիսկ խարխլած են Սփիւռքի կազմակերպուած ազգային/քաղաքական կեանք վարելու հիմքերը սփիւռքեան տարբեր բնակավայրերէ ներս:

Այն խօսույթը որ հրապարակ նետուած է, թէ խաղաղութիւնը Հայաստանին հնարաւորութիւն կու տայ հասնելու բնականացման այնպիսի մակարդակի, որ կը թուլացնէ Սփիւռքի կապերը և ներգրաւուածութիւնը և պատասխանատուութիւնը, միաժամանակ ազատ կ'արձակէ Հայաստանը պատմական իր պատասխանատուութենէն, դժբախտաբար մեծ ազդեցութիւն ձգած է Հայաստանեան լայն շրջանակներու մօտ, յատկապէս սովորական քաղաքացիներուն և ինքնալուծութիւն ընտրած էլիտաներու մօտ:

Մինչև վերջերս շատերս կը նշէինք այս գործընթացի անդադար աճի մասին, որ այստեղ պայմանական կը բնութագրենք՝ «սփիւռքահայոյ ամկացում և ամորձատում»։ սակայն արձագանգը թերահաւատութիւն էր. Հայաստանի հետ մեր յարաբերութիւնները կը կարօտին վերաիմաստաւորումի. Հայաստան-Սփիւռք յարաբերութիւնները տարատեսակ կը զարգանային իւրաքանչիւր իշխանութեան շրջանին, կային տարբեր ուղղութիւններ, բայց ոչ հակադրում:

Շուրջ երկու տասնամեակ Հայաստանն ու Սփիւռքը կարծես թէ կը հաւատային , որ ճիշդ ուղիի վրայ է մեր գոյութենաբանական խնդրի լուծումը: Կը հաւատայինք որ «այլևս երբեք թոյլ չենք տար, որ մեզ ցեղապանեն» իմաստ ունէր են սփիւռքահայոյն համար ե՛ր Հայաստանի հայ մարդուն համար:

Բոլորս կուզէինք համապարփակ խաղաղութիւն, մեր ուժերով յաղթահարուած խաղաղութիւն, որ կը փոխէ հիմքերը թէ սփիւռքահայի և թէ Հայաստանի հայութեան բանականութեան: Եւ որ մեր յարաբերութիւնները հիմնուած ըլլան փոխադարձ շահերու և ինքիշխանութեան յարգման վրայ:

Հայ համայնքները իրօք որ ուժեղ էին, երբ յստակ գծագրուած էր Սփիւռքի և Հայաստանի անվտանգութեան միջև կապը ու այս ծիրին մէջ տեղի կ'ունենար մեր ինքնութեան բաւական արդիւնաւէտ զօրաշարժը: Հայ մարդը յոյս կը փայփայէր վերջնականապէս ազատելու պատմութեան պարտադրած մեկուսացումէն և թեթևցնելու մեր մշտական սևեռումը գոյատևման հարցերու վրայ: Սակայն անվտանգութեան հարցերու լուծումը գնաց այլ ուղղութեամբ. Այստեղ այդ հարցերը քննելու գայթակղութենէն զերծ մնալով կ'ուզեմ կեղրոնանալ այլ բանի վրայ: Փոխարէն կ'ընդգծեմ, որ



Սփիւռքը մնաց առանց օրակարգի. Սփիւռքէն խլուեցան իր ինքնութեան հիմնասիւնները, և ոտնահարուեցաւ արժէքային այն համակարգը, որ կերտուած էր վերջին 70 տարիներուն: Կարելի է առարկել, որ Արցախն ու Հայաստանի գոյութիւնը մեր գերնպատակները եղած են և հիմա, և միշտ, բայց այդ կը նշանակէ չտեսնել, որ Սփիւռքի զօրաշարժը կ'ենթադրէ նաև ծառայել Սփիւռքի օրակարգային խնդիրներուն, գտնել այն նոր պարունակը, ուր կը նոյնանան կամ մեծ չափով իրար կը լրացնեն մեր պետութեան և Սփիւռքի կառոյցներու օրակարգերը՝

Անվտանգութիւն հայկական պետութեան համար, Անվտանգութիւն հայկականի համար՝ մեր գոյարևման համար:

Երբեք այսքան վտանգաւոր չէ եղած մեր հաւաքական գոյատևման խնդիրը ինչքան այսօր:

Սփիւռքի ձայնը պարտաւոր ենք ուժեղացնել՝ հայկական պետութեան իշխանութիւններուն քիմքին կը յարմարի կամ ոչ. և սա ոչ միայն ի դէմս այն պետութիւններուն, ուր Սփիւռքը կը գործէ ու կը գոյատևէ, այլև ի դէմս հայկական պետութեան: Բառերը չեն ծանձմեր, այստեղ յարաբերութիւնները միշտ եղած են անհաւասար: Ժամանակն է բարձրացնել այս խնդիրը, մեր լուրջութիւնը միայն կը նպաստէ հակահայ ծրագրերուն, Հայաստանի պարտութեան: Իսկ Հայկական պետութեան անվտանգութեան հարցը պիտի վերադարձնել հայ մարդու սրտին և մտքին՝ ամբողջ աշխարհի տարածքին:

Այս յօդուածին մէջ կը փորձեմ գնահատել և առաջարկել անվտանգութեան վերաբերեալ նոր մտածողութեան լուծումներ, ինչպէս Հայաստանի ներքը, այնպէս ալ մեր պետութեան սահմաններէն դուրս:

Որքանով են Սփիւռքի ձայներն ու մտահոգութիւնները Հայաստանի ուշադրութեան կեղրոնը. ինչպէս

հակահայկականության նոր դրսևորումները կը ջլատեն Սփիւռքի ներուժը:

Ինչ դեր կը վերագրէ Հայաստանցի մարդը Սփիւռքին 2020 Մեկտեմբերի պատերազմէն ետք: Մեր անվտանգութեան միջավայրի վերաիմաստաւորման մէջ ինչպէ՛ս կ'արձագանքէ Սփիւռքը այսօր, որո՞նք են նոր մարտահրաւերները. ինչպէ՛ս կը սահմանենք մեր սեփական դերը:

Այս բոլոր տարրերը պարտաւոր ենք ուսումնասիրել: Հայաստանի և հայկականի անվտանգութեան պայմանները և հայկական Սփիւռքի առջև ծառայած երկրնորանքները տարբեր կերպ կ'արտայայտուին Արևմտեան Եւրոպայի, ԱՄՆ-ի, Միջին Արևելքի և ռուսական Սփիւռքի մէջ:

Պատմական փորձառութիւններու տարբերութիւնները, սփիւռքներու ներքաղաքական և արտաքին քաղաքական միջավայրերը, այնտեղ ուր անոնք գոյութիւն ունին, Հայաստանի ներքաղաքական աղէտալի մրցակցութիւնը մեզ տարած են հոն, ուր իւրաքանչիւրը Հայաստանի անվտանգութիւնը կ'ըմբռնէ իրովի: Յատկապէս Հայաստանի պարագային համապատասխան դիրքորոշումները հիմնուած են վերջին ծայր սրուած ներքաղաքական, հիւանդագին, եսակեղրոն յարաբերութիւններու կոնտեքստին մէջ: Եւ սա ի հարկէ չի նպաստեր ուժերու լարման, հասարակ յայտարարի գոյացման, և հաւաքական առողջ գնահատականներու մշակման: Սփիւռքի իւրայատկութիւնները ի մտի ունենալով, մի տեղ մասնատուած, ուրիշ տեղ կազմակերպուած, մի այլ տեղ շատ, ուրիշ տեղ քիչ թիւով, խոցելի կամ պաշտպանուած, մի տեղ լիպերալ, ուրիշ տեղ ընկերվարական, – ժամանակն է ձևաւորել աշխարհով մէկ մեր հաւաքական անվտանգութեան նոր բանաձևը: *Մեզի հարկաւոր է նոր նարարիւի, նոր պայտում:* Արդիականցուած պատում:

Ամերիկեան և արևմտակրոպական, միջինարևելեան, ռուսական սփիւռքներու միջև առկայ մեծ տարբերութիւնները, Հայաստանի պատմական անկիւնադարձային իրավիճակը, մեր ազգին սպաստող արհաւիրքը, մէկս միսէն ակնկալութիւններու միջև առկայ հսկայ ջրբաժանը կարելի չէ ընկալել որպէս նորմալ:

Այս դանթեական վատ երագը, տեսլականի տարրալուծումը կը կարծէի որ մեր վերնախասերը զգաստութեան կը հրաւիրեն. կիզակէտի տակ կը բերեն հակահայկականութեան ստեղծած բոլոր խնդիրները, և կը մղեն առաւելագոյնս սևեռուելու Սփիւռքի ձայնի հզօրացման, անվտանգային, սահմաններու և ինքնիշխանութեան հիմնարար խնդիրներու վրայ:

Անվտանգութեան տրամաբանական տեսակէտը, անկախ պետական օրուան իշխանութեան քաղաքական նախասիրութիւններէն, պիտի ընդգծէ հայկականի կարևոր դերը և չհանդուրժէ Սփիւռքի ամլացումն ու ամորձատումը:

Այսօրուան իշխանութիւնները ընտրած են Սփիւռքի թուլացման և չէզոքացման ճանապարհը: Սփիւռքի ընդլայնուող դերը կը դիտուի որպէս սպառնալիք: Այս վերաբերումով իշխանութիւնները ընտրած են հայկականութիւնը, ամբողջական իմաստով, դատարկել իր բովանդակութենէն՝ նոր սնուցում տալով դարաւոր թշնամիի պնդումներուն. երբ դիտաւորեալ անապահով և անզօր ապրիլը, բանակը զինաթափելը, ոստիկանապետութիւն հաստատելը, հայ մարդուն խաղաղութեան սին երագով վարակելը և բացարձակ հայաստանակեղրոնութիւնը կը դառնայ անվտանգային ընտրուած ճանապարհ, ապա կը վտանգուի մեր գոյութիւնը առհասարակ: Եւ ներսը և դուրսը:

Հայաստանը այսօր բացարձակապէս հետաքրքրուած չէ հայկական Սփիւռքի շահերով, իր ներգրաւուածութիւնը պայմանաւորուած է միայն իր հակահայկական օրակարգերուն մարդ գրաւելու ճիգերով: Ամբողջական ճիգերով կը սապոտածէ հայկական Սփիւռքի ջանքերը, որ տասնամեակներ շարունակ լծուած եղած է Հայաստանի անվտանգութեան պահպանման գործին: Հայաստանը միայն ընտրովի կ'արձագանգէ հայութեան վտանգուած շահերուն, պատերազմական իրավիճակներու բերումով տկարացած հայկական գաղութներու նեցուկ կանգնելու ոչ մէկ ճիգ կը ցուցաբերէ, տատանումով, միայն ձևական քայլեր կ'առնուին երբ վտանգուած են հայ մարդու կեանքն ու շահերը. մէկ խօսքով իշխանութեան համար մեկնակէտը իր սեփական շահերն են: Այսպէս եղած է քիչ մը



պակաս քիչ մը անելի վերջին 30 տարիներուն. հիմա հասած ենք անդունդ, ուր կը գլորուինք մեծ թափով:

Սփիւռքի ամլացումը անվտանգութեան նոր սպառնալիք է

44օրեայ պատերազմէն ետք, հայկական պետութիւնը իր իշխանութիւններով միայն ու միայն զբաղուած է մեզ բոլորիս ուշադրութիւնը շեղելու հրատապ անվտանգութեան խնդիրներէն և մեր ներուժը կլանելու յիմարագոյն ներքին արհեստական խնդիրներով: Մեր ինքնութեան հիմնաքարերը մէկ առ մէկ տրոհելով մեզ կ'ուտեն, կը վերանայ հայկական գործօնը: Հետևաբար, յետպատերազմեան ինքնութեան պահպանումը, ամրացումը և արդիականացումը այսօր կը համարեն մեր հիմնական օրակարգը: Եւ սակայն կը կատարուի ճիշդ հակառակը. Մեր մշակոյթի նսեմացում, քաղաքացիութեան դերի նսեմացում, վախի մթնոլորտի շիկացում, կրօնական բազմակարծութիւն բառերուն տակ մեր ինքնութեան հիմնական բաղադրիչ հայաստանեան եկեղեցիի նուաստացում և ոտնակոխում, համակեցութիւնը փճացնող շուկայական տնտեսութեան քաշալերում, հասարակութեան համերաշխութեան ջլատում, օրէ-օր աճող դասակարգային տարբերութիւններ, հայաշխարհի բնոյթին վերաբերող տարբեր խնդիրներու արհամարհում և զերոյացում, ունիւերսալիզմի քարոզ և պատեհապաշտութիւն:

Այս վերջին երեք տարիներու ընթացքին բազմաթիւ քաղաքական գործիչներու և մտաւորականներու կողմէ յետպատերազմեան հայկական պետութեան թեզերը՝ պարտադրականութիւնը, նահանջը վերածեր են «նորմալ» գաղափարներու, հերոսութիւնը՝ սնանկութեան, ռազմական անգորութիւնը՝ գերագոյն գործիքի, հայի հոգիի համար պայքարը փոխարինուած է «իշխանութիւն, քաղաքացիներ և ժողովրդավարութիւն» սուտ առաքելութեամբ: Հիմա արդէն հասեր ենք այն կէտին ուր կը վիճարկենք մեր իսկ գոյութեան իրաւունքը: Մեր բանակը, որ պէտք է պաշտպանէ մեր պետութիւնը, թլփատուած է. պոստմոդերնիզմեան փիլիսոփայութիւններու ազդեցութիւնը խորապէս թափանցած է հայկական բազմաթիւ պետական կամ մասնաւոր հաստատութիւններէ ներս՝ կրթութենէն մինչև տնտեսութիւն, արտաքին քաղաքականութենէն մինչև սահմանադրական հարցեր: Մեր պետութիւնը այսօր շեղած է ինքն իրեն հաւատարիմ ըլլալու սկզբնային նպատակէն:

Անվերջանալի զիջումներ կատարելու սարսափելի հետևանքներով, այսօր մեր երկիրը կանգնած է ոչ թէ խաղաղութեան, այլ համապարփակ նոր պատերազմի սեմին. խաղաղութեան գործընթացը և յարակից թրքական երկիրներու հետ ամէն գնով բնականոն յարաբերութիւններու ձգտումը ժխտական ազդեցութիւն ունեցան Հայաստանէ դուրս հայկական բոլոր համայնքներուն վրայ, զերոյացուցին միջհայկական յարաբերութիւններու ընկալումները:

Սփիւռքի յարաբերութիւնները Հայաստանի հետ այսօր խարխուլ են. խաղաղութեան և անվտանգու-

թեան միջև կապը անհասկնալի է շատերուն համար. յարաբերութիւնները նախկին *զօրաշարժի* mode-էն վերածուած են կենցաղայինի. պետականաշինութեան, հայկական կրթութեան և պաշտպանութեան օրակարգերէն հրաժարիլ առաջարկելով, «ծերացած» պիտակաւորելով, հայկական Սփիւռքին կը խրախուսուի կեդրոնանալ ինքն իր վրայ, չխառնուիլ Հայաստանի գործերուն, սակայն այս ծուղակին մէջ իյնալ կը նշանակէ նպաստել այս դաւադիր իշխանութիւններու հակահայկական ծրագրին: Սփիւռքի մեկուսացման և թլփատման ծրագիրը պարտաւոր ենք մերժել:

Վերածնունդը,– թէ Հայաստանի և թէ Սփիւռքի,– կը սկսի արտահայաստանեան հայկական կազմակերպութիւններու կրկնակի քաղաքականացմամբ. մեր ձգտումը պիտի ըլլայ համաշխարհային հայկականութիւնը վերածել իսկական «սինակոռուսի», որ հաւասար կարգավիճակ ունի հայկական պետութեան կողքին:

Վերջին պատերազմը արմատապէս փոխած է ոչ միայն քաղաքական միջավայրը որ դարձեր է անհանդուրժող, այլև փոխած է հայ մարդու պատկերացումները՝ ո՞վ է Հայաստանի հայը, ո՞վ է սփիւռքահայը. մէկս միսին հետ ինչ կապ ունիք:

44օրեայ պատերազմի պարտութիւնը մեծ ստուեր ձգած է մեր հաւաքական մտածողութեան և կազմակերպչական ջանքերուն վրայ: Փոխարէնը հայ մարդու ուղեղին մեջ դաջուած է խաղաղութիւն խօսոյթը, որ սակայն զուրկ է բովանդակութենէ. իսկ շատ լաւ մշակուած է «խաղաղութիւն յանձնուելու ճամբով»-ի միտքը:

Հայաստանի ներքին քաղաքական գործերու վրայ կեդրոնանալով՝ չկարծէք որ մեր դիմաց ցցուած գոյութենական մարտահրաւերները կը վերանան. Արցախի հարցը չի վերանար, ցեղասպանութեան արդարահատոյցի խնդիրը չի վերանար. Սփիւռքի ուժերու վերականգնման խնդիրը չի լուծուիր, չի կորսուիր Հայաստան պետութեան վերացման սպառնալիքը:

Գլխիվայր փոխուած քաղաքական այսօրուան միջավայրին մէջ նոր դերերու որոնումն ու վերաբաշխումը չի կրնար յետաձգուիլ. պէտք է շատ արագ վերախմբաւորուիլ. հիմա արդէն պարզ է վտանգի ահաւորութիւնը:

Հակամարտութիւնը, ուր յայտնուեր ենք այս պահուն, ընդլայնուած է, վերադարձած իր պատմական մասշտաբներուն, հասած Հայաստանի սահմաններէն դուրս մինչև Սփիւռք: Ողջ հայութեան դէմ պատերազմ յայտարարուած է: Ներհայկական վէճը ազգայինի մասին կառավարելիի սահմաններէն դուրս եկած է, քանի որ վէճը կը վերաբերի մեր կրօնին, մեր մշակոյթին, մեր լեզուին, մեր ազգային ինքնութեան հիմքերուն: Որոշները հիմա արդէն կը տեսնեն, որ կամային որդեգրուած անզոյ անվտանգութիւնը ուղիղ կապուած է այսօրուան խնդիրներուն հետ: Մեր վերապրումին հետ: Այս իշխանութիւններու կողմէ մեր արժէքային համակարգին ուղղուած վերանայումները սպառնալիքի միայն մի փոքր երևացող ցուցանիշն են, իսկ հետևանքները արդէն դարձեր են անկառավա-

րելի. Այս պահուն արդէն հայ-թրքական հակամարտութիւնը որոշակիացում է. կռիւր ընդլայնում է. հողի, ջրի, էներգիայի, արհեստականօրէն ստեղծուած դատարկուած տարածքներու, էթնիկ գոտումի և հայկական տարրի ի սպառ վերացման մասին է, հայ բնակչութեան ամբողջական վերացման մասին է:

Իսկ երկխօսութիւնը հեռու է, խաղաղութիւնը պատրանք է: Սփիւռքը պարտաւոր է զգաստութեան հրաւիրել հայրենի ժողովուրդը, հաւաստիացնել, որ կազմակերպուիլը ապրելու միակ բանալին է. և սա կարելի է միայն երբ սկսինք արագ վերասահմանել, այժմէականացնել մեր ազգային պատումը. պէտք է ունենանք միասնական քաղաքական լեզու:

Պիտի դիմենք լայնածաւալ գորաշարժի նոր պատում ստեղծելու համար, շեշտը դնելով համերաշխութեան վրայ, ժամանակաւորապէս մէկ կողմ դնելով ներքին բանավէճերը, նախասիրութիւնները. մէկ խօսքով հրամայական է նպատակներու հաւաքագրումը և բոլոր միջոցներու կեդրոնաւորումը հայկական ինքնութեան և պատումի նորացման և արդիականացման համար:

Իսկ մի՞թէ կան այդ գորաշարժի նշանները

Նախ նշեմ շարք մը առասպելներ-պատումներ, որոնք մեր հետ են ամէն օր. շատերս կը խօսինք միասնութեան, յատկապէս եռամիասնութեան մասին: Վտանգի ժամանակներուն միասնութիւնը կը դառնայ նորայայտութիւն: Համահայկական անվտանգութեան շուրջ եզակի հնարաւորութիւն ունինք նոր պատումի մշակման: Հայկական Սփիւռքը առանցքային կարևորութիւն ունի Հայաստանի ակնյայտ նահանջը շրջելու,

տապալելու գործին մէջ:

Հայկականի անվտանգութեան հարցը միահիւսուած է Հայաստանի անվտանգութեան հետ: Հայկական պետութեան գլուխը պիտի ունենայ պարտաւորութիւն միաւորելու ոչ միայն Հայաստանի ժողովուրդը, այլև բոլոր հայերը ամբողջ աշխարհին մէջ: Հայաստանի խնդիրները միայն Հայաստանինը չեն. Հայաստանը կը պատկանի ողջ հայ ժողովուրդին:

Միայն ինքնիշխան հայ պետութիւնը կրնայ ապահովել բոլորի անվտանգութիւնը, հայկական պետութեան զարգացումը, պահպանումը այլընտրանք չունին: Հայաստանի զինուած ուժերու անխոցելի ըլլալու ընկալումը և այդ ընկալման քայքայումը վերջին գամը դրաւ առկայ հայկականի անվտանգութեան պատումին վրայ: Գաղտնիք չէ որ վերոյիշեալ հաստատում-պատումները լուրջ արդիականացման, նոր բովանդակութեան խնդիր ունին: Շատ շատերը միայն խօսքի սահմաններու մէջ մնացած են, իսկ հիմա մեզի կը պարտադրեն վերանայման գործընթաց մը՝ նախաձեռնուած այսօրուան իշխանութիւններու կողմէ, որ ուղղակի հակահայկական բնոյթ ունի: Նոր պատումը պիտի գծագրենք և ստանձնենք մե՛նք:

Վերա-արդիականացում պատում

Նախ քանի մը տող առասպել-պատումի մասին:

Վերջին տարիներուն քաղաքական փոփոխութիւնը և միջազգային յարաբերութիւններու ուսումնադաշտը կ'ընդգծեն քաղաքական առասպելներու կարևորութիւնը: Նախկին մօտեցումը, որ այդ պատումը *կրնասիրուկցիաներ* են մնալով հանդերձ՝ վերատեսումի կենթարկուի առասպելներու անհրաժեշտութիւնը,–



յատկապէս դուրսէն գծագրուած ու սնուցուած պատումներու համար պիտանի գործիք. պատումը կրնայ առասպելային ըլլալ բայց չի դադրիր կարևորութիւն ունենալէ: Պատումները հաւաքական ինքնութեան հիմնասիւններն են, որ կարելի է ուժեղացնել կամ հակառակը՝ վերացնել, քայքայել ու նորով փոխարինել. հիմա մեզ կը կերակրեն նոր պատումներով. ազգային մեր պատումը կը փոխարինուի անհասկնալի համամարդկային կոչուած արժէքային հիմքի պատումներով, որ ոչ միշտ կը բխին մեր հաւաքականութեան կարիքներէն, այլ պարզապէս կը լրացնեն «դուրսի» քաղաքական շահերն ու կարիքները: Քաղաքական առասպելները մեր ընկալումով ոչ թէ շինծու պատմութիւններ են, բառ մը, որ ինքնին կը բովանդակէ նուաստացուցիչ իմաստ, այլ պիտի դիտուին որպէս մի շրջագիծ, որ անհատին և հաւաքականութեան կու տայ իր շուրջ տեղի ունեցող իրադարձութիւններուն իմաստաւորման և մեկնաբանութեան տարածք և հնարաւորութիւն:

Առասպելները կարևոր են, քանի որ անոնք կիմաստաւորեն մարդուն էութիւնը. անոնք տրամաբանականութեան շրջագիծ մը կը ձևաւորեն մարդու կեանքին և գոյութենական պայմաններուն: Քաղաքական առասպելները հայեցակարգային են և կան զանոնք մեր հաւաքական կեանքին մէջ տեղաւորելու մի քանի ձևեր:

Հիմնական մօտեցումի համաձայն՝ առասպելը պէտք է ընկալել որպէս վերաիմաստաւորման և յարմարեցման շարունակական գործընթաց՝ ի պատասխան քաղաքական որոշակի մէկ հաւաքականութեան այս պահի կարիքներուն:

Բայց առասպելները քարի վրայ փորագրուած անկտորելի դոկտորիններ չեն: Անոնց բովանդակութիւնը, կառուցուածքը և տարածման եղանակը մշտապէս ենթակայ են վերաիմաստաւորման և ինքնահոս ար-

դիականացման: Առասպելի վրայ աշխատիլ կը նշանակէ որդեգրել գործընթաց մը, ուր առասպելը մշտապէս կը թարմացուի, կը փոխուի՝ մեր գոյութեան նորանոր և շարունակական իմաստ տալու համար: *Միաժամանակ առասպելի արդիականութիւնն ու կարևորութիւնը ուղղակիօրէն կապուած են քաղաքական պարմանական որոշ պահի մեր հաւաքականութեան կարիքները լուծելու հաւաքական ներուժին հետ:* Այլ խօսքով առասպելները մեզի կուտան իրերու և իրադարձութիւններու նորովի մեկնաբանութեան համար մէկ պրիզմա-գործիք և գործառոյթ: Առասպելները ունին մի քանի առանձնակի յատկութիւններ. այս յօդուածի համատեքստի մէջ առասպելները կը դիտենք որպէս իրայատուկ էպոս/բանաստեղծութիւն. այսինքն առասպելը պատում է, պատումը առասպել է. բոլոր պատումները ունին դերակատարներ, իրադարձութիւններու շղթայ, թեմա, ժամանակ, միջավայր և տարածութիւն: Բայց ամէն պատում նաև ունի համատեքստ, որու շրջանակին մէջ միայն այն կրնայ իմաստալից ըլլալ:

Ուրեմն՝ միայն որոշ համատեքստի մէջ պատումը կը դառնայ պատում: Եթէ մի պատում իրայատուկ բանաստեղծութիւն է, որ ունի որոշակի կառուցուածք, ապա ինչ է տարբերութիւնը քաղաքական պատումի և առասպելի միջև: Քաղաքական առասպելներ ստեղծել կը նշանակէ աշխատիլ հասարակաց պատումի մը վրայ, ուր հաւաքականութիւնը, հասարակութեան անդամները, կ'իմաստաւորեն սեփական քաղաքական փորձառութիւնները և իրենց համապատասխան գործողութիւնները:

Շեռևարբար, պատումը քաղաքական առասպելի վերածելը կապ չունի պատումի բովանդակութեան կամ ճշմարտացիութեան հետ: Պատումը, որ կ'իմաստաւորէ մեր գոյութիւնը, կը ձևաւորուի խումբ մը մարդկանց կողմէ: Ու կ'ազդէ քաղաքական այն որոշակի պայմաններուն վրայ, որոնց ծիրին մէջ կը գործէ այս խումբը:

Իւրաքանչիւր քաղաքական համայնք ազգային կամ միջազգային մակարդակի վրայ կ'առնչուի շարք մը էտոզներ/ներքնածին քաղաքական առասպելներու հետ, որոնց միջոցով այդ համայնքները կ'իմաստաւորեն իրենց քաղաքական փորձառութիւնները: Նման առասպելները մշտապէս կը վերաիմաստաւորուին և կ'արդիականացուին որպէսզի բաւարարեն քաղաքական հանրութեան կարիքները:

Սփիւռքի գոյութեան վերաիմաստաւորման համար ռազմավարական մէկ նոր պատում առաւելագոյն ազդեցութիւն կ'ունենայ թիրախային լսարանին վրայ, երբ ան կը նպաստէ առկայ առասպելներու փոփոխման յարաճուն աշխատանքին: Այլ կերպ՝ արդիւնաւետ ըլլալու համար ռազմավարական մէկ պատում, որ երբեմն կը կոչուի նարատիւ, պէտք է *վերահիշեցնէ ներքնածին,՝ ոչ դուրսէն պարպարողուած,՝ առկայ քաղաքական առասպելները, արձագանգէ անոնց:* Թէ ինչպէ՛ս նոր ռազմավարական պատումը/նարատիւը կրնայ նպաստել քաղաքական առասպելներու արդիականացման՝ պիտի նայիլ անոր բովանդակու-



թեան և կառուցուածքին:

Առաջին՝ ռազմավարական նոր պատումի և քաղաքական առասպելի միջև պէտք է ըլլան բովանդակութեան որոշակի սմանութիւններ: Որպէսզի այս նոր ռազմավարական պատումը ռեզոնանս ունենայ ներքնաձին քաղաքական առասպելի հետ, պէտք է շօշափէ սմանատիպ թեմաներ:

Երկրորդ՝ ռազմավարական նոր պատումի կառուցուածքը պէտք է նպաստէ առկայ առասպելի մշտատև փոփոխութեան: Այստեղ կարևոր է, որ ռազմավարական պատումը տեղափոխուի քաղաքական առասպելի կառուցուածքին մէջ և այժմէականացնէ առասպելի արդիականացման խնդիրը: Այնուհետև դերակատարները, իրադարձութիւնները, թեման, ժամանակը, միջավայրը, տարածութիւնը, կառուցուածքը կարևոր են հասկնալու համար, որ ինչպէ՛ս տեղական քաղաքական մաթեմատիկան և ռազմավարական նոր պատումը պիտի փոխներգործեն: Հաւաքականութեան մը մէջ կան բազմաթիւ քաղաքական առասպելներ: Ուրեմն կայ բովանդակութեան բազմազանութիւն, և, հաւանաբար, այնտեղ կը գտնենք նոյնիսկ իրար հակադր բովանդակութիւն: Բովանդակութիւնն ու հարադր հակասականութիւնը մեծ նշանակութիւն ունին ռազմավարական նոր պատումի ստեղծման (որդեգրման) ընդունման կամ մերժման համար: Այստեղ կան երկու կարևոր խնդիրներ՝ մէկը քաղաքական առասպելի **տարածումն է** և անոր այլ առասպելներու հետ **համապատասխանութիւնը**: Տարածումը կը նշանակէ քաղաքական առասպելը ինչ աստիճանի կրնայ ընդունելի ըլլալ մեծ թիւով և տարբեր քաղաքական խումբերու համար: Որոշ առասպելներ տարածման աւելի մեծ ներուժ ունին, իսկ ուրիշներ աւելի սահմանափակ են: Օրինակ, քաղաքակրթութիւններու բախման առասպելը մեծապէս ընդունուած է աշխարհի տարբեր հաւաքականութիւններու կողմէ: Իսկ համապատասխանութիւնը կը վերաբերի նոր առասպելին այլ քաղաքական առասպելներուն համապատասխանելու կամ ընդհակառակը բախուելու ներուժին: Համամարդկային ընդհանուր առաջընթացի առասպելը շատ դիւրին կարելի է պատշաճեցնել բազմաթիւ այլ քաղաքական առասպելներու հետ, օրինակները՝ անհատի ազատութիւն, դասակարգի մը անունով հաւաքական գործողութիւններ ընելու իրատունք, առաջնորդ, փրկիչ, և այլն:

Մինչդեռ յեղափոխութեան առասպելը կամ պատումը շատ հաւանական է, որ բախուի մի քանի այլ քաղաքական առասպելներու հետ, որոնք միաժամանակ առկայ են նոյն հաւաքականութեան մօտ: Սակայն չպիտի մոռնայ, որ առասպելի մը համահունչութեան աստիճանը *չափանիշ չէ* անոր ժողովրդականութեան. ոչ ալ չափանիշ է անոր հետևորդներ *ներգրաւելու* ներուժին կամ նոր հետևորդներ *սերմանելու* ներուժին:

Այլ առասպելներու հետ հակասութեան մեծ ներուժ ունեցող առասպելը կրնայ գերիշխող ըլլալ ներգրաման առումով, քանի որ այն աւելի շար կ'իմաստարարէ քան մրցակից առասպելները: Համապատասխան

ութիւնը կամ հակասութիւնը ուրեմն պէտք է հասկնալ առասպելի բովանդակութեան ծիրին մէջ (պատումի կառուցուածքը որ կը դիրացնէ համընկնումը այլ քաղաքական առասպելներու հետ) և ոչ թէ անոր ժողովրդականութեան հետ:

Այս դիտարկումները ի մտի ունենալով հանդերձ ռազմավարական նոր պատումի ստեղծման և ընդունման համար կան սահմանափակումներ: Մասնաւորապէս, չկայ ռազմավարական մէկ միակ պատում, որ կրնայ միաժամանակ փոխառնչուիլ հաւաքականութեան մօտ ապրող քաղաքական բոլոր առասպելներուն հետ: Տեսականօրէն ամենէն արդիւնաւէտ ռազմավարական պատումը այն է, որ կը նպաստէ առկայ և սակայն համահունչ քաղաքական առասպելներու վերա-արդիականացման աշխատանքին:

Երբ առասպել մը համընդհանուր է կարիք չ'ըլլար ռազմավարական պատումը յարմարեցնել իրաքանչիւր քաղաքական խումբին. այլ առասպելներու հետ իր համահունչ ըլլալու պատճառով ռազմավարական նոր պատումը կրնայ ներգրաւել աւելի լայն լսարաններ: Սակայն, առկայ քաղաքական առասպելները հագուադէպօրէն համահունչ են և ինքնին ենթակայ են շարունակական այժմէականացման, ենթակայ են բազմաթիւ ազդեցութիւններու, որոնցմէ միայն մէկը կրնայ որոշակի ռազմավարական պատում դառնալ:

Ուրեմն բովանդակութեան բազմազանութիւնը կը դժուարացնէ ռազմավարական պատումի յաջող իրագործումի հնարաւորութիւնը: Միւս կողմէ, տարածուած և պայմաններու բերումով արդէն չգործող, անպիտան դարձած առասպելները փակ են նոր ազդեցութիւններու դիմաց՝ իրենց բովանդակութեամբ և կառուցուածքով: Հետևաբար, ռազմավարական նոր պատում առաջարկողը պէտք է հաւասարակշիռ մը գտնէ, կամ՝ ներկայացնէ առաջարկ, որ համահունչ է առկայ այլ քաղաքական առասպելներու:

Հայաստանի և Արցախի վերամիացման պատումը

Արցախի և Հայ դատի մասով առկայ պատումի նկատմամբ կան վերաբերումի, ներգրաման և մասնակցութեան լուրջ խնդիրներ: Առկայ պատումը ինչ-ինչ պատճառներով այսօր լրիւ չ'իրացուի որ ոչ մէկ տեղ՝ ըլլայ Հայաստան, ըլլայ Սփիւռք: Ուրեմն այս պատումը կը գտնուի վերատեսման, վերաարդիականացման հրամայականին առջև. պէտք է ըսել նաև, որ արդէն սկսած են խօսակցութիւններ փակ կամ բացայայտ, որոնք ուղիներ կը փնտոեն: Հայաստանի մէջ տեղի ունեցող խօսակցութիւնները կամ մասնակի հասանելի են, կամ ալ մասնակիացած, կեղքոնացած տեղական անմիջական խնդիրներու լուծման վրայ:

Սփիւռքի մէջ թէև այդքան հեշտ չէ հետևիլ պատումի նկատմամբ աշխարհով մէկ տարածուած սփիւռքահայ շրջանակներու վերաբերումի փոփոխութեան, սակայն անհերքելի է, որ այն կը հետաքրքրէ մեր բոլոր համայնքները:

**Իշխան Չիֆթանս
Անհերքարքրություն**

Առաջարկումս պատումը՝ վերամիաւորման կամ որևէ այլ պատում, որ դժուարություն ունի իբրև համահայկական ներկայացուցիչ, գործնական հմտաւորով այ, նոյնիսկ եթէ անհկա ըլլայ ինծի կամ ուրիշի մը համար չափազանց կարևոր, որևէ հերքարքրություն չի շարժեր այսօր: Մեր համայնքները, մեր մտաւորականները, մեր գործիչները, մեր կառոյցները կորսնցուցած են իրենց հերքարքրութեան զգայարանքը: Հայաստանի մէջ այլ տարբեր չէ պարկերը: Որևէ «գաղափար», որևէ «պատում» դժուարություն ունի համախմբում իրականացնելու: Անոնք՝ այդ կառոյցները կամ համայնքները, հերքարքրուած են միայն իրենցմով, իրենց անմիջական շրջապատով, իրենց ընտանիքով, իրենց գրպանով, իրենց «արտադրանք»ով: Ըստ պիտի ըլլար, եթէ համայնքները կամ կառոյցները լրջօրէն հերքարքրուած ըլլային իրենք իրենցմով՝ վերակառուցէին իրենց կառոյցները: Այս «հերքարքրությունը» հիմնուած է միայն շահու և նիւթական եկամտորի վրայ: Այս պայմաններուն տակ գործարարներ թերևս յաջողութեան հասնէին, սակայն վստահաբար այդ կարուածն այլ ունի իր դժուարությունները:

Մենք է որ պիտի առաջնորդենք նորացուած պատումի ստեղծման, բնութագրման և անոր հասանելիութեան գործը: Միացեալ ազգի գաղափարը, որ փայփայած ենք այս վերջին տասնամեակներուն, կարիք ունի նոր բովանդակութեան և կառուցուածքի: Սփիւռքի և Հայաստանի, միասնականութեան պատումը պիտի շահագրգռէ բոլոր կողմերը՝ ներգրատուածութեան հմաստով: Հայրենիքի վերամիաւորման պատումը, ընկերաբանական և տնտեսական հնարատրություններէն գատ, պիտի ներգրատէ բոլոր կողմերու ներուժը: Վերամիաւորման հարցին մէջ Սփիւռքի ներգրատուածութիւնը ունի լրացուցիչ առաւելութիւններ: Վերամիաւորման գաղափարին շուրջ՝ Սփիւռքը ինքն իրեն պիտի տայ բացառիկ հնարատրութիւն ազդելու մեր հաւաքական նոր պատումի ստեղծման վրայ:

Որտեղ որ հայ մարդը կ'ապրի այսօր, այնտեղ կրնանք սկսիլ վերամիաւորման նոր պատումը տարածելու և հինը վերաարդիականցնելու անյետաձգելի գործին՝ համագործակցելով և համակարգելով, համահայկական արշաւներու ու նախաձեռնություններու դիմելով:

Մեր ամենամեծ երագանքները կը սկսին երբ բոլորս՝ մեծ թէ փոքր, առաջ մղենք «Հայկական երագանքը», հաւատալով որ այն օգուտ կը բերէ ամբողջ մարդկութեան:

Թէ ինչ են այդ նոր պատումի մանրամասնութիւնները՝ պիտի որոշենք միասին՝ բոլորս միատեղ գործելով: ■



Կազմակերպուածութեան առաջնահերթութիւնը

Վիզէն Աբրահամեան

«Հորիզոն» թերթի անգլերէն, ֆրանսերէն յաւելումներն և «Հորիզոն գրական» յաւելումի խմբագիր

Հայաստանի մէջ և անոր շուրջ վերջին տարիներու իրադարձութիւնները եկան ընդգծելու հրատապութիւն մը, որ երեք տասնամեակէ ի վեր կ'անտեսէինք որովհետև հրապարակը աւելի աղմկալից հրատապութիւններով ողողուած էր. Սփիւռքի տեղը և դերը յետ-խորհրդային աշխարհին մէջ, երբ երկաթէ վարագոյրով սահմանազատուած հայութեան այլազան հատուածները հնարաւորութիւն ունեցան եօթ տասնամեակներու բաժանումէն ետք գործել որպէս մէկ ամբողջութիւն, որպէս մէկ հայութիւն:

Փորձեր. անշուշտ եղան: Բազմաթիւ փորձեր եղան սկսեալ 1991-ի հայ գործարարներու առաջին համագումարէն մինչև Եղեռնի 100-ամեակի ոգեկոչումները, անցնելով մի քանի (եթէ չեմ սխալիր՝ թիւով 6) Հայաստան-Սփիւռք համաժողովներէն: Թէ ինչ ծնաւ այդ համաժողովներէն՝ այլ խօսակցութեան նիւթ է, սակայն մէկ բան յստակ է. Հայաստանի վերանկախացումէն անցած է երեք տասնամեակ, երկաթէ վարագոյրի վերացումէն՝ քիչ մըն ալ աւելի, և տակաւին մեր մտքերուն մէջ առկայ է այդ վարագոյրը իր ամբողջ անաւորութեամբ. այլապէս պիտի չշարունակէինք «Հայաստան-Սփիւռք» պարտադրեալ կաղապարին ընդմէջէն դիտել հարցերը, այլ անցած պիտի ըլլայինք աւելի ընդարձակ՝ համահայկական դիտանկիւնի:

Եթէ տակաւին կը վերադառնանք կէս դար հնութեամբ նոյն հարցադրումներուն, եթէ տակաւին չենք տեսներ, որ Հայաստան-Սփիւռք սահմանազատումները տարիէ տարի կ'աղօտին և ոչ ոք կրնայ տալ այդ սահմանի ճշգրիտ բանաձևումը, եթէ կը յամառինք Սփիւռքը դիտել իր համահայկական էութենէն անջատ, շատ հեռու պիտի չերթանք, այլ պարզապէս պիտի կրկնենք նախորդ տասնամեակներու առաջարկները և շարունակենք 21-րդ դարի խնդիրները դիտել 20-րդ դարի ակնոցներով:

Աւելի ճիշտ պիտի ըլլար այս խնդիրները քննարկել ոչ միայն Սփիւռքի համար, այլ համահայկական դիտանկիւնէն. բոլոր հարցադրումները, որ դրած ենք այսօր Սփիւռքի համար, կրնան նոյնութեամբ դրուիլ նաև Հայաստանի համար: Խնդրի էութիւնը միայն սփիւռքեան չէ, այլև համահայկական:

«Յանձնառու ազգային»ի կարիքը

Ուր որ ալ ըլլան, առանց կազմակերպուածութեան, հայ հաւաքականութիւնները՝ համայնք, գաղութ, գիւղ, արև, քաղաք և մասամբ նորին, որևէ արժէք չեն ներկայացներ, և անհատական որևէ նախաձեռնութիւն դատապարտուած է ուշ թէ, շուտ շիջման: Իսկ մեր խնդիրները երկարաժամկետ են. Եղեռնէն աւելի քան 100 տարի անց, ոճրագործը տակաւին կը սպասէ, որ յոգնինք ու իր համար գլխացաւ ըլլալէ դադրինք, որ ինք հանգիստ մարսէ իր ոճիրը: Կը սպասէ քիչ մըն ալ



զարմացած, որ տակաւին կը յամենանք գոյութիւն ունենալ, մինչ մասնագիտական բոլոր հաշուարկներով մենք վաղուց պէտք է անցած ըլլայինք պատմութեան գիրկը: Մասնագէտները մոռցած էին հաշուի առնել հայութեան կազմակերպուածութեան գործօնը:

Յետադարձ ակնարկ մը մեր անցեալ երկու դարերու ազգային թէ համայնքային կազմակերպական զանազան փորձերուն և իրագործումներուն վրայ, ցոյց կու տայ թէ անհատական կամ խմբակային նախաձեռնութիւնները միշտ կ'ըլլան սահմանափակ իրենց տարողութեան և տևողութեան մէջ: Ամենաերկարատև և արդիւնաւետ նախաձեռնութիւնները միշտ ալ եղած են անոնք, որոնց կարկինը լայն բացում է թէ՛ որպէս նախաձեռնութեան տարողութիւն, թէ՛ մասնաւանդ որպէս նախաձեռնողներու և մասնակիցներու քանակ: Այսինքն՝ նախաձեռնութիւնը կը դիմանայ այնքան ատեն, որքան կը դիմանան նախաձեռնողները. փոքր խմբակներու նախաձեռնութիւնները կը տևեն, բախտաւոր պարագային, խմբակի անդամներու կեանքին չափ, իսկ աւելի յաճախ՝ մինչև խմբակի անդամներուն գժտութիւնը: Իսկ եթէ նախաձեռնութիւնները կուզան աւելի մեծ հաւաքականութիւններէ, կառոյցներէ՝ որոնք ունին նաև սերնդափոխութեան և ինքնանորոգման սովորոյթներ՝ գրաւոր թէ անգիր, ապա այդ նախաձեռնութիւնները յաջողութեան շատ աւելի մեծ հաւանականութիւն կ'ունենան:



Իշխան Զիֆթճեան

«Տարողութիւն և րևոդութիւն»

«...ազգային թէ համայնքային կազմակերպական զանազան փորձերուն...» մէջ յարակ տեղ ունին մշակութային ու գրական շաժումները, մանաւանդ մեր պարագային, որովհետև անոնք գրականի ու մշակութայինի սահմանափակութեան մէջ չեն մնացած յաճախ, այլ եղած են համայնքակերպ աղբիւրներ: Այլապէս, օրինակ՝ գերեզմանատան յանձնախումբի մը կարճատև կամ երկարատև կեանքը շարք բան չի կրնար նշանակել: Հաւանաբար՝ մեռելները մտախոհ:

Մշակոյթին ու գրականութեան այստրակ մօտեցումը անոնց էությունն ու գոյութիւնը նկատի չ'առնել: Բարացուցական և բաւական փարսածուած է այս մօտեցումը, որուն կ'արժէ անդրադարձնալ: Չեմ ուզեր բերել օրսար մշակոյթներէ օրինակներ: Մասնա մեր ածուին մէջ: «Մեհեան» (Կ. Պոլիս, 1914, 7 թիւ), «Մենք» (Փարիզ, 1931-32, 5 թիւ), «Ահեկան» (Պէյրոս, 1966-1970), յիշելու համար անցեալ դարէն քանի մը գրական (բայց՝ ոչ միայն) հանդէսներ. տևողութեամբ կարճ կեանք ունեցած են, սակայն տարողութեամբ, իրենց փարսած՝ շալկած նիւթերով՝ հարուստ և պեղելի են, ինչ որ, ըստ իս, յաջողութեան նշան է: Տարողութիւն ու րևոդութիւն, մանաւանդ մշակութային հարցերու և երկերու պարագային, միացնելը, նոյնիսկ անգիրակցաբար կամ անմեղօրէն մէկմէկու մերձեցնելը մշակութային սիւս կը համարեմ, կրնայ սակայն նաև աճապարարութիւն ըլլալ: Երբեմն մէկ հեղինակ, մէկ գիրք, նոյնիսկ մէկ քերթուած, մէկ աղօթք, իրենց... փարողութեամբ շարք աւելի կը րևեն քան սերունդներու արտադրանքը: Նարեկացի, Շոտրիայի, Եղիա, Ինքրա՝ հին և նոր անուններ:

«Մեհեան»ի քանի մը ամսուան կեանքը, Փարիզի րդոց գժրութիւնը, «Ահեկան»ի երևումը Պէյրոսի մէջ շարք աւելի փարողունակ ու րևոդական են, քան այլ, բազմապիսի ձեռնարկումներ, հոս անուններ պիտի չչարեմ, որոնք երկարակեաց են, յոբելեաններու երկայնքին կը կրկնեն իրենց «ոց սորված»ը՝ բեմերու վրայ կամ բեմերէ վար, որոնք սակայն փարողունակ ոչինչ րուած են մշակութային, կրթական, գրական՝ գործածելով շոսյօրէն այս աճականները: Ոչինչ՝ յարաբերաբար յիշած հանդէսներու: Կարճակեաց «խմբակներու կեանքէն, մահէն, գժրութենէն» շարք ժամանակ երք, այսօր, կրնանք վերաբին քանալ ու վերակարդալ նշուած հանդէսներուն էջերը, ուր դրուած են հարցեր, ցանուած են հունրեր, որոնք մեծաքանակ, երկարակեաց, զառածող կառոյցներ մինչև այսօր ոչ դրած են, ոչ՝ լուծած, ոչ ալ՝ դնելու րրամադրութիւն ցոյց րուած: Մշակոյթ, գրականութիւն, ինքնութիւն, կառոյց կ'ապրին ու վերապրումի կ'առաջնորդուին հարցադրումներով, որոնք, կարգ մը պարագաներու, յաջորդող սերունդներ ալ չեն կրնար լուծել:

Պէյրոսի մէջ լոյս րեաւած է նաև Միմոն Միմոնեանի «Միհոք» շարքաթերթը. անձնական նախաձեռնութիւն, որ ձեր թուարանութեան հաշուով պէրք էր շուրով յամրէր: 1958-1975, 1978՝ Միմոնեանի շրջանը, որուն րևոդութիւնը և կարարուած աշխարանքը ուրիշ քան կը փաստեն:

Միհոքի մէջ ներկայիս գործող հասակով մեծ կազմակերպութիւնները, իրենց վայել մեծահոգիութեան փոխարէն, յաճախ կը դրսևորեն փոքր(ոգ)ութիւն, ըստ որում՝ առանց իրենց հայութիւն և հայկականութիւն գոյութիւն չի կրնար ունենալ: Անոնք դժբախտաբար կորանցուցած են հերարքրութեան զգայարանքը, ինքնամոդութեան մէջ թաղուած գոյութիւն մը կը քաշքշեն, միաժամանակ ինքնամոռաց փճակ մը ունին. հակասականութիւն մը: Անոնք՝ այդ «մեծ» կարծուած «հաւաքականութիւնները», ոչ «սերնդափոխութեան», ոչ «ինքնամոռում» (ձեր բառերով), ոչ ինքնաքննադարարութեան, ոչ ինքնազգացողութեան, ոչ ալ ինքնութեան հարց ունին այսօր – հակառակ հազարաւոր էջեր հաշուող հրապարակագրական ու վերլուծական, գրար ու քանար աւանդութեան: Առոնց բոլորին մասին կարելի է մանրամասն օրինակներ րալ, ներկայ ախարահար փճակը նկարագրել: Աւանդական կոչուած, դարէ մը աւելի կեանք ունեցող քաղաքական կուսակցութեան մը թերթը իր շարքերէն ոչ թէ յօրուածագիր, այլ վերարուգող սրբագրիչ մ'իսկ ունենալու դժուարութիւն ունի. րանսամեակներ լոյս րեանող ալ թերթ մը մէկ-երկու գրող, լրագրող պարարարելու րեալական չէ մշակած. ուրիշներ մահարունի մէջ են, զի ծայրէ ի ծայր արարարարումով լեցուած են: Ասիկա՝ միայն մամուլի դաշրէն օրինակներ: Շարքը երկար է: Այդ «մեծ»ութիւնները, գոնէ մեր աճուին պարագային, բոլոր նախապայմանները լրացուցած են «փոքր»ութեան, ևս առաւել «փոքրանալու» ու հաւանաբար ալ, աս ընթացքով, դեռ երկար «փոքր» մնալու:

Մեր արդի պատմությունը կարելի է կարդալ որպես ազգային կազմակերպումաժողովրդական ձգտում, սկսելով Շահամիրեանի առաջարկներէն՝ «Ռոբոզայօ փառաց»-ի սահմանադրական նախագիծէն, անցնելով 19-րդ դարու առաջին կէսի Պոլսոյ խմորումներէն՝ արիւտաւորներու և ամիրաներու պայքարով դրսևորուած, որոնք յանգեցան արևելքի առաջին ժողովրդավար կառոյցին՝ 1860-ի Ազգային սահմանադրութեամբ բանաձևուած, կուսակցութիւններու և այլ հասարակական կառոյցներու ձևաւորմամբ, ապա պետականութեան վերականգնմամբ, տարագիր սփիւռքի կազմակերպմամբ և հասնելով մինչև մեր օրերը: Այս աշխատանքներն էին, որ վեց դարեր պետականագործի ապրած հայութիւնը, որ օտար լուծի տակ կ'ապրէր որպէս կրօնական կառոյցներու շուրջ ծուարած հաւաքականութիւն՝ որպէս հօտ, մշտական հովութեան կարիքը ունեցող բազմութիւն՝ գործի ինքնուրոյն որոշումներ կայացնելու հնարաւորութենէն, — նոյնիսկ քրտական աշիրէթները այդ անունով կը կոչէին իրենց ենթակա հայերը. «ոսյա» բառը ունի արաբերէն արմատ (ոս'ի-յա) և կը նշանակէ հօտ, հովիւին կողմէ հսկող արածող կենդանիներու խումբ, — այդ անդէմ-անդիմագիծ ամբոյխէն, Օսմանեան կայսրութեան բառամթերքով՝ «միլլէթ»-էն, վերակերտեցին ԱԶԳ-ը:

Բարացուցական է, որ 1860-ի Ազգային սահմանադրութեան հեղինակները դիմեցին լեզուական նորարարութեան մը. «ազգային» ածականը վերածեցին գոյականի և սահմանեցին «ազգային»ը որպէս գիտակից, յանձնառու հայը, որ կը հաւատայ ժողովրդավարօրէն արտայայտուող իր հաւաքական կամքին (նոյնիսկ «ազգայինճի» ածական մըն ալ ծնաւ, քիչ մը հեզնական, բնորոշելու համար ազգային հարցերուն մէջ շատ ներգրաւուածները): «Ազգ»-ի և «ազգային»-ի այս լծակցութիւնը մեծ թռիչք էր հայ իրականութեան մէջ, որուն հանգամանքներէն շատեր տակաւին կը մնան ուսումնասիրութեան կարօտ: Ան կը սահմանէր կացութիւն մը, ուր հայը կ'ունենար ինքնութիւն մը անկախ իր ապրած վայրէն. ան կրնար ըլլալ թագաւորի մը հպատակը կամ պետութեան մը քաղաքացին, բայց կը համարուէր հայ ազգային մը՝ աշխարհի որ անկիւնն ալ գտնուէր: Եւ ան կ'օժտուէր ժողովրդավարական տարրական իրաւունքներով, ինքնակառավարման յստակ կառոյցներով և լծակներով, որ մեծագոյն թռիչք էին տակաւին միջնադարեան մտայնութիւններով ապրող Արևելքին համեմատ:

Անշուշտ հայութեան արձանագրած այս որակական թռիչքը առաջին իսկ օրէն ունեցաւ իր հակառակորդները. հայութիւնը կ'ապրէր երեք բռնակալ կայսրութիւններու, — օսմանեան, ռուսական և պարսկական, — տարածքներուն վրայ, որոնք հաշտ պայտի չնայէին իրենց համար վտանգաւոր այդ փոփոխութեան. այդ կայսրութիւններուն խորթ էր նոյնիսկ «քաղաքացի» յղացքը. իրենց պէտք էին սոսկ «հպատակներ»: Հետևաբար, 19-րդ դարու երկրորդ կէսին, նոյնիսկ Ազգային սահմանադրութեան որդեգրումէն առաջ, արդէն փոխուած էր անոնց վերաբերումը

իրենց հպատակ հայերուն նկատմամբ:

Ըսել, թէ հայութիւնը միահամուռ որդեգրեց «ազգային» բառի գոյականացումը և հրաժարեցաւ «միլլէթի» հոգեբանութենէն, անշուշտ սխալ է: Մեր իրականութեան մէջ միշտ եղած է շօշափելի հատուած մը, որ ինքզինք հանգիստ կը զգայ հօտին մէջ, կը սիրէ սպասել, որ մէկը իր փոխարէն որոշումներ կայացնէ. ինք շատ-շատ բաղձանք մը կ'արտայայտէ, խնդրանք մը՝ այն ալ նախընտրաբար ցած ձայնով, որպէսզի յանկարծ հովիւը չնեղանայ իրմէ և շուները չզրկէ իր վրայ: Ինչպէս կ'ըսեն «փորը կուշտ, կոնակը չոր», ալ ինչ կարիք կայ գլխացաւանքի մէջ մտնելու ու որոշումներ կայացնելու գործընթացին մասնակցելու: Վերջին երեք տասնամեակներու մեր պատմութիւնը, վերջին հնգամեակի անփառունակ վիճակով, կը փաստէ, որ հայութեան ստուար զանգուածը, մանաւանդ անոր արևելեան թևը, տակաւին չէ կրցած դուրս գալ «միլլէթային» հոգեբանութենէն:

Հոս կ'ուզեմ փակագիծ մը բանալ, ցոյց տալու համար թէ ինչ վտանգ կրնար ներկայացնել փոքրիկ հայութեան ազգային սահմանադրութիւնը հսկայ կայսրութիւններուն համար:

Ժամանակին, երբ տակաւին երկրորդականի աշակերտ էի, լիբանանեան պատմութեան մեր ուսուցիչներէն իմացած եմ մի քանի դրուագներ շիա համայնքի 1950-ականներու կեանքէն, դրուագներ՝ որոնք չէին գրուած դասագրքերուն մէջ, այլ պատմաբանները և ուսուցիչները բերնէ-բերան իրարու կը փոխանցէին: Անոնցմէ մի քանին կը վերաբերէին շիա բնակչու-



թեամբ գիտերուն, որոնք որպէս կանոն կ'ապրէին աւատատիրական համակարգով՝ մի քանի մեծ գեր-դաստաններու ղեկավարութեամբ: Օրին մէկը, մի քանի գիտերէ պատուիրակութիւն մը կ'երթայ իրենց «աղային»՝ Ահմատ էլ-Ասատ բեկին քով, որ այն ատեն Լիբանանի խորհրդարանին նախագահն էր, խնդրելով որ միջնորդէ որպէսզի պետութիւնը դպրոց մը բանայ իրենց գիտերուն մէջ: Նոյնիսկ համաձայն էին, որ մի քանի գիտի համար մէկ դպրոց ըլլար, սանկ՝ բոլորին մէջտեղը, միայն թէ իրենց երեխաները իրենց նման անգրաճանաչ չըլլային: Ահմատ բեկ կը բարկանայ. «Ինչ կ'ուզէք խեղճ երեխաներէն, ձգեցէք իրենց մանկութիւնը ազատ ապրին, ոչխար ու այծ արածեն մաքուր օդին մէջ: Արդէն իրենց փոխարէն տղաս՝ Քամէլը դրկած եմ Երուպա ուսանելու»:

Մի քանի տասնամեակ անց, Լիբանանի շիա համայնքը լիովին թօթափած է աւատատիրական այդ մտայնութիւնը և այսօր կը հանդիսանայ հզօր ուժ մը, որուն ազդեցութիւնը դուրս եկած է Լիբանանի սահմաններէն: Այդ փոփոխութեան մեկնակետը կը համարուին համայնքի առաջնորդ Իմամ Մուսա Սատրի նախաձեռնած համայնքային կառոյցներու բարեկարգումները: Իմամ Մուսա Սատր 1978-ին մութ պայմաններու տակ անհետացաւ... Լիպիոյ մէջ:

Լիբանանի շիա համայնքին մասին այս ամբողջ փակագիծը բացի, որովհետև մի քանի տարի առաջ մեր Վարդգէս Շամլեանի «Յուշագրական ալպոմ» հատորին մէջ Մուսա Սատրի մասին կարդացի հետեւեալ դրուագը:

Նախքան Լիբանանի առաջնորդի պաշտօնը ստանձնելը, Մուսա Սատր կը պաշտօնավարէր հարաւային Լիբանանի Սուր քաղաքը: Մեր Շամլեան կը գրէ.

«Ան կը բնակէր Լիբանանի հարաւը գտնուող Սուր քաղաքը, ուր իմ մանկութեանս դասընկեր դեղագործ Յոլակ Թիւթելեանը և եղբայրս անջատ դեղարաններ ունէին և Մուսա Սատրին, ինչպէս նաև անոր քրոջը զակին փեսային հետ կը յարաբերէին:

Յոլակը պատմեց, որ Մուսա Սատրը հայ համայնքի կազմակերպութեան և գործունէութեան հետ ծանօթանալով, ուզած է մեր Ազգային սահմանադրութենէն օրինակ մը, որպէսզի անկէ օգտուելով արդիականացնէ Շիի համայնքին ալ կազմակերպութիւնը:

Եւ նկատի ունենալով որ մեր Սահմանադրութիւնը արաբերէնի չէ թարգմանուած, ամիսներով, շաբաթը մի քանի գիշեր, Մուսա Սատրը, Յոլակը և Սուր քաղաքի և շրջակայքի քաջածանօթ բժիշկ Շուքրալլա Հատտատը հանդիպում կ'ունենային, որուն ընթացքին Յոլակը մեր Սահմանադրութեան յօդուածները մէկ առ մէկ բերանացի ֆրանսերէնի կը թարգմանէր և տոքթ. Շուքրալլան ալ իր կարգին արաբերէնի կը թարգմանէր Մուսա Սատրին, որ գրի կ'առնէր թարգմանուածները...»:

Չեմ յաւակնիր հաստատելու, թէ Իմամ Սատր բառացիօրէն ընդօրինակած է մեր Ազգային սահմանադրութեան դրոյթները իր համայնքի կառոյցներուն հա-

մար. այս օրինակը մէջբերեցի պարզապէս ընդգծելու համար մեր Սահմանադրութեան արժէքը ոչ միայն հայութեան, այլ ամբողջ արևելքին համար: Անոր ներշնչանքով է, որ Իմամ Սատր յեղաշրջեց Լիբանանի շիա համայնքը, և անդէմ-անդիմագիծ հօտէն զայն վերածեց իրական ուժի, որմէ կ'ակնածին բոլորը անխտիր:

Փակենք փակագիծը և վերադառնանք մեր նիւթին:

Սփիւռքի և ընդհանրապէս ունէ հաւաքականութեան զարգացումը ուղղակի արդիւնքն է իր կազմակերպութեան և առանց կազմակերպութեան խնդիրներու լուծման անհնարին է մեր ցանկին մնացեալ հարցերը լուծել: Կազմակերպութեան բարելաւումը առաջնահերթ պէտք է ըլլայ: Հաւաքական կազմակերպութիւնը այն ճանապարհն է, որ իրաքանչիւր անհատի ներուժը կը միաւորէ, ընդհանուրին հետ և արդիւնքը կ'ըլլայ ոչ միայն անոնց կարողականութեան գումարումը, այլ բազմապատկումը:

Այսօր մեր համայնքներու կազմակերպութիւնը չ'արտացոլացներ մեր իրական ներուժը: Ուսումնասիրեցէք որևէ համայնք, աշխարհի որևէ անկիւնը, ներառեալ Հայաստան, և հաշուեցէք թէ անոր անդամներուն քանի՞ տոկոսը կը մասնակցի համայնքային միջոցառումներուն, — ըլլայ ան եկեղեցական արարողութիւն, աշխարհիկ հանդիսութիւն կամ նոյնիսկ դաշտահանդէս: Եթէ գտնէք, որ տուեալ համայնքի անդամներուն կէսը գոնէ տարին մէկ անգամ կը տեսնուի այդ միջոցառումներու ներկաներու շարքին, կրնաք համայնքը անվարան պարզևատրել «Աշխուժագոյն համայնք»-ի ոսկէ մետալով: Եւ այս տակաւին կրաւորական ներկայութեան մասին է: Երկարաշունչ կազմակերպութիւնը կ'ենթադրէ նաև կառոյցի հիմքին մէջ ներառել սերնդափոխութեան խնդիրները: Շատ կը լսենք բարեմիտ բողոքներ, թէ նոր սերունդը սկսած է հեռանալ մեր կառոյցներէն, մեր արժէքներէն ու արժանութիւններէն: Եթէ մեր առջև խնդիր ունինք նոր սերունդը մեր շուրջ համախմբելու, զանոնք մեր աշխատանքներուն մէջ ներգրաւելու և օր մը ղեկը իրենց փոխանցելու, — ի վերջոյ ժամանակը կը թաւալի և առանց սերնդափոխութեան մեր կառոյցները կը վերածուին... պատմական յուշարձաններու, որոնցմով զարդարած ենք աշխարհի չորս կողմերն ու անոնց կեդրոն Հայաստանը, — եթէ կ'ուզենք որ մեր յաջորդները չըլլան միայն սոսկ թանգարանի պահակներ, այլ աշխուժօրէն զարգացնեն մեր հաւաքական կեանքը և շարունակեն ցեղասպան թուրքին մղձաւանջը մնալ, միայն բարի ցանկութիւններով չ'ըլլար: Նոր սերունդը չ'ենք կրնաք բերել, մեզի հետ նստեցնել և իրեն լուծումներ առաջարկել: Այդ լուծումները մեր լուծումներն են, և եթէ յաջող ըլլային, այսօր այս հարցադրումները չ'էինք դնել:

Նոր սերունդը պիտի գայ նոր լուծումներով, իր լուծումներով, ինչպէս որ արուեստի մէջ ամեն նոր սերունդ կու գայ նոր լուծումներով. ունէ արուեստագէտ, որ միայն հինը կը կրկնէ, կը մնայ լուսանցքին՝ որպէս

միջակութիւն, առաջ կ'անցնին նոր արահետ բացողները: Բայց ամեն արուեստագետ, որքան ալ հանճարեղ, ի վերուստ օժտեալ, պէտք է անցնի իր արուեստին դպրոցը՝ մանկապարտէզէն մինչև բարձրագոյն, որպէսզի իր ընդոժին շնորհները առաւելագոյնս դրսեւորուին: Նկարիչը պէտք է մատիտ ու վրձին բռնել սորվի, գրողը պէտք է լեզուի տիրապետէ որ կարենայ իր մտքերը դրսևորել, երաժիշտը պէտք է երաժշտանոց յաճախէ, տաղտկալից դասերէ անցնի, որպէսզի կարենայ ոչ ամպայման համանուագ, այլ առնուազն մեղեղի մը մարդավարի հեղինակել:

Որպէսզի մեր նոր սերունդը կարենայ արդարացնել մեր կողմէ իր վրայ դրուած յոյսերը, անոր պէտք է տալ այդ նուագագոյնը, պէտք է զայն նախապատրաստել ստանձնելու անցեալէն եկած դրօշը և զայն բարձր պահած հասցնելու գալիք սերունդներուն որպէս անգին աւանդ: Պէտք է ան ինքզինք զգայ տէրը այդ ժառանգութեան, անվիճելի տէրը, որպէսզի պատրաստ ըլլայ զայն ոչ միայն պահպանելու, այլ նաև զարգացնելու և աւելի բարոք վիճակով փոխանցելու իրեն յաջորդողներուն: Դաժան պահանջ է, որ կը դնենք յաջորդ սերունդին վրայ, հոսանքն ի վեր թիավարելու պահանջ է, անշնորհակալ սև աշխատանքի պահանջ է և եթէ իրեն չտանք իրաւատիրութեան գիտակցութիւնը, տանտիրոջ իրաւունքը, դժուար է զայն բերել և մեր շուրջ համախմբել: Ազգային սահմանադրութիւնը օրին ճիշտ այդ ուղղութեամբ է որ յեղափոխեց մեր հաւաքական կեանքը, հայ անհատը բարձրացուց «ազգայինի» աստիճանին և կարելի դարձուց նաև Եղեռնէն ետք տարապիտ հայութեան վերակազմակերպումը առանց որևէ «պետական» հանգամանքներու:


Ընդհանրապէս, նոր սերունդին ուղղութեամբ մեր աշխատանքները կը սահմանափակուին «հայապահպանում» տարտամ և կրաւորական յղացքին շուրջ նոյնքան տարտամ ծրագիրներ, աւելի ճիշտ բաղձանքներ հիստելով: Երբեմն մէկ աստիճան աւելի կը զարգացնենք այդ աշխատանքները և անունը կը դնենք «հայեցի կրթութիւն», «հայեցի դաստիարակութիւն» և մասամբ նորին: Սակայն այդ աշխատանքները ցարդ հայերէն լեզուի և հայոց պատմութեան ուսուցման շրջանակներէն դուրս չեն եկած. չենք նախագծած և գործադրած «ազգային կրթութիւն» կոչուած ծրագրեր, որոնց շրջանաւարտը պիտի ըլլայ Ազգային սահմանադրութեան սահմանած «ազգայինը» իր ազգային ժառանգութեան տէր հայ անհատը, որ քաջածանօթ է մեր համայնքային կառոյցներու ժողովրդավար էութեան, գիտէ հաւաքական աշխատանքի նրբութիւնները, շահագրգռուած է մեր հաւաքական կեանքի ամեն մանրամասնութիւններով և նախանձախնդիր է անոնց բարելաման և յառաջդիմութեան: Մեր իրերայաջորդ սերունդներուն դժբախտաբար չենք բաշխած այս գիտելիքները: Հազուագիտ երևոյթ չէ մեր կառոյցներուն մէջ հանդիպիլ ոգի ի բոին աշխատող անհատներու, որոնք այդ կառոյցներու տարրական կանոններէն տեղեակ անգամ չեն,— օրինակ մարմնի

և յանձնախումբի՝ ընտրեալի և նշանակեալի պատասխանատուութիւններու տարբերութիւններէն,— և այդ անտեղեակութեան պատճառով անտեղի վիճաբանութիւններու ու սրտնեղութիւններու դէմ-յանդիման կը գտնուին ու յաճախ հիասթափուած կը հեռանան:

Նոր սերունդին նախ և առաջ պէտք է տալ ազգային կրթութիւն, ճիշտ այնպէս, ինչպէս որոշ երկիրներու մէջ դպրոցական աշակերտներուն կը տրուի քաղաքացիական կրթութիւն, ուր անոնք կը սերտեն այրուբները իրենց ապրելիք միջավայրի հաւաքական կանոններուն: Հայեցի կրթութիւնը պէտք է անպայման ներառէ այս առարկան որպէս իր գլխատր նիւթերէն մին՝ հայերէնի և հայոց պատմութեան կողքին կամ նոյնիսկ անոնցմէ ալ վեր: Ազգային մը կրնայ լաւ հայերէն չիմանալ, կրնայ Տիգրան Մեծի կնոջ անունը չիմանալ, սակայն պարտաւոր է իմանալ իր համայնքային կառոյցներու ալֆան և օմեղան, պարտաւոր է իմանալ իր իրաւունքներն ու պարտաւորութիւնները, որպէսզի համայնքին մէջ գործէ որպէս լիարժէք իրաւատէր, որպէս յանձնատու ազգային: Այլապէս դուրս չենք գար հովիտի և հօտի հոգեբանութենէն, և մեր համայնքները զուրկ կը մնան յանձնատու ազգայիններու համախմբումով առաջացող ուժականութենէն:

Ի դէպ, այս մատնանշումները միայն Սփիւռքին յատուկ չեն. նոյն խնդիրները, երբեմն աւելի սուր դրուածքով, ունինք նաև հայրենաքնակ հայութեան մօտ: Հոն ևս ամեն օր կը տեսնենք թէ յանձնատու ազգայինի բացակայութիւնը ինչ աւերներ կը գործէ:

Անցնող տարիներուն բազմիցս անդրադարձած եմ կազմակերպութեան ձևին, նոյնիսկ առաջարկի սևագիր մըն ալ հրապարակած եմ (տես՝ «Համահայկական տեսլականի տագնապը», «Դրօշակ», յունիս և սեպտեմբեր 2020), հետևաբար կրկնութիւն պիտի ըլլար նոյն առաջարկը անգամ մը ևս կրկնել: ■



Անդրադարձումներ

Վազրիկ Բազիլ

Համաձայն եմ յօդուածագիրների բազմաթիւ գաղափարների հետ: Այստաճանաչման մէջ տեսակէտներ իրար հետ են համընկնում:

Ստորև կեդրոնանում եմ միայն մի քանի գաղափարների վրայ, առանց հանգամանօրէն անդրադառնալու միւս հարցերին ու հարցումներին:

Հարցեր

Արցախեան պատերազմի պարտութեան պատճառը նախ և առաջ ոչ թէ գէնքի ու զինտրի պակասն էր, այլ ներկայի իշխանութեան գաղափարախօսութիւնը, որը նմանում է սովետական գրքային գաղափարաբանութեան:

Այս գաղափարաբանութիւնները կեղծ արևմտեան ընդօրինակութիւններ են՝ առակ թերևս ստորակայութեան բարդոյթներին յագուրդ տալու քան պետական ինքնուրոյն արահետներ բացելու: Ընդօրինակելը դիւրին է, հետևորդ լինելը՝ նմանապէս, ինքնատիպ լինելը դժուար է և առաջնորդ լինելը՝ անելի: Ինչպէս Armani կամ Prada են հագնում, նոյնպէս էլ գաղափարներ են իրացում՝ առանց հիմքի ու խորքի: Յարակարծութիւնը այն է, որ նման գաղափարներ ոչ մէկին Արևմուտքին չեն մօտեցնում, այլ ընդհակառակը՝ հեռացնում են, որովհետև արդի արևմուտքի հիմքը ինքնուրոյնութիւնն է, հեղինակութիւններին չհետևելը: Արևմուտքից ընդօրինակել նշանակում է հեռանալ արևմուտքից: Ձև թափելը սխալ է, ձև ունենալը՝ ճիշտ: Ահա՛ ողբերգութիւնը:

Հերքուելու փոխարէն, դժբախտաբար կրկին հաստատուեց Հրանտ Մաթևոսեանի սրտաճնկիկ եզրակացութիւնը՝ «Ո՛վ է հայը: Չի ընկնում մինչև յատակը և չի բարձրանում ամենավերևը: Այդ մարդն է հայը» (Մաթևոսեան Հրանտ, (2005), Ես ես եմ, Երևան, էջ՝ 7):

Հետևանքը: Հայաստանում հանդիպել եմ մարդկանց, որոնք յաղթութեան լուծումներ փնտրելու փոխարէն, որոնում են պարտութեան արդարացումներ:

Սա «յատակին» մօտենալու սահմոկեցուցիչ հակումն է:

Յօդուածագիրները շեշտում են իրաւ խնդիրներ՝ նոր սերունդ, կրթութիւն, կազմակերպութիւն, ծրագիր, նիւթական հարցեր, պատում, օրակարգի ձևաորում, ճանաչողական բաղաձայնութիւն, Սփիւռք-Հայաստան յարաբերութիւնների թարմացում և այլն:

Լուծումներ

Պատումի հարցը, մանաւանդ «ներքնածին պատում»-ինը էական է և խորացումը՝ անհրաժեշտ:

Արդե՞ծք նախընտրելի է, եթէ Հայաստանը զբաղուի Սփիւռքով: Ըստ իս՝ ոչ: Միջանտութիւն նշանակում է քաղաքական անտեղի ազդեցութիւն: Սփիւռքը պէտք չէ Հայաստանի կառավարութիւնների քմահաճոյքի զոհը դառնայ, այլ պէտք է իր ինքնուրոյնութիւնը պահի Հայաստանի պետութեան հզօրացման նպաստելու համար:

«Նոր սերունդի» կրթութեան և նոր սերունդին «փոխանցումներ» կատարելը իմացական, զգացական և զգայական հարց է: Ո՛չ միայն իմացական:

Նոր սերունդի մասին խօսել չի նշանակում միայն երիտասարդների մասին խօսել: Հայկականի հետ զօդումը պէտք է սկսի մանկութիւնից: Մանուկները և իրենց ընտանիքները էական նշանակութիւն ունեն: Առանց ընտանիքի և մանուկի անգիտակիցի մասնակցութեան չկայ յաջողութիւն:

«Դէպի Երկիր» լուծումը պիտի վերաբերի արտասահմանցի հայերին, բայց ոչ սփիւռքահայերին: Գաղութներն ու համայնքները չպէտք է թափուրանան: Տուժողը կրկին Սփիւռքն է և արևմտահայութիւնն է:

Սփիւռքի թուլացումը Հայաստանի հզօրացումը չէ: Երկուսի միջև հասասարակչութիւնը պահելը նպաստում է երկուսին: Մի-ա-միտ լինելը միամտութիւն է:

Խօսում է «հաւաքական ոյժի» կամ «խորհրդարաններ»-ի մասին: Անատարկելի լաւ գաղափարներ են: Այդուամենայնիւ ես անելի կողմակից եմ ծրագրային գործակցութեան քան կառուցային միաւորման: Անուագն Երուպայի մեր երկար տարիների նկրտումները ցոյց են տուել (ամենից վերջին փորձը՝ Բրիքսեւում), որ մենք դրամ, ժամ և ջիղ ենք յատկացնում ամուլ և տնականօրէն ամուլ մի գաղափարի վրայ: Պետական կառոյցները սփիւռքներին յարիր չեն: Մի ծրագրի շուրջ համախմբուելը և բովանդակային աշխատանքի լծուելը անելի օգտակար է քան կառուցային հարցերով զբաղուելը: Սփիւռքը պետութիւնն է: Սփիւռքեան կառոյցի խորհրդանիշը ցանցն է, ոչ թէ բուրգը:

Յուսալի է, որ այսքան անուշաբոյր խօսքերից և ձախողած փորձերից յետոյ ոչ մէկ (անուագն ինծի ծանօթ) գիտական հետազօտութիւն կայ, որ վերլուծի կազմակերպչական ձախողութիւնների պատճառները: Բնագործ միայն բաւարար չէ:

Մէկ խօսք մտաւորականութեան մասին: Մեր մշակութային հիմնական տկարութիւններից մէկը այն է, որ մենք մեր մշակոյթը չենք մտաւորականացրել: Մեր դասական մշակոյթը պէտք է ձերբազատել բանասիրութեան ճիւղից: Բանասիրութիւնը ունի իր անկրկնելի դերը, սակայն բաւարար չէ: Մենք մեր մշակոյթը պէտք է կրկին իրացնենք՝ այսպէս կոչուած «հին»-ի մէջ «նոր»-ը տեսնելով, «նոր»-ի մէջ «հին»-ը, «դասական»-ի մէջ «արդիական»-ը և «արդիական»-ի մէջ՝ «դասական»-ը: Սա նաև հուժկու միջոց է չէզոքացնելու համար Հայաստանում վխտացող սին գաղափարախօսութիւնները:

Վերջակէտից առաջ՝

- Ով հոգի ունի, հոգս ունի:
- Ով հոգս ունի, մտահոգ է:
- Ով մտահոգ է, հոգատար է:
- Ով հոգատար է, նախահոգ քայլերի է դիմում
- կանխելու համար վտանգն ու արհաւիրքը:

Հայերէտում հոգալ նշանակում է խոկալ: Մտածելը հոգալ է և հոգալը՝ մտածել: Ուրեմն՝ ողևորուած մտածենք ու հոգանք: ■

Ամփոփելու համար

Վրէժ-Արմէն

Ճարտարապետ, գրող, հրապարակագիր, «Հորիզոն»ի ու «Հորիզոն գրական»ի աագ խմբագիր

Ինչ կրնանք եզրակացնել կյոռ-սեղանի մեր այս անդրանիկ փորձէն:

Առաջին հերթին՝ Սփիւռքի կազմակերպումը կամ վերակազմակերպումը պէտք է միշտ մնայ մեր օրակարգին վրայ:

Երկրորդ հերթին՝ մենք պարտաւոր ենք տևաբար քննարկման նիւթ դարձնել հայ կեանքի ու զայն լաւագոյնս վարելու մեր փորձառութիւնը, ասանդութիւններն ու ներկայ մօտեցումները՝ կարենալու համար քայլ պահել ազգի ժամանակակից իրավիճակին հետ ու հասնելու համար անոր կարիքներուն:

Մեր գրուցակիցները մեծ մասամբ դաշնակցական ընկերներ են, իսկ անկուսակցականներն ալ հաւանաբար անձանօթ ըլլալու չեն մեր կուսակցութեան ըլլայ նպատակներուն, ըլլայ գործելակերպին: Կրնանք անվարան ըսել, որ բոլորն ալ՝ ոմանք առաւել, ոմանք նուազ, դժգոհ են ներկայ իրավիճակէն. Նոյնիսկ կայ մտավախութիւն, որ իբր հաւաքականութիւն անկարող կրնանք ըլլալ բան մը բարեփոխելու: Այդ սակայն արդէն դուրս կու գայ անհատական տեսակէտներու ոլորտէն ու կը դառնայ մեր՝ նոյն այդ հաւաքականութեան պարտաւորութիւնը, որուն համար ալ, անկասկած՝ այս կյոռ-սեղանի նախաձեռնութիւնը:

Այստեղ յստակացնենք. մենք կրնանք խօսիլ մեր կուսակցութեան մասին և արտայայտուած յաճախ արդար, երբեմն ալ գուցէ անարդար դիտողութիւնները կրնանք ուղղուած նկատել նախ և առաջ մեզի, թէն ոչ ոք յականէ-անուանէ Դաշնակցութեան կ'ակնարկէ, սակայն համոզուած ենք, որ այդ դիտողութիւնները կ'առնչուին նաև բոլորին, ու մեր ցանկութիւնն է, որ բոլորն ալ՝ այլ կուսակցութիւններ, միութիւններ թէ հաստատութիւններ արտայայտուին, հակազդեն այս



կյոռ-սեղանին, շարունակուի բազմաձայն այս գրոյցը և արդիւնքի հասնի, ունենայ բարեբար իր հետևանքները:

Ինչ կ'ըսեն մեր գրուցակիցները:

Սփիւռքը բազմաշերտ է ու բազմաբնոյթ: Ան կը բաղկանայ իրարմէ տարբեր ու հետզհետէ ատլի այլազանտող մասերէ՝ հետևանք մեր բնական երկիրներու ընկերային ու այլ պայմաններուն. տարբեր՝ իրենց մեծութեամբ, հնարաւորութիւններով: Նաև ներկայիս կան երկու հակադիր զանգուածներ՝ Յեղասպանութենէ վերապրածներու և անոնց շտապիկներուն կերտած մեզի ծանօթ «Սփիւռքը», և Հայաստանէն արտագաղթածներու արտերկիրը: Մեծ մարտահրաւեր մը կը հանդիսանայ այս երկուքին մերձեցումն ու երկրորդին համարկումը ազգային կեանքին:

Այս իրականութեան մէջ Սփիւռքի ինքնութեան մը պահպանումը, եթէ կարելի է նման ինքնութիւն մը երևակայել, նոյնպէս կարևոր մարտահրաւեր մըն է մեր կազմակերպութիւններուն համար:

Սփիւռքի զարգացումը կը կարօտի ամենէն առաջ սոյն իրողութեանց գիտակցումին, ապա կառավարման նոր ըմբռնումներու՝ ըլլայ քաղաքական, ըլլայ տնտեսական, ըլլայ կրթական-մշակութային մարզերէն ներս, կը կարօտի մանաւանդ մեր մարդկային թէ նիւթական ներուժը ըստ այնմ զարգացնելու և օգտագործելու նոր ռազմավարութեանց:

Կ'առաջարկուի, ի միջի այլոց՝

- Ինքնութիւնը հիմնուած ըլլայ մեր հինէն եկած գրական, պատմական ու մշակութային երկերու բովանդակութեան, մեկնութեան և փոխանցման վրայ:

- Հայկական ինքնութիւնը նաև ամրակայել մանուկներուն մէջ՝ հինգ զգայարաններու իսկ ճամբով մտերմացնելով զիրենք հայ մշակոյթին հետ:

- Ուսումնական ծրագրերուն մէջ ներառել ազգային կրթութիւնը:

- Աշխատիլ իրաքանչիւր հայ անհատի ներուժը



միատրել ընդհանուրին հետ:

- Ուժերու համախմբումը կ'ենթադրէ գաղափար, օրակարգ, համոզում, փոխանցում, կարողութիւն, հետևողականութիւն:

- Օգտուիլ Սփիւռքի մասնագիտական ներուժէն, թէ՛ զայն մասնակից դարձնելով մեր կազմակերպութիւններու գործելակերպն ու գործունէութիւնը արդիացնելու և թէ՛ զարկ տալու Հայրենիքի յառաջդիմութեան:

- Լսել նոր սերունդը ինչ լուծումներ կ'առաջադրէ՝ իր տեսլականներուն համապատասխան:

- Նպաստել ծնունդներու աճին:

- Մերնդափոխութիւնը նկատի առնել կազմակերպական կառոյցներու հիմքին իսկ մէջ:

- Կրկնակի քաղաքականացնել հայկական կազմակերպութիւնները:

- Վերահմաստատրել Սփիւռքի գոյութիւնը արդիացանելով համահայկական ռազմավարական պատումը կամ առասպելը՝ Հայաստանի անվտանգութիւնն ու Սփիւռքի հզօրացումը նկատի առնելով:

- Սորվիլ կատարուած աշխատանքը գնահատել իր արդիւնքէն դատելով:

- Թէև հայրենի հողը իր հոգեբանական անուրանալի դերը կրնայ ունենալ, ինչպէս ունեցած է դարերէ ի վեր, բայց հայրենի ազգապահպան պետութեան մը բացակայութեան, Սփիւռքը պարտաւոր է իր զարգացումը անկախ պահել, հաւատարիմ՝ նոյնպէս դարաւոր իր ինքնապահպանման ամրաններուն, ամրակայել պատմական յիշողութիւնը՝ առանց անտեսելու

Հայրենիքի հետ գործակցելու հնարաւորութիւնները:

- Մշակել արևմտահայ մշակոյթը խթանելու ծրագիր, շեշտել արևմտահայերէնի կարևորութիւնը, զայն երկրորդ պետական լեզու հռչակել տալ Հայաստանի ազգային իշխանութիւններուն, օգնել, որ հայրենադարձ արևմտահայերը շարունակեն իբրև այդպիսին ապրիլ հոն:

- Սփիւռքի զարգացումը թէ՛ ընդհանուր առմամբ հայաշխարհի՛ զարգացումը միայն ընդհանրական համագործակցութեամբ կրնայ ընթանալ, իսկ համասփիւռքեան վերին մարմին մը, եթէ կարելի ըլլայ կեանքի կոչել, կազմուած ըլլալու է բոլորին ատակ ներկայացուցիչներէն:

Յաջորդ քայլերը

Սոյն կլոր-սեղանին մասնակիցները, իրենց դիտողութիւններուն կողքին, նշած են վերոյիշեալ առաջարկները առանց մխրճուելու անոնց մանրամասնութիւններուն մէջ: Մենք պիտի խրախուսենք զանոնք, որ անոնք և ասկէ ետք արդայայտողները անելի յստակ բանաձևումներով զարգացնեն իրենց մտքերը, որոնք հետզհետէ կրնան դրուիլ պատկան մարմիններու և ժողովներու օրակարգերուն վրայ, կրնան և ծնունդ տալ նոր նախաձեռնութիւններու:

Այլապէս ի գուր փորձ մը կը մնայ մեր այս ճիգը: Աշխատինք, որ իրապէս արդիւնատէտ ըլլայ ան: ■





Պ Ա Տ Չ Ա Մ

**Ն.Ս.Օ.Տ. Տ. ԱՐԱՄ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ**

**ՍՓԻՒՔՆ ԱՅՍՕՐ ՄՏԱՅՈՒԹԻՒՆՆԵՐ
ՈՒ ՄԱՐՏԱՅՐԱՒԵՐՆԵՐ
(Հատուածաբար)**

Յգօր Հայաստան-հօգր Սփիւռք տեսլականը պէտք է դառնայ ազգային ռազմավարութեան հիմքն ու նպատակակէտը: Առաւել, քան երբէք Հայաստան եւ Սփիւռք իրարու կարիքն ունին: Հետեւաբար Սփիւռք-Հայաստան գործակցութիւնը պէտք է մնայ թէ՛ Հայաստանի եւ թէ՛ Սփիւռքի կեանքին կենսական տարածքներէն մէկը: Ըիշդ չէ՛ Սփիւռքը նկատել Հայաստանի կցորդ, ո՛չ ալ Հայաստանէն անջատ ինքնակեդրոն ու ինքնավախճան գոյութիւն: Ըիշդ չէ՛ նաեւ Սփիւռքը նկատել սոսկ Հայաստանի մէջ բարեսիրական ծրագիրներու սատարող ու տնտեսական ծրագիրներ մշակող գաղութներու ամբողջութիւն: Սփիւռքն անբաժան ու անբաժանելի մասը կը կազմէ նոյն եւ մէկ հայութեան: Արդարեւ, Հայաստանը հայրենասիրութիւն առթող հայ-րենիք ըլլալէ անդին՝ ցարդ չկրցաւ դառնալ վստահութիւն ու յոյս ներշնչող եւ աշխարհացոր հայութիւնն իր շուրջ համախմբող հաւաքական տուն: Վերջին տասնամեակին շէշտը դրուեցաւ տնտեսական ներդրումներու եւ թուրիստական այցելութիւններու վրայ: Յատկապէս Հայաստանի ներքաղաքական խնդիրներն ու ընկերա-տնտեսական ծրագիրներուն օժանդակութիւնը կարեւոր տեղ գրաւեցին սփիւռքահայութեան կեանքի մայր էջին վրայ՝ յաճախ լուսանցքի մէջ ձգելով Սփիւռքին առաջնահերթութիւնները: Հայ ժողովուրդի երկու բեւեռներուն միջեւ գործակցութիւնը պէտք է դառնայ համապարփակ, ծրագրուած եւ հետեւողական՝ հիմնուած փոխադարձ վստահութեան վրայ: Սփիւռքի վերակենսաւորման մէջ էական է դերը Հայաստանին, մասնաւորաբար մշակութային ու կրթական մարզերուն մէջ: Միւս կողմէն՝ Հայաստան-Սփիւռք գործակցութեան շրջագծէն ներս անհրաժեշտ կը նկատենք Հայաստանի կառավարման, ինչպէս նաեւ համահայկական խնդիրներու ու ծրագիրներու քննարկման մէջ Սփիւռքի գործօն մասնակցութիւնը:

**ԴԵՊԻ ՍՓԻՒՔԻ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ ՄԱՐԶԵՐ
ԵՒ ԳՈՐԾՆԵԱՍՑ**

Մեր մատնանշած մտահոգութիւններն ու մարտահրաւերները կը կարօտին խոր, իրատես ու համապարփակ քննարկման: Աւելի քան երեսուն տարի Հայաստանը եւ Արցախը դարձան Սփիւռքի կեանքին կիզակէտը: Անկասկած, մեր ազգին այս երկու բեւեռները՝ իրենց խնդիրներով ու իրամայականներով, Սփիւռքին համար պէտք է միշտ մնան առաջնահերթութիւն: Սփիւռքը ինքնավախճան իրականութիւն մը չէ. ան իր տեսլականը պէտք է միշտ սեւեռած պահէ Հայաստանի ուղղութեամբ, որ ողնասիւնը կը կազմէ հայ ազգի ներկային ու երաշխիքը՝ անոր ապագային: Այս խոր գիտակցութեամբ Սփիւռքը կոչուած է ինքզինք վերակազմակերպելու: Այսօր մեր ազգին մեծա-մասնութիւնը կ'ապրի Սփիւռքի մէջ: Հետեւաբար ժամանակն է, որ մեր ազգի պատմութեան այս հանգրուանին ինքնակազմակերպումը դառնայ Սփիւռքին առաջնահերթութիւնը:

Կ'ուզենք կարեւորութեամբ ընդգծել, թէ այլեւս չենք կրնար հիւժած կառոյցներով, գնաւորած մտածողութեամբ, կաղապարուած մօտեցումներով, հնամաշ օրակարգերով Սփիւռքը վերակազմակերպել ու վերակենսաւորել: Սփիւռքն իր կառոյցներով ու օրակարգով, իր կանոնադրութիւններով ու գործելակերպերով պէտք է դառնայ համահունչ նոր ժամանակներուն ու մարտահրաւերներուն: Ինչպէս կարելի է ձեռնարկել այս հսկայ աշխատանքին: Սփիւռքին պարզած ներկայ գոյավիճակին իրապաշտ արժեւորումը եւ ապա ծրագրումը պէտք է դառնան մեկնակէտը ու մղիչ ուժը մեր աշխատանքներուն: Այս ուղղութեամբ առանցքային է դերը գաղութին մէջ գործող բոլոր կազմակերպութիւններուն ու միութիւններուն, ինչպէս նաեւ զանազան մարզերու մասնագէտ ու փորձառու մտաւորականներուն:

Հաւատարիմ իր անցեալին՝ հայ ժողովուրդը կոչուած է ինքզինք յարատեւօրէն վերարժեւորման ու վերանորոգման ենթարկելու՝ համահունչ փոխուող ժամանակներուն, պայմաններուն ու մարտա-հրաւերներուն: Այն տեսլականով ու յանձնառութեամբ Սփիւռքը պէտք է վերակազմակերպել ու վերաշնչաւորել ինքզինք: Սփիւռքն իր ներկայ վիճակին թողուլ, կը նշանակէ անոր ինքնամաշումը արագացնել: Սփիւռքի վերակազմակերպումը անոր հօգօրացումն է, իսկ Սփիւռքի հօգօրացումը Հայաստանին ու Արցախին հօգօրացումն է, եւ սա համազ-գային առաջնահերթութիւնն է ու մարտահրաւեր: Հարկ է անյապաղ լծուիլ աշխատանքի

:

**ԱՐԱՄ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍ
ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ
1 Յունուար, 2022
Անթիլիաս, Լիբանան**

